

ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

# ԱՊԱԳԱ ԲԺԻՇԿ

2013 ԹՎԱԿԱՆ N 9-10 (1285-1286) ՀՈՒՆԻՍ



ՀԱՄԱՌԼԿ ԹՈՊԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ՀՀ նախագահի շնորհավորանքը ակադեմիկոս Վ. Պ. Հակոբյանին՝ հորեյլանի առիթով

Հանրապետության տոնի առիթով ՀՀ գիտության վաստակավոր գործիչ կոչում է շնորհվել բժիշկ-դեղագետ, գիտնական, հանրապետության դեղաբանության դպրոցի հիմնադիր, մանկավարժ, հասարակական գործիչ, 1987-2006 թթ. ԵՊԲՀ ղեկավար, այժմ՝ ԵՊԲՀ ղեկավարի խորհրդակցական, ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, միջազգային ակադեմիաների և գիտական ընկերությունների պատվավոր անդամ, ակադեմիկոս Վիլեն Պարույրի Հակոբյանին:

Նախագահ Սերժ Սարգսյանը շնորհավորական ուղերձ է հղել Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս Վիլեն Հակոբյանին՝ ծննդյան 75-րդ տարեդարձի առթիվ՝ վաստակաշատ գիտնականին մաղթելով առողջություն և հետագա արգասաբեր գործունեություն:

«Անուրանալի է Ձեր ներդրած ավանդը հայրենի բժշկագիտության և մանկավարժության ասպարեզներում, որն իր արժանի գնահատականն է ստացել ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում»,- ասված է ՀՀ նախագահի շնորհավորական ուղերձում:

## ԵՊԲՀ գիտական խորհրդի հանդիսավոր նիստը

Ակադեմիկոս Վիլեն Պարույրի Հակոբյանի 75-ամյա հորեյլանին նվիրված գիտական խորհրդի հանդիսավոր նիստին, մասնակցում էին նաև՝ հյուրեր, այդ թվում՝ ՀՀ առողջապահության նախարար Դ. Դումանյանը, ՀՀ ԳԱԱ նախագահ Ռ. Մարտիրոսյանը, ազգային ժողովի պատգամավորներ և այլ պաշտոնատար անձինք:

Ծննդյան 75-ամյակի, հայրենի բժշկագիտության, մանկավարժության և առողջապահության ասպարեզներում, ինչպես նաև բժշկական համալսարանի կայացման ու միջազգայնացման գործում ունեցած բազմամյա արգասավոր և նշանակալի ավանդի կապակցությամբ ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը հորեյլարին պարգևատրեց նախարարության ոսկե մեդալով, իսկ ԵՊԲՀ ղեկավար Ս. Նարինյանը երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի «Պատվո առաջին աստիճանի շքանշանով»:

Իր շնորհավորական խոսքում ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը ասաց. «Մեր կյանքում քիչ են մարդիկ, ում հետ հանդիպումը լինում է ճակատագրական: Ուզում եմ խոստովանել, որ ես այն բազմաթիվ մարդկանցից եմ, ում կյանքում Վիլեն Հակոբյանը մեծ դեր և նշանակություն է ունեցել»: Սիրելի ուսուցչին պարգևատրելով ՀՀ կրթության և գիտության նախարարության ոսկե մեդալով՝ նախարարը կենսատակ-կենսաբանական տեղում. «Կարծում եմ շատերը կնախան-

ծեն ինձ այս պահին, քանի որ քերին է հնարավորություն տրվում պարգևատրելու իրենց ուսուցիչներին»:

Վիլեն Հակոբյանի հանդեպ ունեցած իր վերաբերմունքի և անձնական տպավորությունների մասին խոսեց և նրան հորեյլանի կապակցությամբ շնորհավորեց նաև ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը. «Մենք միաժամանակ ղեկավարում էինք հանրապետության առաջատար բուհերից երկուսը, և ղեկավարների խորհուրդների ընթացքում ինձ հիացնում էին նրա կազմակերպչական ունակությունները և հետաքրքիր մոտեցումները գիտությանը և կրթությանը: Եվ տարիներ հետո, երբ մենք երկուսս էլ այլևս ղեկավարներ չէինք, իսկ ես արդեն ղեկավարում էի Գիտությունների ազգային ակադեմիան, հաշվի առնելով նրա նման մարդու և գիտնականի փորձը, նրան հրավիրեցի ԳԱԱ, որտեղ նա այժմ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարն է»:

Մեծարման ընթացքում ներկայացվեց նաև Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունը և շնորհավորանքը Վիլեն Հակոբյանին:

Իր խոսքում ԵՊԲՀ ղեկավար Միքայել Նարինյանը նշեց. «Ես հպարտ և երջանիկ եմ, որ Վիլեն Հակոբյանն այսօր մեզ հետ է և աջակցում է մեզ խնդիրների լուծման հարցերում՝ որպես ղեկավարի խորհրդակցական: Սիրելի՛ ուսուցիչ, հավաստիացնում եմ, որ այստեղ բոլորը սիրում և հարգում են Ձեզ և շնորհակալ են այն ամենի հա-



մար, ինչ արել ու շարունակում եք անել՝ ի նպաստ մեր բուհի և առողջապահական ողջ համակարգի»:

Հանդիսավոր նիստում միջոցառումը իր շնորհակալական խոսքով եզրափակեց հորեյլարը. «Տարիներ շարունակ այս ամբիոնից ելույթներ են ունեցել և միշտ հստակ ինացել են՝ ինչ պետք է ասել և՛ ինչպես, բայց այսօր չգիտեմ որտեղից սկսել և ինչ ասել: Ուզում եմ իմ խոր գոհունակությունն ու շնորհակալությունը հայտնել այն բոլոր մարդկանց, ովքեր հանդիպել են իմ կյանքի ճանապարհին, բոլոր նրանց, ովքեր օգնել են իմ ճակատագրի ձևավորման և ամբողջ կյանքի ընթացքում: Բոլորիդ սրտանց հաջողություններ են մաղթում, Աստված Ձեզ պահպան...»:



# Գիտական խորհրդի հերթական նիստում

ԵՊԲՀ կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնի ղեկավար Լ. Ռ. Ավետիսյանի՝ «ԵՊԲՀ, կրթության որակի հիմնահարցերը» թեմայով զեկուցումը համալսարանի գիտական խորհուրդը լսելով և քննարկելով **որոշում է՝**

1. համալսարանի կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնի աշխատանքները գնահատել բավարար:

2. Հանձնարարել կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնին (ղեկավար, պրոֆեսոր Լ. Ռ. Ավետիսյան),

2.1. հաստատել համալսարանի որակի գնահատման և ապահովման կենտրոնի քաղաքականությունը,

2.2. համալսարանի տարեկան գործունեության գնահատման համար մինչև 2013 թ. հոկտեմբեր ամիսը մշակել և գիտական խորհրդի քննարկմանը ներկայացնել անհրաժեշտ ցուցանիշերի լրակազմը,

2.3. մինչև 2014 թ. մայիս ամիսը, ըստ տարակարգերի, մշակել դասախոսների որակավորման բալային սանդղակ:

3. Հանձնարարել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին (պրոֆեսոր Ս.Ա.Ավետիսյան), ուսումնամեթոդական վարչության պետին (պրոֆեսոր Ա. Ս. Տեր-Մարկոսյան), կրթական ծրագրերի բաժնի պետին (դոցենտ Ա.վ. Բայկով) և ցիկլային մեթոդական հանձնաժողովների նախագահներին՝

3.1. մինչև 2014 թ. հունիսի 1-ը վերանայել ինտեգրացված մոդելով սովորողների կրթական ծրագրերը (բոլոր առարկայական ծրագրերը), դրանց հիմքում դնելով աշխատաշուկայի պահանջարկից բխող վերջնարդյունքները և որակի ապահովման ազգային շրջանակը (ՈԱՇ-ը),

3.2. շարունակել վերանայել կրեդիտների բաշխման սկզբունքը՝ հիմքում դնելով ուսանողից պահանջվող աշխատաժամանակի ծավալը,

3.3. մինչև 2013 թ. դեկտեմբեր ամիսն ավարտել ամբիոնների և առարկաների անվանումների վերանայումը և դրանք համահունչ դարձնել եվրոպական երկրների բժշկական բուհերի համապատասխան առարկաների անվանումներին,

3.4. համապատասխան ցիկլային մեթոդական հանձնաժողովներում քննարկել նեղ մասնագիտական ամբիոններ ունենալու և պրոտոկոլային դասավանդման անցնելու հարցերը և մինչև 2013 թ. դեկտեմբեր ամիսը ներկայացնել կենտրոնական մեթոդական հանձնաժողովի քննարկմանը,

3.5. մինչև 2013 թ. նոյեմբերի 1-ը գիտական խորհրդին զեկուցել գործնական հմտությունների կենտրոնի ստեղծման ուղղությամբ տարվող աշխատանքների ընթացքի մասին:

4. Բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 20-ին լրացնել կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնի կողմից մշակված ցուցանիշերի լրակազմը և ներկայացնել կենտրոն:

5. Մինչև 2013 թ. հոկտեմբեր ամիսը պատրաստել շրջանավարտների հետ հետադարձ կապն ապահովող կայքի աշխատանքները:

6. Վերոնշյալ գործընթացներին անմիջական մասնակից դարձնել ներքին և արտաքին շահակիցներին:

7. Որոշման կատարման անդրադառնալ 2014 թ. մայիս ամսին:

8. Որոշման կատարման հսկողությունը հանձնարարել նեկտոր Ս. Զ. Նարինյանյանին:

## Հայտարարվում է 2013-14 ուստարվա մագիստրատուրայի ընդունելություն

### Հերթում

«ԱՊԱԳԱ ԲԺՇԿԻ» 2013 թվականի N 9-10 (1285-1286) թողարկման մեջ մագիստրատուրայի ընդունելության հայտարարության մեջ տեղ է գտել վրիպակ: Իրականում ընդունելությանը վերաբերող հայտարարությունը հետևյալն է՝

ԵՊԲՀ բակալավրիատի շրջանավարտների համար դիմումներն ընդունվում են 2013թ. հուլիսի 22-ից մինչև օգոստոսի 9-ը՝ համապատասխան ղեկանատներում:

Այլ բուհերի շրջանավարտների համար դիմումներն ընդունվում են 2013 թ. հուլիսի 1-ից մինչև 12-ը՝ ուսումնամեթոդական վարչությունում:

**Փորձնական համակարգչային քննության օրը՝**  
**22.07.13 թ., ժամը՝ 10:00**  
**Ընդունելության միջառարկայական համակարգչային քննության օրը՝ 25.07.13 թ., ժամը՝ 10:00**

Այս մասին առավել մանրամասն համալսարանական կայք էջում:



## Պաշտոնական ճանաչում Կալիֆորնիայի բժշկական խորհրդի կողմից

Երևանի պետական բժշկական համալսարանը ճանաչում է ձեռք բերել արտերկրի մի շարք բժշկական խորհուրդների, իսկ այժմ նաև Միացյալ Նահանգների Կալիֆորնիայի բժշկական խորհրդի կողմից: ԵՊԲՀ-ի այն շրջանավարտները, ովքեր ուսումնառության ընթացքում ուսանել են հայերենով, այսուհետև հնարավորություն կստանան դիմել Կալիֆորնիայի հետբուհական վերապատրաստման վկայական ստանալու համար:

Համալսարանը գրանցված է նաև Կալիֆորնիայի բժ-

կական խորհրդի պաշտոնական վեբ-կայքում՝ պաշտոնապես ճանաչված բժշկական հաստատությունների ցանկում, հետևյալ հասցեով՝

[http://www.mbc.ca.gov/applicant/schools\\_recognized.html](http://www.mbc.ca.gov/applicant/schools_recognized.html)

Ներկայումս համալսարանի միջազգային համագործակցության բաժինը համապատասխան աշխատանքներ է տանում Կալիֆորնիայի բժշկական խորհրդի կողմից անգլերենով և ռուսերենով դասավանդվող համալսարանական ծրագրերի ճանաչման ուղղությամբ:

## Yerevan State Medical University recognised by the Medical Board of California

Yerevan State Medical University is recognised by a number of medical boards abroad and this time it has been officially recognised by the Medical Board of California, U.S. Those graduates of YSMU having been matriculated in the academic programme conducted in Armenian are now eligible to apply for a California Postgraduate Training Authorization Letter or a California Physician's and Surgeon's Certificate.

In addition, the University is added to the list of recog-

nised medical schools on the Board's web site at [http://www.mbc.ca.gov/applicant/schools\\_recognized.html](http://www.mbc.ca.gov/applicant/schools_recognized.html)

Currently, the Department of International Cooperation of the University undertakes necessary steps to achieve the Board's recognition towards the academic programmes delivered in English and Russian.

## Ուսման վարձերն էականորեն բարձրանալու են

### Բժշկական համալսարանը միայն արտասահմանցիների համար է բարձրացնելու...



- Համատարած թանկացումները չեն շրջանցելու բուհե-  
րը: Բացատրություններ կա՞ն՝ ինչո՞ւ:

- 33 պետական բարձրագույն հաստատությունները  
շուրջ 4 տարի չեն բարձրացրել ուսման վարձերը: Շատ  
բան է թանկացել մեր երկրում, և կրթությունը թանկ հա-  
ճույք է նույնպես: 4 տարվա ընթացքում մեզ՝ բուհերի ղե-  
կավարությունների հետ միասին, հաջողվում էր զսպել  
թանկացումները, բայց այս փուլում մենք բնական ենք  
համարում, որ ուսման վարձերի վերանայման գործըն-  
թաց է ընթանում:

**Ա**յն տարածվելու է միայն այս տարի ընդունվողների  
վրա, նախորդ տարիների ընդունվածները շարու-  
նակելու են վճարել այնպես, ինչպես վճարել են:

- Իսկ վերանայման գործընթացի արդյունքում ուսման  
վարձերը շա՞տ են թանկանալու:

- 33 օրենսդրության համաձայն՝ ըստ ֆակուլտետների  
տարբերությունը լինելու է 20.000-ից 100.000 դրամ, բու-  
հերն են որոշելու իրենց ուսման վարձերը և կարող են  
ընդհանրապես նախարարության հետ չճշտել: Բնակա-  
նաբար մենք միաժամանակ պետք է լուծենք բարձրա-  
գույն կրթության մատչելիության հարցը, որովհետև սո-  
ցիալապես անապահով ընտանիքների երեխաներն ար-

դեն ստանում են մինչև 100% զեղչ, վերանայվելու է ու-  
սանողական զեղչերի համակարգը, ընդլայնվելու է պե-  
տական նպատակային օգնությունը այն ուսանողներին,  
որոնք ունեն լավ առաջադիմություն, բայց սոցիալապես  
անապահով ընտանիքներից են:

- Սպասվո՞ւմ է արդյոք դասախոսների աշխատավար-  
ձերի բարձրացում:

- Պետք է լինեն կրճատումներ և դասախոսների աշխա-  
տավարձերի բարձրացում:

- Արդյո՞ք թանկացումը կվերաբերի բոլոր բուհերին:

- Որոշումը բուհերին է, իհարկե, հիմա դժվարանում են  
ասել, թե որ բուհերը սեպտեմբեր ամսվանից կթանկաց-  
նեն ուսման վարձերը:

- Կա՞ն բուհեր որոնք արդեն համապատասխան հայտ  
են ներկայացրել:

- Այո, Երևանի պետական համալսարանը, ճարտարա-  
պետաշինարարական համալսարանը, տնտեսագիտա-  
կան համալսարանը, բժշկական համալսարանը, որը մի-  
այն արտասահմանցիների համար է բարձրացնելու:  
Ակնհայտ է այն փաստը, որ ունենք բուհերի ֆինանսա-  
կան կայունության և զարգացման, աշխատավարձերի  
բարձրացման խնդիր:

## Ուսուցողական դասախոսությունն գյուղական համայնքների ընտանեկան բժիշկների համար

Օրերս Երևանի Մ.Յերացու անվան պետական բժշկա-  
կան համալսարանի ռեկտոր, ընտանեկան բժշկության  
ամբիոնի հիմնադիր, պրոֆեսոր Մ. Ջ. Նարիմանյանն այ-  
ցելեց «Արմենակ և Աննա Թադևոսեանների» բժշկական  
կենտրոն, որտեղ կազմակերպված ակցիայի շրջանակնե-  
րում ուսուցողական դասախոսություն կարդաց Արագա-  
ծոտնի մարզի Կոչ համայնքի ընտանեկան բժիշկների  
համար:

Միքայել Նարիմանյանը խոսեց մի շարք կարևոր խն-  
դիրների մասին, ինչպիսիք են հիվանդների հավատը մե-  
րօրյա բժշկության նկատմամբ, բժշկին ու ղ դիմելիության  
բարձր մակարդակը, բարձիթողի և բարդացած դեպքերի  
տարածվածությունը, լայնամասշտաբ և հաճախ անհիմն,  
առանց բժշկի ցուցումների դեղորայքի օգտագործումը,  
ինչն էլ հաճախ բարդությունների և մահացու ելքի պատ-  
ճառ է դառնում:

Հատուկ մանրամասնությամբ քննարկվեց այնպիսի  
կարևոր կլինիկական ախտանիշ, ինչպիսին հազն է: Նա  
նշեց, որ անհրաժեշտության կա հազի տարբերակիչ ախ-  
տորոշման ալգորիթմը ներդնել ընտանեկան բժշկության  
գործում, որն էլ կնպաստի բազմաթիվ թոքային հիվան-  
դությունների վաղաժամ ախտորոշմանը, ինչով և  
կկանխվեն դրանով պայմանավորված հետագա բարդու-  
թյունները: Խոսվեց այն մասին, որ անհրաժեշտություն  
կա հիմնել հազի մասնագիտացված կլինիկաներ և կազ-  
մակերպել վերապարաստման դասընթացներ առաջնա-  
յին օղակի բժիշկների համար:

Ի դեպ՝ ակցիան շարունակական է լինելու, և մեր առա-  
ջատար մասնագետները շարունակելու են ուսուցողա-  
կան դասախոսություններ անցկացնել գյուղական հա-  
մայնքների ընտանեկան բժիշկների համար:

# Հուշատախտակ՝ Վիլեն Արմենի Աստվածատրյանի հիշատակին

Օրերս Պուլշկինի 31 հասցեում բացվեց ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, ԽՍՀՄ ԲԳԱ թղթակից անդամ, պետական մրցանակների դափնեկիր, ԵՊԲՀ երկարամյա, ռեկտոր հոսպիտալային մանկաբուժության ամբիոնի հիմնադիր-վարիչ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վիլեն Արմենի Աստվածատրյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը:

Հանդիսավոր միջոցառմանը ներկա էին բարձրաստիճան պաշտոնյաներ, ԵՊԲՀ ներկայացուցիչներ, բժշկական կենտրոնների տնօրեններ, ինչպես նաև Վիլեն Արմենի Աստվածատրյանի ընկերները, մտերիներն ու հարազատները:

Բացման արարողության ժամանակ հնչեցին Վ. Ա. Աստվածատրյանի անձը ներկայացնող ելույթներ, հիշողություններ...

Իր խոսքում ԵՊԲՀ ռեկտորի խորհրդական, ակադեմիկոս Վիլեն Հակոբյանը նշեց. «Սրտանց ողջունում են այսօրվա հանդիսավոր միջոցառման բոլոր մասնակիցներին և հյուրերին: Այսօր մենք մեր ներկայությամբ հարգում ենք

հոյակապ մարդու, մեծ գիտնականի, վաստակաշատ մանկավարժի և հրաշալի մանկաբույժի հիշատակը: Վիլեն Աստվածատրյանը եղել է ԵՊԲՀ հոսպիտալային մանկաբուժության ամբիոնի հիմնադիր-վարիչը, պրոռեկտոր, ապա՝ նաև համալսարանի ռեկտոր: Իր գիտական, բժշկական և մանկավարժական ողջ գործունեության ընթացքում բոլորը նրան ճանաչել են իբրև լավ մարդու, հմուտ գիտնական-մանկավարժի, հիանալի մասնագետի և իսկական կազմակերպչի: Իր արգասաբեր աշխատանքով նա մեծապես նպաստել է ԵՊԲՀ-ի զարգացման գործին, մեծ առաջընթացի հնարավորություն է ապահովել հատկապես երիտասարդ մասնագետների համար: Վիլեն Աստվածատրյանն այն եզակի մարդկանցից էր, ովքեր իրենց ողջ կյանքը նվիրել են առողջապահությանը, մանկավարժությանը և մեր համալսարանին: Ասում են՝ մարդը ողջ է, քանի դեռ հիշում են նրան. Վիլեն Աստվածատրյանը դեռ երկար կապրի մեր հուշերում»: Հնչած բազում ելույթներն ամփոփվեցին նրա որ-



դու երախտագիտական հղումներով, ուղղված բոլոր այն մարդկանց, ովքեր իրենց նպաստն են բերել հուշատախտակի տեղադրման գործին, ի թիվս ՀՀ առողջապահության նախարար Դերենիկ Դումանյանի և «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնի տնօրեն, պրոֆեսոր Արա Մինասյանի:

## Վիլեն Արմենի Աստվածատրյան

Ծնվել է 1933-ի մայիսի 19-ին, Երևանում: 1956-ին ավարտել է Երևանի բժշկական ինստիտուտը: 1970-74 թթ. ղեկավարել է Երևանի բժիշկների կատարելագործման ինստիտուտի մանկաբուժության, իսկ 1974-ից՝ Երևանի բժշկական ինստիտուտի մանկաբուժության թիվ 1 ամբիոնները: 1973-75 թթ. եղել է ինստիտուտի պրոռեկտոր, իսկ 1975-87 թթ.՝ ռեկտոր: 1998-ից միաժամանակ ղեկավարել է պարբերական հիվանդությունների մանկական հանրապետական կենտրոնը: Շուրջ 13 տարի Վիլեն Աստվածատրյանը ղեկավարել է Երևանի բժշկական ինստիտուտը (1975-87 թթ.), եղել է ՀՀ մանկաբույժների գիտական ընկերության նախագահ (1976-ից), մանկաբույժների համամիութենական ընկերության նախագահության անդամ (1974-91 թթ.), երեխաների և դեռահասների առողջության պահպանման ընկերակցության փոխնախագահ (1998-ից):

Անվանի գիտնականը բազմաթիվ մենագրությունների, գիտական հոդվածների և նորարարական առաջարկների հեղինակ է:

Վիլեն Աստվածատրյանն արժանացել է պետական բազմաթիվ պարգևների, այդ թվում՝ «Ժողովուրդների բարեկամության» շքանշանի և «Մխիթար Հերացի» մեդալի:

Մահացել է 2006 թվականին:

Հիշեցնենք, որ այս տարի լրացավ Վիլեն Արմենի Աստվածատրյանի 80-ամյակը:



### Լուսանկարներ՝ «ԱՊԱԳԱ ԲԺՇԿԻ» արխիվից

1. Երևանի բժշկական ինստիտուտին «Աշխատանքային կարմիր դրոշի» շքանշանով պարգևատրելու հանդիսավոր արարողությունը: Նախագահությունում նստածներից ծախից 5-րդը Վ. Ա. Աստվածատրյանն է:
2. Վ. Ա. Աստվածատրյանը մանկական բժիշկների 10-րդ համամիութենական համագումարի դահլիճում:

# Ստոնատոլոգների հայ-վրացական բինացիոնալ առաջին վեհաժողովը ԵՊԲՀ-ում

Վերջերս համալսարանում տեղի ունեցավ ստոնատոլոգների հայ-վրացական առաջին վեհաժողովը՝ նվիրված հայ-վրացական բարեկամությանը, որը կազմակերպվել էր մեր համալսարանի «Ստոնատոլոգիական կրթություն և գիտություն» ասոցիացիայի, Թբիլիսիի պետական համալսարանի, Վրաստանի ինվալանտոլոգների և Վրաստանի ստոնատոլոգների ասոցիացիաների կողմից:

ԵՊԲՀ ռեկտորի՝ պրոֆեսոր Սիքայել Նարինյանի անունից վեհաժողովի մասնակիցներին ողջունեց համալսարանի աշխատակազմի ղեկավար Գագիկ Միրիջանյանը. «Մենք բարձր ենք գնահատում ստոնատոլոգիայի՝ որպես բժշկական ինքնուրույն գիտության նշանակությունը և համոզված ենք, որ Ռուսաստանի, Ամերիկայի Միացյալ Նահանգների, Իտալիայի և Իսրայել-



խավորում եք ձեր երկրներում: Համոզված են, որ քննարկումների և բանավեճերի արդյունքները, որոնցով հարուստ կլինի վեհաժողովը, մեծ հետաքրքրություն կառաջացնեն և հիմք կհանդիսանան գիտական և կրթական համատեղ նախագծերի համար:

Հուսով են, որ նման վեհաժողովները շարունակական կլինեն, և մենք կկարողանանք հանդիպել ու քննարկել հետագա համագործակցության հնարավորությունները և ուղիները»:

Այնուհետև, Թբիլիսիի պետական համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Ալեքսանդր Քվիտաշվիլիի ողջույնի խոսքը վեհաժողովի մասնակիցներին փոխանցեց Թբիլիսիի պետական համալսարանի ստոնատոլոգիայի և դիմաձնոտային վիրաբուժության ամբիոնի վարիչ, Վրաստանի ինվալանտոլոգների ասոցիացիայի նախագահ, պրոֆեսոր Վլադիմեր Մարգվելաշվիլին. «Այսօր պատմական օր է հայ և վրացի ժողովուրդների համար: Այս վեհաժողովով շարունակվում է հայ և վրացի ստոնատոլոգների համագործակցությունը, որը հիմնված է հայ և վրացի ժողովուրդների դարավոր



լի մասնագետների մասնակցությամբ Վրաստանի և Հայաստանի ստոնատոլոգների գիտաժողովը լուրջ ներդրում կունենա ստոնատոլոգիայի այն ուղղությունների զարգացման գործում, որոնք դուք գլ-



բարեկամության վրա»:

Վեհաժողովի մասնակիցներին և հյուրերին ողջունեց նաև «Ստոնատոլոգիական կրթություն և գիտություն» ասոցիացիայի նախագահ, ԵՊԲՀ ստոնատոլոգիական ֆակուլտետի ղեկան, դոցենտ Լազար Եսայանը. «Վստահ են, որ մեր այս միջոցառումը հավասարապես ոգեշնչել է երկու կողմերի՝ ստոնատոլոգիայի ոլորտին առնչվող բարձրակարգ մասնագետներին, նոր գաղափարների ու նախաձեռնությունների առիթ հանդիսացել, որը, անտարակույս, կհանգեցնի հետաքրքիր ու նշանակալի արդյունքների:

Այս համագործակցությունը հաստատված է երկու բարեկամ-ժողովուրդների միջև, որոնց միավորում են յուրօրինակ ու հարուստ ազգային մշակույթները, ընտանեկան, բարոյահոգեբանական արժեքները: Խիստ նման են նաև մեր առողջապահական խնդիրներն ու մոտեցումները: Մենք պատրաստական ենք միմյանց փոխանցել մեր փորձը, մասնագիտական հմտությունները, նորարարական ձեռքբերումները: Ոլորտին առնչվող զեկույցներն ու դասախոսությունները այդ ամենի վառ ապացույցը կլինեն:

Հուսով են, որ մեր համագործակցությունը տևական կլինի, կտա իր արժանի պտուղները և կընդգրկի առավել լայն շրջանակներ»:

Ի դեպ՝ այս վեհաժողովը իր շարունակությունը ունեցավ Վրաստանում՝ Թբիլիսիի պետական համալսարանում:

# Ճառագայթային ախտորոշման արդի խնդիրները

Երևանի Մ.Ջերաջու անվան պետական բժշկական համալսարանում կայացավ գիտությունից դեպի պրակտիկա III ռուս-հայկական գիտագործնական գիտաժողովը՝ նվիրված ճառագայթային ախտորոշման արդի խնդիրներին: Այն կազմակերպվել էր Երևանի Մ.Ջերաջու անվան պետական բժշկական համալսարանի, ԵՊԲՀ կլինիկական ախտորոշման ամբիոնի, Մոսկվայի բժիշկ-ճառագայթաբանների միության, ՌԴ ԱՆ Եվդակիմովի անվան Մոսկվայի պետական բժշկաստոմատոլոգիական համալսարանի կլինիկական ախտորոշման ամբիոնի և ճառագայթային ախտորոշման զարգացման հիմնադրամի կողմից:

Գիտաժողովին բացման խոսք ասաց ԵՊԲՀ ռեկտոր, պրոֆեսոր Միքայել Նարիմանյանը. «Համալսարանի դեկանության, բոլոր նրանց անունից, ովքեր պատասխանատու են ճառագայթային ախտորոշման բնագավառում գիտական և կլինիկական ձեռքբերումների համար, ողջունում եմ Ձեզ և շնորհավորում բոլորիս այս կարևոր և արդիական գիտաժողովի բացման կապակցությամբ: Գիտաժողովի վերնագիրը՝ «Սիրով՝ Հայաստանին», և՛ ուրախացնող է, և՛ պարտավորեցնող: Մենք մեծ հարգանք ենք տածում դեպի ռուսական բժշկական գիտական դպրոցը, որն անցել են ներկա մասնագետներից շատերը: Հուսով եմ, որ մեր համագործակցությունը կլինի փոխշահավետ և շարունակական»: Նա նաև ընդգծեց, որ ճառագայթային ախտորոշումը բժշկական առավել տեխնիկականացված մասնագիտություն է և պետք է տեխնիկապես շատ լավ զինված լինի:

Ողջունի խոսք ասաց նաև Ռուսաստանի բժշկական գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Ալեքսանդր Վասիլևը. «Մենք շատ ուրախ ենք այստեղ գտնվելու համար, և իզուր չէ, որ գիտաժողովը վերնագրվել է «Սիրով՝

Հայաստանին», մենք այստեղ շատ ընկերներ ունենք, եղել ենք Հայաստանի տարբեր քաղաքներում, և ամենուր մեզ շատ ջերմ են ընդունել: Ուրախ ենք հատկապես մեր համագործակցության համար և նույնպես հուսով ենք, որ այն կլինի արդյունավետ և խոստումնալից»: Նա նաև շնորհակալություն հայտնեց ԵՊԲՀ ռեկտոր Միքայել Նարիմանյանին, ՀՀ առողջապահության և կրթության և գիտության նախարարություններին՝ գիտաժողովի անցկացմանը նպաստելու և աջակցելու համար:

Ողջունի խոսքերին հաջորդեցին ճառագայթային ախտորոշման բնագավառի հայ և ռուս հայտնի մասնագետների և բժիշկ-ճառագայթաբանների քննարկումները ուղրոտի արդիական խնդիրների վերաբերյալ:



## Radiological Diagnosis of Actual Problems

The third "From Science to Practice" Russian-Armenian scientific conference was held in YSMU, devoted to the radiological diagnosis of actual problems. It was held by YSMU, YSMU Department of Clinical Diagnosis, Moscow Doctor-radiologists Union, Chair of Clinical Diagnosis of Moscow State Stomatological University after Yevdakimov and by the Foundation of Radiological Diagnosis Development.

YSMU Rector, professor M. Narimanyan made a speech during the conference. "I greet you and congratulate on the opening of this very important and contemporary conference on behalf of the Administration of the University and of all those who were responsible for the scientific and clinical achievement in the sphere of Radiological Diagnosis. "With Love to Armenia" title is both amazing and obligating. We pay tribute to the Russian Scientific Medical School, which was attended by many professionals, I hope that our cooperation will be mutually beneficial and sustainable". He also


pointed out that the radiological diagnosis is technically supported medical profession and should be technically very well equipped.

Alexandre Vasilyev, the associate member of Russian Academy of Medical Science, also welcomed. "We are very happy to be here, and it's not accidental that the conference is entitled "With Love to Armenia". We have a lot of friends here, we've been to various cities of Armenia, and were warmly received everywhere. We are especially happy for our cooperation and we hope that it will be effective and sustainable". He also thanked YSMU Rector Michael Narimanyan, the Minister of Education and Science, the Minister of Health for the promotion and support in the organization of the conference.

The conference was followed by the discussions concerning the actual problems of radiological diagnosis.

Let us remind that the third "From Science to Practice" Russian-Armenian scientific conference was devoted to the issues of actual radiological problems, will last 2 days and will end on June 7.

# Դեղագործական Կենսատեխնոլոգիայի հեռանկարները Հայաստանում



**BIOTECHNOLOGY - THE FUTURE OF  
PHARMACEUTICAL LIFE**

Վերջերս ԵՊԲՀ-ի դեղերի տեխնոլոգիայի ամբիոնում տեղի ունեցավ «Կենսատեխնոլոգիայի նվաճումները դեղագործության ոլորտում» թեմայով ուսանողական գիտաժողով, որտեղ մագիստրատուրայի ուսանողները ներկայացրին դեղագործական կենսատեխնոլոգիայի նվաճումների և ապագա զարգացումների, դեղագետների և բժիշկների համար կենսատեխնոլոգիա գիտության և առարկայի կարևորության, այսօր արդեն նանոտեխնոլոգիաներով ստացվող դեղամիջոցների, ուռուցքային հիվանդությունների բուժման նոր մեթոդների մասին զեկուցումներ, ինչպես նաև խոսեցին ՀՀ-ում այդ ռեկոմբինանտ դեղամիջոցների առկայության, բացակայության և դրա հետ կապված խնդիրների մասին: Ինչպես գիտենք՝ կենսատեխնոլոգիան գիտություն է գենային, բջջային ինժեներիաների մեթոդների ստեղծման և կատարելագործման մասին, որոնք հնարավորություն են տալիս ստեղծելու գենետիկապես տրանսֆորմացված կենսաբանական օբյեկտներ՝ արտադրություններում նոր պրոդուկտների ստացման համար:

Ամբողջ աշխարհում ընդլայնվում է կենսատեխնոլոգիայի դերը դեղամիջոցների արտադրության ոլորտում՝ դուրս մղելով ավանդական տեխնոլոգիաներին՝ տալով սկզբունքորեն նոր հնարավորություններ, այդ իսկ պատճառով ավելի ու ավելի է աճում այնպիսի մասնագետների պահանջարկը, որոնք օժտված կլինեն այդ բնագավառում համապատասխան գիտելիքներով և լայնախոհությամբ: Արդեն 13 տարի է, ինչ դեղերի տեխնոլոգիայի ամբիոնում դեղագործական ֆակուլտետի ուսանողները «Դեղագործական կենսատեխնոլոգիա» առարկայի շրջանակներում ուսումնասիրում են գենային ինժեներիա-

յի եղանակներով ժամանակակից դեղամիջոցների ստացման կենսատեխնոլոգիաները, կիրառման եղանակները, ուսումնասիրում նրանց առավելություններն այլ քիմիական անալոգների համեմատությամբ և այլն:

Կենսատեխնոլոգիա առարկայի իմացությունը թույլ կտա դեղագործական ֆակուլտետում պատրաստել բարձրակարգ մասնագետներ գիտահետազոտական ինստիտուտների, արդյունաբերական արտադրությունների, ինչպես նաև դեղագործական և կենսատեխնոլոգիական արտադրությունների համար:

**Ս. ՓԱՇԱՅԱՆ**

## PERSPECTIVES OF THE PHARMACEUTICAL BIOTECHNOLOGY IN ARMENIA

On the 2nd of May at the department of drug technology of YSMU was taken place "The achievement of biotechnology in the pharmaceutical field" students conference, where magistracy students presented the achievements and future developments of Pharmaceutical Biotechnology, the importance of this science and subject for pharmacists and doctors, about the drugs having got by nanotechnology, new methods of treatment of cancer diseases, reported about new methods of treatment using recombinant drugs and the absence of this in Armenia, other related quations. As we know Biotechnology is a science of establishment and improvement of methods of genetic and cellular engineer which allow us to create genetical transformation biological objects for obtaning new products in manufacturing

The role of biotechnology of the production of drugs are expended all over the world, stemming the traditional methods giving new opportunities to the newest technology. That is why the number of new specislists in this field is going up who must have deep knowledge, well educated and well informed. It has been 13 year, that the students of the pharmaceutical faculty have studied the the modern methods ofproduction of gene engineer medicines, their application methods, study their advantages, etc.

Studing pharmaceutical biotechnology will allow to prepare highly qualified specialists at the faculty,who can apply their knowledges both in scientific researches and production of biotechnological drugs.

**M. PASHAYAN**



Լուսանկարում՝ Ս. Գ. Բեգլարյան, Կ.Ս. Սահակյան, Ս.Ս. Փաշայան, Բ.Զ. Ենոբյան, Շ. Գ. Աֆրիկյան

# ԵՊԲՀ-ում կայացավ թայվանահայկական առաջին բիզնես ֆորումի հետ համատեղ առաջին բժշկական գիտաժողովը

Օրերս համալսարանում տեղի ունեցավ թայվանահայկական առաջին բժշկական գիտաժողովը:

Գիտաժողովը կազմակերպվել էր Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի, Չինաստանի բժշկական համալսարանի, արյունաբանության և ուռուցքաբանության հայկական ասոցիացիայի, «Թայվանահայկական ալյանս» մշակութային և տնտեսական հասարակական կազմակերպության կողմից:

Գիտաժողովի մասնակիցներին և հյուրերին ԵՊԲՀ ռեկտորի անունից ողջունեց հետբուհական և շարունակական կրթության աշխատանքների գծով պրոռեկտոր, պրոֆեսոր Արմեն Համբարձումյանը: Նա հույս հայտնեց, որ առաջին անգամ անցկացվող թայվանահայկական այս գիտաժողովը՝ բիզնես ֆորումի հետ համատեղ, կլինի շարունակական և կարևոր նշանակություն կունենա երկու երկրների բժշկական, մշակութային և տնտեսական համագործակցության զարգացման համար:

ԵՊԲՀ «Սուրացան» հիվանդանոցային համալիրի քիմիաթերապիայի կլինիկայի ղեկավար, արյունաբանության և ուռուցքաբանության հայկական ասոցիացիայի նախագահ, դոցենտ Սամվել Դանիելյանը ևս ողջունեց

գիտաժողովի մասնակիցներին, պատվավոր հյուրերին հավաստիացնելով, որ այս համագործակցությունը գիտական և կիրառական բժշկության ասպարեզում ցանկալի արդյունքների կհանգեցնի:

ՀՀ առողջապահության առաջին նախարար (1990-1991թթ.), ոսկրածուծի դոնորների հայկական ռեեստրի բժշկության գծով տնօրեն, պրոֆեսոր Միհրան Նազարեթյանը իր ողջույնի խոսքում նշեց, որ մեծ պատիվ է համարում ներկայացնել պատվավոր հյուրերից մեկի՝ Չինաստանի բժշկական համալսարանի երեխաների հիվանդանոցի ղեկավար, «Թայվանահայկական ալյանս» մշակութային և տնտեսական հասարակական կազմակերպության նախագահ, պրոֆեսոր Պենգ Չինգ-Տիենի անցած մասնագիտական ուղին:

Պրոֆեսոր Պենգ Չինգ-Տիենը իր խոսքում նշեց, որ իր համար մեծ պատիվ է ներկա գտնվել թայվանահայկական առաջին բժշկական գիտաժողովին և շնորհակալություն հայտնեց միջոցառման կազմակերպիչներին:

## Opening of the First Taiwanese-Armenian Medical Conference and the Taiwanese -Armenian First Business Forum

Today the first Taiwanese-Armenian medical conference took place together with the first Taiwanese-Armenian business forum in the Yerevan State Medical University after M. Heratsi.

The conference was organized by the Yerevan State Medical University after M. Heratsi, the Medical University of China, Armenian Association of Hematology and Oncology, "Armenian- Taiwanese Alliance" Cultural and Economic NGO.

Professor Armen Hambardzumyan, the deputy rector on postgraduate and continuing education, welcomed the conference participants and guests on behalf of YSMU Rector, Professor Michael Narimanyan. I welcome you on behalf of YSMU Rector Michael Narimanyan, who is at present out of the country and would like to meet you in two days. He hopes that the first Thai-Armenian conference together with the business forum will carry continuous character and will play an important role for the development of medical, cultural and economic cooperation of two countries.

Samvel Danielyan, Associate Professor, Head of the Armenian Association of Hematology and Oncology, Head

of the Chemical-Therapy Clinic of YSMU Mouratsan Hospital Complex, also welcomed the conference participants and guests and mentioned that the cooperation in the field of scientific and applied medicine will bring to desired results.

Professor Mihran Nazaretyan, the RA first Healthcare Minister (1990-1991??), Medical Director of the Armenian Bone Marrow Donor Registry, mentioned that it is a great honor for him to present the career of Professor Ching-Tien Peng who is the head of the Pediatric Hospital of China Medical University and head of the Armenian-Thai Alliance Cultural and Economic NGO.

In his speech Professor Ching-Tien Peng mentioned that it is a great honor for him to be present at the first Thai-Armenian medical conference. He forwarded his thanks to the event organizers. This is my first visit to Armenia and I am amazed. I will be glad to host you in Taiwan.

Worth mentioning that the first Taiwanese-Armenian medical conference together with the first Taiwanese-Armenian business forum will last up to May 26.

## Դատաբժշկական փորձաքննության և բժշկական իրավունքի արդի խնդիրները

«Դատաբժշկական փորձաքննության և բժշկական իրավունքի արդի խնդիրները» խորագրով հայ-ռուսական համատեղ գիտաժողովը կազմակերպվել էր բժշկական համալսարանի, ՀՀ ԱՆ հանրապետական դատաբժշկական գիտագործնական կենտրոնի, Մոսկվայի Ա.Եվդոկիմովի անվան պետական բժշկաստոմատոլոգիական համալսարանի, Կիրովի պետական բժշկական ակադեմիայի և Կազանի պետական բժշկական համալսարանի կողմից:

Գիտաժողովին ողջույնի խոսքով հանդես եկավ ԵՊԲՀ ռեկտոր, պրոֆեսոր Միքայել Նարիմանյանը, ով իր խոսքում նշեց, որ շատ է կարևորում փորձի փոխանակմանն ուղղված նման հանդիպումները, քանի որ դատաբժշկական ոլորտն առաջնային դեր ունի բժշկագիտության բնագավառում: Նա նաև հույս հայտնեց, որ նման հանդիպումները շարունակական բնույթ կկրեն և կարևոր նշանակություն կունենան նախ երկու երկրների համար, այնուհետև՝ աստիճանաբար ընդարձակելով մասնակից երկրների քանակը կզարգացնեն առավել ընդգրկուն համագործակցություն:

Ներկաներին ողջունեցին նաև ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի գիտական գործունեության կազմակերպման վարչության պետ, պրոֆեսոր Լևոն Մարդոյանը և Մոսկվայի Ա. Եվդոկիմովի անվան պետական բժշկաստոմատոլոգիական համալսարանի դատաբժշկության և բժշկական իրավունքի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Պավել Ռոմոդանովսկին:

Գիտաժողովին ներկայացված զեկույցներով ռուսական և հայկական մասնակիցների կողմից հանդես եկան Պ.Օ. Ռոմոդանովսկին, նույն ամբիոնի դոցենտ Ե.Ք Բարինովը, ՀՀ ԱՆ հանրապետական դատաբժշկական գիտագործնական կենտրոնի տնօրեն Մ.Ս. Բիշարյանը և ուրիշներ:

Գիտաժողովի ավարտին ելույթներով հանդես եկան ԵՊԲՀ գիտահետազոտական կենտրոնի տնօրեն Ա.Վ. Զիլֆյանը, գիտության և տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության պետ Ս.Պ. Քոչարյանը, ով իր խոսքում շնորհակալություն հայտնեց ներկաներին համատեղ աշխատանքի համար՝ հույս հայտնելով որ այն կունենա իր բեղուն արդյունքները:



## Armenian-Russian Joint Conference on “Forensic Medicine Expertise and Current Issues of Medical Right”

Armenian-Russian joint conference on “Forensic Medicine Expertise and Current Issues of Medical Right” took place in Yerevan State Medical University after M. Heratsi recently.

The Conference was organized jointly by the YSMU, Republican Forensic Medicine Scientific Center of the Ministry of Justice of Armenia, Moscow State University of Medicine and Dentistry after A. Yevdokimov, Kirov State Medical Academy and Kazan State Medical University.

Professor Michael Narimanyan, the YSMU Rector, welcomed the Conference participants. He considered such kind of meetings of importance as those are aimed at sharing experience, since the field of forensic medicine has got a leading role in the medical sphere. He also extended hopes that this kind of meetings will be continuous and will carry important role for both the countries, with a further aim to later enlarge the number of the countries involved, and to work on the cooperation development.

The Conference participants were also welcomed by Levon Mardoyan, Head of the Scientific Coordination Organization of the State Committee of Science of RA Ministry of Education, and Professor Pavel Romodanovski, Head of Forensic Medicine and

Medical Right Department of Moscow State University of Medicine and Dentistry.

Nine reports were presented at the Conference by the Armenian and Russian participants. Among them were P. Romodanovski, Associate Professor E. Barinov, M. Bisharyan, Head of the Forensic Medicine Scientific Center of the Ministry of Justice of Armenia, A. Yerasosyan, Forensic-Histological Department Head of the abovementioned center, M. Baghdasaryan, Forensic-Genetic Department Head, A. Maltsev, Head of Forensic Medicine Department of Kirov State Medical Academy, V. Spiridonov, Head of Forensic Medicine Department of Kazan State Medical University, N. Maltseva, Associate Professor of Anatomy Department of Kirov State Medical University, E. Cherkalina, forensic medicine expert, doctor on Moscow Forensic Medical Expertise Bureau.

At the Conference speeches were made by A. Zilfyan, Head of the YSMU Scientific Research Center, S. Kocharyan, Head of the Science and Information Technologies Department, who extended his gratitude to the participants for the joint work carried, with the hope that it will bring its desired results.

# Ու՛մ համար հնչեց վերջին պնդքը բժշկական համալսարանում



Մայիսի 24-ին Երևանի Մխիթար Զե-րացու անվան պետական բժշկական համալսարանում տեղի ունեցավ «Յե-րացի» ավագ դպրոցի շրջանավարտ-ների վերջի զանգի միջոցառումը:

Միջոցառման պաշտոնական մասը բացվեց ԶԶ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանի շնորհա-վորական ուղերձով, որն ընթերցեց «Յերացի» ավագ դպրոցի տնօրեն

## խոհն»:

Այնուհետև դպրոցի տնօրենը իր անունից և շնորհավորեց շրջանա-վարտներին և մաղթեց ամենայն բա-րիք և կանաչ ճանապարհ:

ԶԶ կրթության և գիտության նախա-րարի և «Յերացի» ավագ դպրոցի տնօրենի շնորհավորանքներից հե-տո միջոցառման հաղորդավարն ըն-թերցեց Երևանի քաղաքապետ Տա-

րոն Սարգսյանի շնորհավորական ուղերձը:

Շրջանավարտներին, ուսուցիչնե-րին, ծնողներին և հյուրերին ողջու-նեց և շնորհավորեց նաև ԵՊԲԶ հետ-բուհական և շարունակական կրթու-թյան աշխատանքների գծով պրո-ռեկտոր, պրոֆեսոր Արմեն Համբար-ծումյանը. «Շատ ուրախ եմ, որ մեր բուհում տեղի է ունենում նման միջո-ցառում: Այս օրը հատկանշական է նաև նրանով, որ դուք ԵՊԲԶ-ին կց-ված «Յերացի» ավագ դպրոցի առա-ջին շրջանավարտներն եք:

Մրտանց շնորհավորում եմ ձեզ այս գեղեցիկ օրվա կապակցությամբ՝ մաղթելով քաջ առողջություն, տոկու-նություն, որպեսզի կարողանաք հաղթահարել քննությունների բար-դությունները և ընդունվել մեր հան-րապետության՝ ձեր նախընտրած բուհը»:

Պաշտոնական մասին հաջորդեց մի-ջոցառման ավանդական և երկար սպասված երգով, պարով և կատակնե-րով համեմված տոնական հատվածը:



Նարինե Սարգսյանը. «Միտելի՛ շրջա-նավարտներ, շնորհավորում եմ բոլո-րիդ՝ դպրոցում ուսումնառության ավարտի և վերջին դասի կապակցու-թյամբ: Դուք հրաժեշտ եք տալիս ար-դեն հարազատ դարձած կրթօջախին՝ թողնելով այնտեղ ձեր պատանեկու-թյան անմոռանալի տարիները: Միա-ժամանակ հրաժեշտ եք տալիս ուսու-ցիչներին, որոնց սերն ու հոգատա-րությունը հիշելու եք մշտապես: Դուք թևակոխում եք կյանքի այնպիսի շր-ջան, որտեղ ձեզանից պահանջվելու է լինել առավել պատասխանատու և



# «ՅԵՐԱՑԻ» ավագ դպրոց կարող են ընդունվել...

2010 թվականից գործող Երևանի թիվ 30 ավագ դպրոցը Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ 2012-ից դարձել է Երևանի պետական բժշկական համալսարանի «Յերացի» ավագ դպրոց: Դպրոցում գործում են 10-12-րդ հոսքային դասարաններ, ուսումնական գործընթացը կազմակերպվում է երկու ուղղություններով՝ բնագիտամաթեմատիկական և հումանիտար՝ կենսաքիմիական տնտեսագիտական և լեզվաբանական ու պատմաիրավագիտական ենթահոսքերով:

Դպրոցում մեծ ուշադրություն է դարձվում օտար լեզուների ուսուցմանը:

2013-14 ուստարվանից նախատեսվում է դպրոցում բացել ռուսերենի խորացված ուսուցմամբ դասարաններ:

«Յերացի» ավագ դպրոցում մեծ ուշադրություն է դարձվում սովորողների արդյունավետ և որակյալ կրթության կազմակերպմանը, մշակութային դաստիարակությանը, որպես ապագա քաղաքացիներ, համապատասխան արժեքային համակարգի ձևավորմանը:

«Յերացի» ավագ դպրոց կարող են դիմել հիմնական դպրոցն ավարտածները:

2013-14 ուստարվա ընդունելությունը կսկսվի հուլիսի 1-ից: Ընդունելության համար անհրաժեշտ փաստաթղթերն են՝ ծննդյան վկայական, հիմնական կրթության վկայական, տեղեկանք բնակավայրից և 3x4 չափի 2 լուսանկար:

«Յերացի» ավագ դպրոց դիմող աշակերտները մասնակցելու են գիտելիքների ստուգման հետևյալ առարկաներից՝ հայոց լեզու (գրավոր), օտար լեզու (գրավոր), մաթեմատիկա (գրավոր) և հարցազրույց՝ սոցիալական մանկավարժի հետ:

Դպրոցը համագործակցում է միջազգային և տեղական տարբեր կազմակերպությունների հետ, ինչի արդյունքում դպրոցի աշակերտները ակտիվորեն մասնակցում են հասարակական, քաղաքացիական և մշակութային տարատեսակ միջոցառումների:

Դպրոցի աշակերտների մասնագիտական կողմնորոշման նպատակով կազմակերպվում են աշխատանքային պրակտիկաներ, այցելություններ բարձրագույն ուսումնական հաստատություններ:

«Յերացի» ավագ դպրոցում յուրաքանչյուր կիսամյակի վերջում աշակերտները հանձնում են քննություններ:



Վերջերս իր մահկանացուն կնքեց բժշկական համալսարանի ռազմաբժշկական ֆակուլտետի զարգացման գործում ակտիվ մասնակցություն ցուցաբերած և 1998-2004 թթ. այն ղեկավարած, պահեստազորի բուժօժանայության գն-

## ԱՐՏՈՒՇ ՎԱՍԻԼԻ ՂԱԶԱՐՅԱՆ

դպետ Արտուշ Վասիլի Ղազարյանը:

Ա. Ղազարյանը ծնվել է 1952 թ., Արարատի շրջանի Արարատ գյուղում: 1970-ին ընդունվել, 1976-ին ավարտել է Երևանի պետական բժշկական ինստիտուտը, 1976-77 թթ. ինտերնատուրան անցկացրել է ակադեմիոկոս Լ. Հովհաննիսյանի անվան սրտաբանության ինստիտուտում:

1977-78 թթ. աշխատել է Արարատի քաղաքային հիվանդանոցում, 1978-82 թթ. եղել է պոլիկլինիկայի վարիչ, 1982-90 թթ. հիվանդանոցի գլխավոր բժշկի բուժգծով տեղակալ, 1990-95 թթ.՝ գլխավոր բժիշկ,

1989 թ. մասնակցել է Երասխանի մարտերին:

1995 թ. զորակոչվել է ՀՀ զինված ուժեր, նշանակվել է ՀՀ ՊՆ ռազմաբժշկական կենտրոնական հանձնաժողովի նախագահի տեղակալ, 1996-97 թթ.՝ նախագահ, 1997-98 թթ. հանդիսացել է ՀՀ ՊՆ ռազմաբժշկական վարչության պետ, 1998-2004 թթ. եղել է ԵՊԲՀ ռազմաբժշկական ֆակուլտետի պետ:

1997 թ. պաշտպանել է թեկնածուական թեզ, 1990-95 թթ. եղել է ՀՀ զերագույն խորհրդի պատգամավոր: Պարգևատրվել է «Մարտական ծառայության», «Անբասիր ծառայության համար», «Մարշալ Բաղ-

րամյան», «Մարշալ Ժուկով», Արցախի «Մայրական երախտագիտություն» մեդալներով:

Ա. Վ. Ղազարյանը հեղինակ էր 40 գիտական աշխատանքների, երկու մենագրության:

Ա. Վ. Ղազարյանը Հայկական բանակի միակ բժիշկ սպան էր, ով հաջորդաբար աշխատել և ղեկավարել է ՀՀ ՊՆ կենտրոնական բժշկական հանձնաժողովի, ՀՀ ՊՆ ռազմաբժշկական վարչության, և ԵՊԲՀ ռազմաբժշկական ֆակուլտետի գործունեությունը:

Նրան ճանաչողների հիշողության մեջ Ա. Վ. Ղազարյանը կմնա որպես ռազմական բժշկության բնագավառի ճանաչված մասնագետ:



Ցավալի է, երբ մարդը կյանքից հեռանում է երիտասարդ տարիքում:

Կրկնակի ցավալի է, եթե նույն այդ մարդը իրենից հետո

## ԿԱՐԻՆԵ ԻՍԱԳԱԿԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

թափուր է թողնում իր տեղը՝ հոգեբանական առումով:

Կարինե Մնացականյանը՝ բոլորիս համար շատ սիրելի Կարինեն, բժշկական համալսարանի ընդհանուր բաժնի ավագ մասնագետն էր: Համալսարանի ներքին գրագրությանը վերագրող բոլոր հարցերի պատասխանները՝ հստակ և սպառիչ, կարելի էր ստանալ նրանից: Ուշադիր էր, պարտաճանաչ, բարեհամբույր, պատրաստակամ...

Կարինեն մեկն էր այն մարդկանցից, ում հետ շփումից հետո հարցեր չէին մնում:

Կարինե Իսահակի Մնացականյանը ծնվել է 1957 թվականին, Երևանում: Ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի հաշվիչ տեխնիկայի ֆակուլտետը: Որպես ինժեներ աշխատել է Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական, Երևանի ավտոմատացված կառավարման համակարգի գիտահետազոտական ինստիտուտներում, «Աղամանդ» պետական ձեռնարկությունում: Այնուհետև 1995 թվականից մինչև իր կյանքի վերջին օրը աշխատել է բժշկա-

կան համալսարանում՝ վաստակելով կարգապահ, խելացի աշխատողի անուն:

Եհիշտ է, մեծ չի եղել այն բնագավառը, որտեղ աշխատել է Կարինե Մնացականյանը, սակայն նա իր գործունեությամբ չափազանց ոյուրին է դարձրել մեզանից շատերի աշխատանքը:

Կարինե Մնացականյանի հիշատակը շատ երկար կապրի նրա գործընկերների և աշխատանքի բերումով նրա հետ շփված բոլորի հիշողության մեջ:

# ՄԻԱՎ վարակի ժամանակակից բուժում

ՄԻԱՅԱ ՆԻՍԿԱՆԵ (հետազոտող-օգնական)

Հելսինկիի համալսարանի կենտրոնական հոսպիտալի լաբորատորիա

ՀՊԿՅԱՆՆԵՍ ՄԱԴՈՅԱՆ (տեխնիկական խորհրդատու)

«Իրական աշխարհ, իրական մարդիկ» ՀԿ



Մարդու իմունային անբավարարության վիրուսի (ՄԻՎՎ-ի) վերաբերյալ հետազոտության օրվա կարգախոսն է՝ «հետազոտվիր և կառավարիր կյանքը»: Աշխարհում 34 միլիոն մարդ ապրում է ՄԻՎՎ-ով, և նրանց գերակշռող մասը չգիտի, որ ունի ՄԻՎՎ վարակ:

Օրգանիզմում ՄԻՎՎ-ի առկայության մասին պարզելու միակ ուղին հետազոտությունն է: Եթե ՄԻՎՎ-ի վերաբերյալ հետազոտության արդյունքը դրական է, և մարդն ունի ՄԻՎՎ վարակ, նա կարող է հակառետրովիրուսային բուժում ստանալ, կանխել հետագայում շատ հիվանդությունների զարգացումը, ապրել լիարժեք կյանքով ու առողջ երեխաներ ունենալ, ինչպես նաև ուրիշներին պաշտպանել վարակվելուց:

ՄԻՎՎ/ՉԻԱՅ-ը տասնամյակներ շարունակ եղել է անբուժելի և մահացու հիվանդություն: ՄԻՎՎ-ը պատկանում է այսպես կոչված ռետրովիրուսների ընտանիքին, որն ախտահարում է իմունային համակարգի բջիջները:

## ՄԻՎՎ-ը փոխանցվում է հետևյալ ուղիներով՝

- սեռական ճանապարհով,
- արյան, մասնավորապես, չախտագերծված ասեղների կամ բժշկական գործիքների, դոնորական արյան կամ արյան բաղադրիչների և օրգանների փոխապատվաստման միջոցով,
- մորից երեխային՝ հղիության և ծննդաբերության ընթացքում կամ կրծքի կաթով կերակրելիս:

1996-ից ի վեր, երբ ստեղծվեց բարձր ակտիվության հակառետրովիրուսային բուժումը, զարգացող երկրներում ՄԻՎՎ-ը վերածվեց երկարատև ընթացքով քրոնիկ հիվանդության: Այնուամենայնիվ, կան դեռևս միջին և ցածր եկամուտ ունեցող երկրներ, որտեղ բուժումը հասանելի չէ բոլորին:

2013-ի ապրիլի 30-ի դրությամբ Հայաստանում գրանցվել է ՄԻՎՎ վարակի 1445 դեպք: Սակայն ՄԻՎՎ վարակի դեպքերի հաշվարկային թիվը շատ ավելի մեծ է, քան գրանցվածը:

Հակառետրովիրուսային բուժումը երեք տարբեր դեղամիջոցների համակցություն է, որն ազդում է վիրուսի կողմից բջիջների ախտահարման տարբեր փուլերի վրա:

Գոյություն ունեն բազմաթիվ դեղամիջոցներ, որոնք հիմնականում պատկանում են 4 տարբեր խմբերի: Բարձր ակտիվության հակառետրովիրուսային բուժման կիրառման սկզբում բուժումը շատ թանկ էր, քանի որ մի-

ակ հասանելի դեղորայքը արտոնագրված էր: Այնուամենայնիվ, գները կտրուկ նվազեցին ջեներիկ դեղամիջոցների հասանելիության հետևանքով: Գոյություն ունեն նաև շատ ծրագրեր, որոնց միջոցով դեղորայքը դառնում է ավելի հասանելի, իսկ գներն ավելի մատչելի՝ միջին և ցածր եկամուտ ունեցող երկրների համար: Դեղագործական շատ ընկերություններ առաջարկում են զեղչեր բուժման տարբեր սխեմաների համար, այնուամենայնիվ, առավել արդյունավետ և առավել հարմարավետ երկրորդ գծի սխեմաները դեռևս ընդգրկված չեն այդ ծրագրերում: Ի լրումն որոշ երկրների, որոնք չունեն արտոնագրեր, ինչպիսին է Հնդկաստանը, արտադրում են ցածր գներ ունեցող դեղամիջոցներ:

Գոյություն ունեն հատակ փաստեր, որ հակառետրովիրուսային բուժման հասանելիությունը նվազեցնում է ՄԻՎՎ-ով վարակվելու նոր դեպքերի հավանականությունը, ինչպես նաև բուժման արժեքը: Հակառետրովիրուսային բուժման նպատակն է վիրուսային ծանրաբեռնվածությունն արյան մոնիթինգից հասցնել չհայտնաբերելի մակարդակի: Դա նշանակում է, որ արյան մեկ միլիլիտրի մեջ պետք է լինի վիրուսի 40 պատճենից քիչ: Վիրուսի քանակն արյան մեջ իջեցնելով՝ հակառետրովիրուսային բուժումն ավելացնում է նաև արյան մեջ CD4 սպիտակ բջիջների քանակը: Հիմնականում հակառետրովիրուսային բուժումը նշանակվում է այն դեպքում, երբ մեկ խորանարդ միլիլիտր արյան մեջ CD4 բջիջների քանակը ցածր է 350-ից: Հակառետրովիրուսային բուժման արդյունավետությունն ակնհայտ է դառնում մի քանի ամսվա ընթացքում: Այն չի կարող իսպառ ոչնչացնել վիրուսն օրգանիզմից, սակայն դանդաղեցնում է և կարող է ամբողջությամբ դադարեցնել հիվանդության զարգացման ընթացքը:

Վիրուսի մակարդակի նվազեցման և իմունային համակարգի առողջացման հետևանքով բարձրանում է նաև ՄԻՎՎ-ով ապրող մարդու կյանքի որակը: Նվազում է օպորտունիստական վարակների վտանգը, ինչի հետևանքով էլ բարելավվում է մարդու ինքնազգացողությունը և կրճատվում է վատառողջ լինելու ժամանակահատվածը: Այն կարող է տասնամյակներով երկարացնել մարդու կյանքը և կանխել ՉԻԱՅ-ի փուլին հասնելը, ուստի նաև բարձրացնում է մարդու աշխատունակությունը և հնարավորություն է տալիս վարել լիարժեք և ակտիվ կյանք:

Դիսկորդանտ զույգերի (երբ ամուսիններից մեկը չունի ՄԻՎՎ վարակ) շրջանում անցկացված բազմաթիվ հետազոտությունները ցույց են տվել, որ հակառետրովիրուսային բուժումը նվազեցնում է վիրուսի փոխանցման հավանականությունը 60-95 %-ով:

Երեխաների համար ՄԻՎՎ-ով վարակման հիմնական աղբյուր է հանդիսանում ՄԻՎՎ ունեցող մայրը: Վարակում կարող է տեղի ունենալ հղիության, ծննդաբերության կամ կրծքի կաթով կերակրելու ընթացքում: Հակառետրովիրուսային բուժումը միանգամայն անվտանգ է և՛ մոր, և՛ երեխայի համար: Այն նշանակվում է հղիության 14-րդ շաբաթից, եթե մայրը նախքան հղիությունը չի ստանում ՀՌՎ բուժում, և կարող է զգալիորեն նվազեցնել



երեխային վիրուսի փոխանցման հավանականությունը հիմնական 3 ճանապարհներով:

Օրինակ՝ Հայաստանում մորից երեխային ՄԻՎ-ի փոխանցման կանխարգելիչ բուժման կիրառումից ի վեր ՄԻՎ ունեցող մայրերից ծնվել է 67 երեխա, որոնցից 66 առողջ են և չունեն ՄԻՎ վարակ: Հակառետրովիրուսային բուժում չստանալու դեպքում վարակի փոխանցման հավանականությունը հասնում է 25-45%-ի, իսկ բուժումն ստանալու դեպքում՝ մինչև 2%:

Բուժումը ճիշտ ժամանակին սկսելը հանդիսանում է հակառետրովիրուսային բուժման արդյունավետության կարևոր նախապայմաններից մեկը: Խորհուրդ է տրվում բուժումն սկսել նախքան CD4 բջիջների քանակն արյան մեջ կլինի 350-ից ցածր: Բուժման վաղ նախաձեռնումը հետաձգում է ՁԻԱՀ-ի փուլը: Սա նաև ավելի ծախսարդյունավետ է, քան բուժումն ավելի ուշ փուլերում, քանի որ այն ուղեկցվում է օպորտունիստական վարակներով, ինչպիսիք են տուբերկուլոզը, թոքաբորբը և մի շարք այլ վարակներ և ուռուցքներ:




ՄԻՎ-ի վերաբերյալ հետազոտությունների ծավալի ավելացման հետ մեկտեղ, ՀՌՎ բուժման հասանելիության պայմաններում նվազում է մահվան դեպքերի թիվը և բուժման արժեքը: Սա նաև միակ միջոցն է նվազեցնել վարակման նոր դեպքերի թիվը:

ՀՌՎ բուժման դեպքում դեղերի ընդունման պարտաճանաչությունը և կայուն հասանելիությունը շատ կարևոր են մի շարք պատճառներով՝ եղորայքի կարգապահորեն ընդունման նպատակն է մշտապես ցածր պահել օրգանիզմում վիրուսային ծանրաբեռնվածությունը և դրանով իսկ նվազեցնել ախտանշանները և վարակի փոխանցման վտանգը՝ նվազեցնելով դեղակայունության առաջացման վտանգը: Անկարգապահությունը կարող է հան-

դիսանալ դեղամիջոցների ընդունման խախտման պատճառ, նաև նպաստել նոր, կայուն վիրուսի շտամերի տարածմանը:

Անկարգապահության հիմնական խոչընդոտները բուժման հասանելի չլինելն է և բժշկին պարբերաբար չայցելելը, սոցիալ-հոգեբանական և ընտանեկան աջակցության պակասը, վախը խտրականությունից, դեղորայքի կողմնակի ազդեցությունները և բուժման նպատակի կարևորությունը չհասկանալը:

Ինչպես ցանկացած այլ դեղամիջոցներ, ՀՌՎ դեղամիջոցները նույնպես ունեն կողմնակի ազդեցություններ՝ առաջացնելով գլխացավ, սրտխառնոց, մկանների ցավ, անքնություն, աղիքային ախտանշաններ և էլզեմա: Կարող են առաջանալ լյարդի կան ենթաստամոքսային զեղծի խնդիրներ, սակավարյունություն կամ նյարդային ախտանշաններ: Սակայն, այս ախտանշանները բուժումն սկսելուց մի քանի ամիս անց դառնում են ավելի թույլ արտահայտված կամ լիովին վերանում են:





# “EPMI” այսպես էր կոչվում Երեվանի բժշկական ինստիտուտի ուրախների եւ հնարամիտների թիւնը

Հայկական **KBH**-ը (ՈւՅԱ ուրախների և հնարամիտների ակումբ) վերջերս մշտեց իր 20-ամյակը: Բեմը նորից նրանցն էր, հանդիսատեսը նորից նրանցն էր, նրանցն էին նաև դահլիճում քնածող բոլոր հաղթանակների հիշողությունները: Այնտեղ էին 90-ականների համախորհրդային բեմի իսկական հերոսները՝ հայկական **KBH**-ի առաջամարտիկները: Նրանց մեկ առ մեկ ճանաչում էին դեմքով, սիրում էին անմնացորդ, երկրպագում ամեն ղուպե և նմանվում անգամ սանրվածքով: 15 տարի անց առաջին անգամ հանդիպում են ամբողջական կազմով:

Երկու տասնամյակը շատ բան է փոխել տղաների կյանքում. հին կյանքից քիչ բան է մնացել: Խայտուն աչքերով պատանիները վաղուց արդեն հասուն տղամարդիկ են: Մեկը ապահովագրական ընկերության առաջին դեմքերից է, մյուսը՝ նախագահի խոսնակ, երրորդը՝ վերականգնողական կենտրոնի տնօրեն:

Մի ամբողջ կյանք դադարից հետո նրանց սպասում է բեմը՝ երևանյան ստուգողական հանդիսատեսով: Հայելու կարիք չկա: Խաղընկերների ամենատես աչքն ամենաօբյեկտիվ հայելին է: Իրար հինգ մատի պես գիտեն: Ճիշտ է, հիմա մի քիչ մեծացել են, մեկը միհարել է, մյուսը՝ հակառակը, բայց բեմական պահանջը մնացել է նույնը՝ կոկիկ, մրբաճաշակ և տպավորիչ:



Մարկ Սաղաթեյանն է՝ **EPMI**-ից: Այս թիմն էր, որ ճանապարհ բացեց հաջորդ չեմպիոնական տիտղոսակրի՝ «Նոր հայերի» համար:

90-ականների սկզբին, երբ ցուրտ էր բոլորի տներում, մութ էր ամենուրեք և ամեն ինչ հաշվարկված չափաբաժ-

նով էր, շռայլ գտնվեց հայկական հունորը: Համատարած խավարի մեջ միակ լուսավոր կետը դարձավ **KBH**-ը: Պատերազմի թեման դադարեց լինել մենաշնորհային: Բոլորը խոսում էին երկու բանի մասին՝ պատերազմի ու **KBH**-ի: Երկու դեպքում էլ Հայաստանը հաղթեց ու ամենակարևորը՝ չչեղվելով խաղի կանոններից:

Հայ-ադրբեջանական լարվածությունն ամենամեծ խոչընդոտը չէր: Դա հաղթահարեցին ճիշտ այնպես, ինչպես հանդիսատեսի սուր հարցերն ու **KBH**-ի կնքահայր Ալեքսանդր Մասլիկովի թերահավատ ժպիտը: Համատարած



հուսահատության մթնոլորտում այս երիտասարդները կարողացան ուրախություն ապահովել ամբողջ հայ ազգի համար:

Բոլոր այն երիտասարդները, որոնք **KBH**-ի դարբնոցն ամենախոստումնալիցն էին համարում հաջողակ ապագայի համար, խոստովանում են՝ **KBH**-ն էր հենց այն անկյունաքարը, որը թռիչք ապահովեց յուրաքանչյուրի կարիերայի համար:

Այդ օրը կարծես բոլորը ապրում էին մի հոգեվիճակ, նոստալգիա՝ կարոտախտ, որը փոխանցում էին տղաները: Հուշակարոտ՝ ճիշտ ինչպես կյանքում՝ երկարատև բաժանումից հետո հանդիպել են բեմում ու չգիտեն՝ ով պետք է առաջինը սկսի:

Հանդիսատեսը վայելում էր խաղը անհագ հայացքով ու թվում է՝ չսպառնալով ծիծաղով...

Պատրաստեց՝  
**ԷԼԼԱ ԱՍՄԱՐՅԱՆԸ**

# Նրանց բոլոր հաղթանակներին արձագանքել է «ԱՊԱԳԱ ԲԺՇԿԸ»

... Պարզվեց, որ ամենակենսուրախ ու ամենասարամիտ ժողովուրդն ենք, առնվազն՝ նախկին Խորհրդային Միության բոլոր ժողովուրդների մեջ:

Մենք, հիմնականում մեկամաղձոտ երաժշտություն ունենք, պոեզիա՝ ազգային կորուստների մորմոքուն կարոտով առլեցուն...

Անգամ նախկին Խորհրդային Միության սահմաններում ստեղծված ամենասարամիտ հորինվածքները՝ հայկական ռադիոյի անեկոտները, թվում է՝ ոչ մի ընդհանրություն չունեն մեր ազգային հոգեբանության հետ, կարծես ինչ-որ մեկը մեզանից հեռու, ինչ-որ տեղ հորինում և մեզ է վերագրում դրանք...

Բայց **KBH**-ի թատերաբեմ բարձրացան Երևանի բժշկական ինստիտուտի տղաներն ու, ի զարմանս մեզ, պարզվեց, որ հումորի, սրամտության բնագավառում հավասարը չունեցող ժողովուրդ ենք:

Սկսված հաղթարշավն իր գագաթնակետին հասավ այն ծանր օրերին, երբ ողջ **ԽՍՀՄ**-ը քարկոծում էր մեզ, մեղադրում, լուտանքներ թափում բոլոր հեռուստաալիքներով... Եվ այդ մղձավանջի մեջ՝ բժշկականի տղաները հիացմունք, փայլուն հաղթանակներ ու շքանշաններ էին կորզում ի փառս մեր ժողովրդի: Լույսի շող՝ խավարի թագավորության մեջ. միայն այսպես կարելի էր որակել տղաների ելույթը:

Յեռուստակրանից յուրաքանչյուրիս փոխանցվում էր այն պոռթկուն հրձվանքը, որով ապրում էր դահլիճը: Ուրախների և հնարամիտների մրցույթի մասնակից Երևանի բժշկական ինստիտուտի թիմը իսկական հաղթահանդեսի էր դուրս եկել: Թիմին ոչ միայն իր երկրպագուներն էին ծափահարում, այլև մրցույթին մասնակցող մյուս խմբերի երկրպագուները, բայց ամենից անսովորը ժյուրին էր. մոռանալով իր հիմնական դերը, այն վերածվում էր ամենաբուռն երկրպագուների խմբի, ավելի ճիշտ՝ խիստ շահագրգռված երկրպագուների, ով հիացած՝ ցնձագին բացականչություններ էր անում: Խելացի, ճաշակով, հարուստ ու խնդուն ծրագիրը, որ չափազանց հեռու էր այդ օրերին հոգնեցնելու չափ տա-

**Երևանի պետական բժշկական ինստիտուտի ուրախների և հնարամիտների ակումբը ստեղծվել է 1990 թվականի մայիսին: 21 հոգուց բաղկացած թիմի բոլոր համերգ-ելույթները բարեգործական էին:**

**Համերգների շահույթները պարտադիր փոխանցվել է օգնության հիմնադրամներին: Միայն Արցախին և Գյումրի քաղաքի որբ երեխաներին փոխանցվել է մոտ 25 հազար ռուբլի:**

րածված քաղաքական թեմաներից՝ ոչ միայն հիացնում էր, այլև մտածելու տեղիք տալիս: Հաղթանակները համոզիչ էին, ակնառու:

Այս հանգամանքի գիտակցումով էլ համալսարանի ռեկտորն անում էր հնարավորին ամեն բան, որ տղաները հույս բերեն մեր ժողովրդին, հանձնեցին, որ լուտանքները ժամանակավոր են, ստիպելով անգամ Գուսմանին բարձրացնել դրական գնահատականը՝ ճիշտ է, միշտ ցածր մյուսներից:

Բժշկականի թիմին փոխարինելու եկան «Նոր հայերը», որի հիմնական կորիզը, տանող ուժը **ԵՐՄԻ**-ի տղաներն էին:

Ի դեպ՝ Մոսկվայում կայացած 13-րդ մրցաշարի մասնակիցների հովանավորների հասցեին երախտիքի ջերմ խոսքեր հնչեցին այդ թվում նաև Երևանի պետական բժշկական համալսարանի ռեկտոր, ակադեմիկոս Վիլեն Պարույրի Հակոբյանի անունը շեշտվեց: Տղաների հաղթանակն այդ անգամ ևս շնորհալից էր: Ավելին, Գուսմանը ևս «5» գնահատեց բոլոր ելույթները: Այն փաստը, որ սա երևույթ էր, գիտեին բոլորը:

Ահա ինչու՝ օպերատորն էկրանով մեկ ցույց էր տալիս հատկապես Բաբլի դպրոցն անցած այս մրցավարի գնահատականները՝ «գերազանց», «գերազանց», «գերազանց»: Չորս մրցույթից 20 միավոր...

Այսպիսին էր արդյունքը: Մյուս մրցավարներին միայն մի դիտողություն կարելի էր անել՝ «Չեղավ, ժյուրիի հարգարժան անդամներ, մի փոքր չափավորեցե՛ք ձեր հախուռն ու աղմկոտ ոգևորությունը, զոնե թիմի երկրպագուներից մի քիչ պակաս աղմկե՛ք և դրսևորե՛ք ձեր հիացմունքը»:

Խաղի ավարտից հետո, երբ խոսքը տրվեց ժյուրիի անդամներին՝ ամփոփելու խաղը, նրանք, խոսքերը մեկ

արած, սկսեցին իրենց գովասանք-հիացմունքը՝

- Ինձ թվում է, կարիք չկա գնահատել, նրանք միանգամից կարող են անցնել ֆինալ:

**ԿՈՆՍԱՆՏԻՆ ԷՆՍՍ**

- Երևանն ապացուցեց, թե որքան կարևոր է հայերի դերը **KBH**-ում:

**ՎԱԼԴԻՍ ՊԵԼԸ**

- Եկեք համաձայնե՛ք՝ եթե չլինի **KBH**-ը չէր լինի նաև հայերի հրաշալի խաղը:

**ՍԵՐԳԵՅ ՇՈԼՈՒՍՈՎ**

Եվ այսպես՝ բոլորը՝ բացառությամբ Յու.Գուսմանի, բայց դա այնքան էլ սարսափելի չէ. չէ՞ որ տղաները ստիպեցին Գուսմանին իր ձեռքով 4 անգամ բարձրացնել բարձրագույն գնահատականը:

Մեր տղաների յուրաքանչյուր ելույթ ու հաղթանակ արժանացել է «ԱՊԱԳԱ ԲԺՇԿԻ» ուշադրությանը:

«Հաղթարշավը շարունակվում է պարոնայք երկրպագուներ», «Ապրեք տղաներ»...

Վերջին խաղից առաջ տղաները հայտարարեցին «Այսօրվանից մենք երկրպագուներ ենք»,- ասացին ու իջան բեմից: Այս առթիվ հոգվածը հենց այդպես էլ վերնագրված է՝ «Այսօրվանից մենք երկրպագուներ ենք»:

Բժշկականի թիմը փառահեղ էջեր գրեց իր կրթօջախի պատմության մեջ՝ նրա, ինչպես նաև ողջ հայ ժողովրդի համար ծանրագույն տարիներին: Գրեց պատվախնդրությամբ՝ հիացմունքի արժանացնելով մեր ժողովրդի դիմացկունությունն ու լավատեսությունը:

**Ս. ԹՈՐՈՍՅԱՆ**

# Գիտաժողով՝ նվիրված բժշկական քիմիայի ամբիոնի հիմնադրման 90-ամյակին



1922-ին Երևանի պետական համալսարանի անօրգանական քիմիայի ամբիոնի հիման վրա նորաստեղծ բժշկական ֆակուլտետի համար ստեղծվեց ընդհանուր քիմիայի ինքնուրույն ամբիոն: Ամբիոնի մեջ միավորվում էին ընդհանուր և անալիտիկ քիմիայի դասընթացները: Ամբիոնի հետագա զարգացման համար կարևոր փուլ հանդիսացավ Երևանի պետական համալսարանից բժշկական ֆա-

ուսումնասիրությանը: Այդ խնդրի վերաբերյալ զեկուցումներով հանդես է եկել մի շարք տեղական և միջազգային գիտաժողովներում (ՌԴ, ԱՄՆ, Գերմանիա, Բելգիա, Թուրքիա, Հունաստան):

Մ.Ս. Մելքոնյանը պարզևատրվել է բազմաթիվ պատվոգրերով, ԵՊԲՀ-ի ոսկե և վարչապետի հուշամեդալներով: Նրա ղեկավարությամբ ամբիոնի ուսումնական և գիտական գործունեությունը թևակոխել է զարգացման նոր ժամանակաշրջան:

Ամբիոնը ապահովում է ուսանողների ներգրավվածությունն գիտական խմբակի աշխատանքներին, որոնք յուրաքանչյուր կիսամյակի վերջում գործող ուսանողագիտական խմբակի կողմից հրապարակավ զեկուցվում են, իսկ լավագույն ուսանողներն էլ անպայման արժանանում են պատվոգրերի:

Երևանի պետական բժշկական համալսարանում վերջերս տեղի ունեցավ գիտաժողով՝ «Գիտության նվաճումները քիմիայի բնագավառում և նոբելյան մրցանակները քիմիայից» թեմայով: Ուսանողական գիտաժողովը նվիրված էր բժշկական քիմիայի ամբիոնի հիմնադրման 90-ամյակին: Գիտաժողովին իրենց ակտիվ մասնակցությունն ունեցան տեղացի և արտասահմանցի ուսանողներ՝ տարբեր ֆակուլտետներից՝ ընդհանուր բժշկության, ստոմատոլոգիական, դեղագիտական և ամբիոնի դասախոսներ: Գիտաժողովին ներկա էին բազմաթիվ հյուրեր:

Ձեկույցներն ընտրված էին քիմիայից նոբելյան մրցանակներ ստացած աշխատանքների շուրջ՝ և՛ հայերեն, և՛ անգլերեն լեզուներով: Ձեկուցումների ավարտից հետո տեղի ունեցան աշխույժ քննարկումներ, ելույթներ և ուսանողներին հաճնվեցին վկայագրեր:

Բժշկական քիմիայի ամբիոնը ի դեմս ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Մ.Ս. Մելքոնյանի, քայլում է առաջին շարքերում իր ավանդույթներով, աշխատանքային սկզբունքներով, որոնք անկախ ամբիոնի անավանափոխություններին պահպանվել են՝ անել ամեն հնարավորը և նույնիսկ անհնարինը գիտելիքը վարպետորեն, արհեստավարժ ձևով, սկսնակ և անփորձ ուսանողին փոխանցելու համար, հիրավի վստահ լինելով, որ դրանք կմնան որպես մնայուն, անգնահատելի արժեք մասնագիտական կողմնորոշման հարցում:

կուլտետի անջատումն՝ իբրև ինքնուրույն ինստիտուտ:

Ամբիոնը բազմիցս վերանվանվել է՝ 1967-ին՝ անօրգանական, անալիտիկ և կլինիկական քիմիայի, 1982-ին՝ ընդհանուր քիմիայի, 1993-ին՝ ընդհանուր և կենսօրգանական քիմիայի, 2008-ին՝ բժշկական քիմիայի ամբիոն:

1993-ից արդեն 20 տարի է ամբիոնը ղեկավարում է կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մազդա Միերի Մելքոնյանը: Նա բազմաթիվ գիտական ընկերությունների և խորհուրդների անդամ է:

Կիրառելի ժամանակակից տեխնոլոգիական և տեղակատվական միջոցներ՝ (սլայդներ, տեսաֆիլմեր), ամբիոնն իրականացնում է եռալեզու ուսուցում համալսարանի երեք ֆակուլտետների առաջին կուրսեցիների համար: Անգնահատելի է նաև առաջին անգամ մայրենի լեզվով ուսումնական գրականության ստեղծումը բոլոր դասավանդվող առարկաներից, նրա դերն ու նշանակությունը և ուսանողների և դասախոսական կազմի համար: Ամբիոնի գիտական գործունեությունը նվիրված է մարդկության համար չարիք հանդիսացող աղմուկի ազդման արդյունքում առաջացող ֆիզիկա-քիմիական տեղաշարժերի զարգացման մեխանիզմների և դրանց կարգավորման



# Տարեգրություն

Ծաղկաբաղ «ԱՊԱԳԱ ԲԺՇԿԻՑ»

«Տարեգրություն» խորագրի տակ տպագրված են մեջբերումներ «ԱՊԱԳԱ ԲԺՇԿԻ» տարբեր տարիների թողարկումներից: Նպատակը մեկն է՝ ի մի հավաքել համալսարանի պատմության հետաքրքիր պահերը: Այս ծաղկաբաղի տպագրությունը նպատակ ունի ներկայացնել «ԱՊԱԳԱ ԲԺՇԿԻ» երկու հասարակարգերում, երկու հազարամյակներում... խորհրդային տարիների թողարկումներից մեջբերումները հնարավորություն կտան պատկերացնելու, թե ինչի մասին էր գրում թերթը, որոնք էին այն խնդիրները, որը լուծում էր թերթը իր հրապարակումներով: Վստահ եմ՝ այս հետադարձ հայացքը կհետաքրքրի այսօրվա ընթերցողին, ով թեև լսել է խորհրդային տարիների մասին, սակայն շատ քիչ պատկերացում ունի այդ ժամանակաշրջանի մասին: Հավատացե՛ք՝ մինչև անկախացումը ուսումնական գործընթացին առնչվող հոդվածները ուշագրավ են՝ պատկերացում կազմելու խորհրդային բարձրագույն դպրոցում առկա կրթական համակարգի մասին այնքանով՝ որքանով հայկական կրթական համակարգը անբաժանելի մասն էր բարձրագույն կրթության խորհրդային ողջ համակարգի:

Ծաղկաբաղն ընդգրկում է 1958-ից մինչև 2001 թվականն ընկած ժամանակաշրջանը: 2001 թվականից սկսած տարեգրությունը չենք թերթել, թեև չափազանց շատ են իրադարձությունները, որոշումները, փոփոխվող ուսումնական ծրագրերը, քննական համակարգերը... Այս մասին, թերևս, մեր թերթի 60-ամյա հոբելյանի առիթով:

# Տարեգրություն

## Ճաշկարգաի «ԱՊԱԳԱ ԲԺՇԿԻՑ»



### Ի՞նչ է գրել «ԱՊԱԳԱ ԲԺՇԿԿԸ» 1958-1960 թվականներին

Նախ երկու, ապա 4 էջանոց «ԱՊԱԳԱ ԲԺՇԿԿԸ» ժամանակի պահանջներին համաքայլ նյութեր է ներկայացրել քաղաքական ուսուցման կազմակերպման, ՍՄԿԿ պատմության սկզբնաղբյուրների ուսումնասիրման, ռեվոլյուցիայի (այն ժամանակ այսպես էր կոչվում հեղափոխությունը) բոցաշունչ մարտիկների, ՀամԼԿԵՄ 40-ամյակի, ՀԼԿԵՄ Կենտկոմի որոշումների մասին, հատուկ էջեր են տրամադրվել օրացույցային տոներին՝ մայիսնեկյան, Հոկտեմբերյան հեղափոխության, Հայրենական Մեծ պատերազմում սովետական ժողովրդի տարած հաղթանակի, Լենինի ծննդյան, Հայաստանի սովետականացման, ինստիտուտային կուսակցական և կոմերիտական կազմակերպությունների կոնֆերանսներին: Հիմնականում ուշադրության կենտրոնում են եղել հասարակագիտական ամբիոնների գործունեությունը, ՍՄԿԿ պատմությունն ինքնուրույն ուսումնասիրողների սեմինար պարապմունքները, հատկապես՝ քաղաքապարապմունքները: Ընդարձակ տեղեկատվություն է տպագրվել առաջիկա յոթնամյակում մեր ինստիտուտի հեռանկարների, կուսակցական և կոմերիտական կազմակերպությունների նոր խնդիրների և նոր պարտավորությունների մասին... Ավելի հասկանալի լինելու համար մեջբերենք մի քանի վերնագրեր. «Քաղաքական ուսուցման կազմակերպումը», «Դեպի ՀամԼԿԵՄ 40-ամյակ», «Երեկո՝ նվիրված ՀամԼԿԵՄ 40-ամյակին», «40 տարի հաղթական երթով», «Մեծ Հոկտեմբերի 40-րդ տարեդարձը», «Ինֆորմացիոն հաղորդագրություն ՍՄԿԿ կենտրոնական կոմիտեի պլենումի մասին», «Կոնստիտուցիայի օրը», «ՍՄԿԿ Կենտկոմի 1958 թվականի նոյեմբերյան պլենումի արդյունքները և մեր անելիքները», «Սարքսիզմը և ինքնիշխանի հիմունքների խորն ուսումնասիրությունն ուսանողների առաջնահերթ պարտականությունն է», «Հայաստանի Կենտրոնական Կոմունիստական պարտիային (կուսակցության) և Հայ-կական ՍՍՌ Սինիստրների Սովետին (Նախարարների հորհուրդ) ուղղված ուղերձը ՍՄԿԿ Կենտրոնական Կոմիտեի և ՍՍՍ Սինիստրների Սովետի կողմից», «Հայկական ՍՍՌ Գերագույն Սովե-

տի իններորդ սեսիան», «Վ. Ի. Լենինը և ժողովրդական առողջապահության հարցերը», «Գիտական կոնֆերանս՝ նվիրված ՍՄԿԿ 21-րդ համագումարի որոշումների կենսագործմանը», «Լենինիզմի դրոշով առաջ՝ դեպի կոմունիզմի հաղթանակ», «Կոմունիզմի կառուցման հոյակապ ծրագիրը», «Ուսանողների ցուցաբերած գիտելիքները ՍՄԿԿ պատմությունից»...

Ինչ խոսք, շատ-շատ են անհասկանալի բառակապակցություններն ու հապավումները, բայց սա էր իրողությունը:

### 1960-70 -ական թվականներ

Քանի որ այս տարիները «ԱՊԱԳԱ ԲԺՇԿԻ» կենսագրության լավագույն տարիները չեն, անպատասխանատվության, խմբագիրների փոփոխության պատճառով այս տարիների ոչ բոլոր հավաքածուները կան խմբագրությունում: Սակայն, ի ուրախություն մեզ, պարզվեց, որ այդ տարիներին երբեմն ոչ կանոնավոր լույս տեսած համարները ևս պահպանվել են Ազգային գրադարանի գրապահոցներում: Անկեղծ սասած, այս տասնամյակներին լույս տեսած թերթերը ևս հիմնականում խիստ քաղաքականացված են, և վերնագրերը ոչնչով չեն զիջում 1958-60 թթ. հրապարակումներին: Ուրախալիք, թերևս, այն է, որ պարտադիր նյութերի շարքում կան նաև խորագրեր, որոնք ցույց են տալիս, թե այդ տարիներին իրականում ինչով են ապրել բժշկականի ուսանողները, ինչպես է կազմակերպվել նրանց առօրյան, հանգիստը: Հանրակացարանի և հանրակացարանաբնակ ուսանողների մասին մեծաթիվ նյութերը ցույց են տալիս, որ հանրակացարանաբնակներից պահանջվել է կազմակերպել շաբաթօրյակներ, կարգին վիճակում պահել տարածքներն ու սենյակները: Ներկայացվել են քաղաքատարակների (սրանք շատ նման էին դպրոցական դասղեկներին) այցը հանրակացարաններ, որտեղ կատարված լուսանկարները գովել են օրինակելիներին, պախարակել նրանց, ում սենյակները թափփված են գտել լուսանկարելու պահին: Մեծ տեղ են հատկացվել շինարարական ջոկատների աշխատանքին, ուսանողության մասնակցությանը շինարարական կառույցներին: Այսօրվա ուսանողի համար անհասկանալի՝ «շինարարական ջոկատ» արտահայտության մասին ասենք, որ սա աշխատանքի մի ձև էր, որին մասնակցում էին 2-րդ, 3-րդ կուրսեցիները: Բոլոր բուհերը ամռան ամիսներին (բացի, կարծեմ, ստեղծագործական բուհերից)

# Տարեգրություն

## Ճաշկարգաղ «ԱՊԱԳԱ ԲԺՇԿԻՑ»

ուսանողներից շինարարական ջոկատներ էին կազմում, դասախոսներից ղեկավարներ նշանակում և գործուղում հորիզոնային Միության, հիմնականում Ղազախստանի Հանրապետության



Շինջոկատների մասնակիցները կոչվում էին մարտիկներ: Լուսանկարում՝ մարտիկները պատրաստվում են մեկնել...

տարբեր կառույցներում աշխատելու՝ կառուցելու անասնագույններ, վերանորոգելու դպրոցներ, աշխատելու պահածոների գործարաններում...

Այս առիթուն բավականին շատ են նյութերը: Մեծ տեղ է հատկացվել նաև շեֆական աշխատանքի լուսաբանմանը: Սա նշանակում էր աշխատանք ենթաշեֆ դպրոցների աշակերտների հետ՝ ապահովելով նրանց մասնակցությունը ինստիտուտային միջոցառումներին, ուսանողների այցելություններ ենթաշեֆ դպրոցներ... Այս տարիները համընկնում են սառը պատերազմի առավել ակտիվացմանը և հասկանալի ցուցումով «ԱՊԱԳԱ ԲԺՇԿԻՑ» ևս ներգրավվում է այդ «պատերազմի» մեջ: Մեր երիտասարդության կյանքն առավել մարդասիրական և հետաքրքիր ներկայացնելուն զուգահեռ հաճախակի լույս տեսնել «Ձրույցներ միջազգային թեմաներով», «Քո հասակակիցն արտասահմանում» և նմանօրինակ խորագրերի ներքո գետեղվում են նյութեր, որոնք ամեն կերպ ջանում են ուսանողի մեջ սերմանել այն գաղափարը, որ այստեղ ամեն ինչ լավ է, այնտեղ՝ ամեն ինչ շատ վատ:

### 1980-ական թվականներ

Եիշտ է, 80-ական թվականներին լույս տեսնող հոդվածներում արդեն գերակշռում են ուսման առաջավորներին նվիրված, հե-



Սոցիալիստական մրցության հաղթողները արժանանում էին պատվոգրերի, փոխանցիկ դրոշմերի և եռանկյունի վիմպելների:

տաքրքիր հանդիպումների մասին, ուսանողների ներկայացրած հոդվածներն ուսանողական այս կամ այն միջոցառման մասին, այնուամենայնիվ այդ ամենի հենքը դարձյալ, ցավոք, կոմունիստական գաղափարախոսությունն է: Մշտական գործող խորագրերը կրում են հետևյալ անունները՝ «Կուսակցական կյանք», «Կոմերիտական կյանք», «Լենինյան դասեր», «Լենինյան շաբաթօրյակներ»... Այդ տարիներին հրապարակումների մեծագույն մասը նվիրված է սոցիալիստական մրցությանը, ուսանողների և աշխատողների սոցպարտավորություններին, նրանց քաղաքական ուսուցմանը...

Որպեսզի առավել հասկանալի լինի այդ մրցությունների և սոցիալիստական պարտավորությունների բուն էությունը, ներկայացնում ենք մի քաղվածք 1983 թվականի բժշկական ինստիտուտի պարտավորություններից, որը տպագրված է թերթի այդ տարվա 3-րդ թողարկման մեջ. «Կենսագործելով կուսակցության 26-րդ համագումարի և ՍՄԿ կենտկոմի նոյեմբերյան (1982 թ.) պլենումի որոշումները բժշկական ինստիտուտի կուլեկտիվը 11-րդ հնգամյակի 3-րդ տարվա խնդիրները հաջողությամբ իրագործելու համար ծավալել է սոցիալիստական լայն մրցություն և ընդունում է հետևյալ պարտավորությունները՝ կատարելագործել և առավել արդյունավետ դարձնել ուսանողների և աշխատակիցների շրջանում տարվող քաղաքատիրական աշխատանքը, բոլոր ուժերը և ուշադրությունը կենտրոնացնել յուրաքանչյուր ուսանողի մեջ կոմունիստական աշխարհայացք, ակտիվ կենսագործող շուն և սոցիալական երևույթները ճիշտ գնահատելու հատկություն ձևավորելու վրա, գիտակցական խոր վերաբերմունք ցուցաբերել հասարակական պարտքի նկատմամբ... Ֆակուլտետներում և ամբիոններում աշխատանքի լավագույն դրվածքի համար ծավալել սոցիալիստական լայն մրցություն՝ ակտիվորեն ներգրավելով աշխատանքի նկատմամբ կոմունիստական վերաբերմունք ապահովելու շարժման մեջ»: Պարտավորությունները ընդունված են ինստիտուտի կուլեկտիվի 1982-ի հունվարի 12-ի ընդհանուր ժողովում: Հաջորդ համարում արդեն սոցիալիստական մրցության հաղթողների ցուցակն է տպագրված: Ժամանակի կարևորագույն երևույթներից մեկը ուսանողների աշխարհայացի ընդլայնմանը, նրա հասարակական ակտիվությանը, 2-րդ մասնագիտության ձեռքբերմանը միտված մեկ այլ օղակի՝ ՀՄՖ-ի գործունեությունն է: Եթե ցանկանում ենք «ԱՊԱԳԱ ԲԺՇԿԻՑ» թերթի բժշկական համալսարանի պատմությունը ճանաչելու միտումով, ապա կարելի է ուրախությամբ նշել, որ անգամ ամենաառաջին համարներից կարող ենք տեղեկանալ այն ամենի մասին, ինչ մեզ հետաքրքրում է՝ ե՞րբ են կառուցվել այն ժամանակի համար նոր մասնաշենքերը, ովքե՞ր են եղել մեր լավագույն ուսանողները, որոնք այօր հիմնականում կազմում են մեր դասախոսական կազմը, մեր երախտավորների գործունեության մասին, երբ նրանք ղեռ երիտասարդ էին, ե՞րբ են առաջին ուսանողական խմբերը մեկնել արտասահման՝ պրակտիկայի, ինչպիսի՞ սպորտային հաջողություններ են ունեցել մեր ուսանողները, դասախոսները, ինչպե՞ս է կազմակերպվել ուսանողների մշակութային հանգիստը, անվանի արվեստագետ-մտավորականներից ովքեր են եղել բժշկականի ուսանողների և դասախոսների հյուրերը և այլն, և այլն:

# Տարեգրություն

## Տաղկաքաղ «ԱՊԱԳԱ ԲԺՇԿԻՑ»

**Մեջբերումներ, քաղվածքներ,  
մեկնաբանություններ...  
1983 թվական**

Ներկայումս ինստիտուտում բեղմնավոր գիտահետազոտական և դասախոսական աշխատանք են կատարում ՍՄՀՍ գիտությունների ակադեմիայի Դայկական ՍՄՀ Գիտությունների ակադեմիայի 6 թղթակից անդամներ, գիտությունների 78 դոկտորներ և 285 թեկնածուներ: Տարիներ շարունակ խախտվել է գիտամանկավարժական կադրերի համաչափ ընտրությունն ու տեղաբաշխումն ըստ ամբիոնների և գիտահետազոտական լաբորատորիաների: Եվ ստացվել է այնպես, որ մի շարք ամբիոններում իրար կողքի աշխատում են մի քանի դոկտոր-պրոֆեսորներ, իսկ զգալի թվով ամբիոններ էլ, նման կադրեր չունենալով, ղեկավարվում են գիտությունների թեկնածու-դոցենտների կողմից: Անհանգստացնող վիճակ է ստեղծվել գիտամանկավարժական կրտսեր և միջին անձնակազմի համամասնության գործում՝ 120 ասիստենտների առկայության պայմաններում դոցենտի պաշտոն են վարում 121 աշխատակիցներ, ընդ որում ասիստենտներից գիտական աստիճան ունեն միայն 65-ը, իսկ 26 ավագ դասախոսներից՝ միայն 4-ը: Ստահոգիչ է նաև այն հանգամանքը, որ այդ ասիստենտների և ավագ դասախոսների մեծ մասը չի զբաղվում գիտական աշխատանքներով: Կարգային հարցը ոչ բարվոք վիճակում է գտնվում ինստիտուտի ամենաերիտասարդ ֆակուլտետներում՝ ստոմատոլոգիականում և ղեղագործականում: Բուժական ֆակուլտետի ամբիոններից կարգային տեսակետից ոչ բարվոք վիճակում է գտնվում նորմալ անատոմիայի ամբիոնը՝ ամբիոնի դոցենտների և ասիստենտների միջին տարիքը անցնում է 60-ից: Վատ են օգտագործվում նպատակային ասպիրանտուրայի, ինչպես նաև գիտամանկավարժական կադրերի որակավորումը բարձրացնող մյուս եղանակների հնարավորությունները: Կուսկոմիտեում մանկավարժական կադրերի պատրաստման հարցը քննարկվելուց հետո հաստատվեց համապատասխան պլան, որի արդյունքում 2 տարվա ընթացքում 8 ասպիրանտներ գործուղվեցին Սովետական Միության գիտական կենտրոններ՝ ամատոմիա, ինֆեկցիոն հիվանդություններ, դեղերի տեխնոլոգիա, օրթոպեդիկ ստոմատոլոգիա, սոցիոգիենա, երեխաների և դեռահասների հիգիենա մասնագիտությունների գծով: Գործնական կիրառություն են ստացել ամբիոնների աշխատակիցների երկարաժամկետ գործուղումները երկրի (երկիր ասելով ի նկատի ունենին Խորհրդային Միությունը: Ի դեպ՝ 80-ական թվականներին սկսեցին շրջանառվել մի քանի բառերի հայերեն տարբերակները. Սովետական սոցիալիստական ռեսպուբլիկաների միությունը (ՍՍՌՍ) դարձավ Խորհրդային սոցիալիստական հանրապետությունների միություն (ԽՄՀՍ) գիտական կենտրոններ:

Գիտությունների թեկնածուների և դոկտորների պատրաստման պլանի համաձայն ներկայումս ինստիտուտում կատարման ընթացքի մեջ են 56 թեկնածուական և 18 դոկտորական դիսերտացիաներ: Ցավոք, այդ աշխատանքները մեծ մասամբ կատարվում են այն ամբիոններում, որտեղ չկա կարգային ռեզերվի պրոբլեմ: Գիտամանկավարժական կադրերի որակավորման բարձրացման կարևոր մեթոդներից մեկը ամբիոնի աշխատակիցների՝ ասիստենտից մինչև վարիչը, գործուղելն է որակավորման բարձրացման ֆակուլտետներ: Ան-

ցած ուսումնական տարում նման միութենական ֆակուլտետներ են գործուղվել 38 դասախոսներ, որոնցից 7-ը՝ ամբիոնի վարիչներ: ՍՄՀԿ Կենտրոնի նոյեմբերյան պլենումի որոշման լույսի ներքո բժշկական ինստիտուտի կուսակցական կոմիտեի քննարկումը վերաբերում էր պետական և աշխատանքային կարգապահության վիճակին, որը, ըստ պարտկոմիտեի քարտուղար Զ. Ղ. Գևորգյանի հայտարարության, չի համապատասխանում այսօրվա բարձր պահանջներին, քանզի, ինչպես սրությամբ ընդգծեց պլենումը. «... որակյալ, արտադրողական աշխատանքն ու ձեռներեցությունը պետք է խրախուսվի, խթանվի, և, ընդհակառակն, վատ աշխատանքը, անգործությունը, անպատասխանատվությունը պետք է անկասելի կերպով անդրադառնան թե՛ աշխատողների նյութական վարձատրության, թե՛ նրանց պաշտոնական դիրքի, թե՛ բարոյական հեղինակության վրա»:

Տարիների հեռվից հստակ է դառնում այն հանգամանքը, որ կամաց-կամաց սկսվում է մինչ այդ եղած քարացած դրզմաների խարխուլումը: Պլանավորված պետական տնտեսության կարծրատիպերի մեջ ակնարկվում է ձեռներեցությունը, որը ժամանակին ծնեց ցեխավիկներին, հետո արդեն՝ սեղանիկներ ու նեցողներին...

«Ջնգամյակի 2-րդ տարում մեր կուլեկտիվը որոշակի հաջողությունների հասավ բազմաթիվ ուղղություններում...

Լավ արդյունքներ են գրանցվել գիտահետազոտական աշխատանքների բնագավառում,- նշում է 1982 թվականին սոցպարտավորությունների կատարման արդյունքների մասին զեկուցմամբ հանդես եկող տեղկոմի նախագահ պրոֆ. Վ. Շեկոյանը,- 1982-ին գրանցվել է 72 ներդրում, այդ թվում՝ 5 հեղինակային վկայական, 25 ռացիոնալիզատորական առաջարկություն, 28 մեթոդական երաշխավորություն, 2 դասագիրք, 8 մենագրություն:

Մեր ուսանողները հաջողությամբ աշխատեցին Երևան-Հրազդան երկաթգծի շինարարությունում, Մասիսի, Հոկտեմբերյանի պահածոների գործարանում և այլուր:

Ինչպես ցույց են տալիս պարբերաբար կազմակերպվող ստուգումները դեռևս առանձին բաժիններում նկատվում են աշխատանքային կարգապահության խախտման դեպքեր: Դարցի կարևորությունն առավել ձևով մեծանում է ներկայումս, երբ նոյեմբերյան պլենումում ուղղակիորեն պահանջվեց անհանդուրժողական մթնոլորտ ստեղծել բոլոր տեսակի կարգապահական խախտումների նկատմամբ, աշխատանքից անհարգելի ձևով բացակայելը, ուշանալն ու ինքնական հեռանալը դիտել որպես արտակարգ պատահար, անուշադրության չմատնել կարգ ու կանոնի խախտման որևէ դեպք:

Անդրոպովյան ժամանակներն էին...

Այդ օրերի համար սովորական էր փողոցում մեկին կանգնեցնելը՝ պարզելու, թե որտե՞ղ է աշխատում և ինչո՞ւ է աշխատանքային այս ժամին փողոցում: Ընդմիջումն ավելի վաղ սկսելը և բավականին ուշ ավարտելը, այդ ընթացքում հիմնականում խանութից խանութ «համաժողովրդական երթին» մասնակցելը, որևէ օգտակար բան գտնելու, այն գնելու համար դարձել էր ամենօրյա զբաղմունք: Սա այն ժամանակն էր, երբ մենք գնում էինք այն ամենը, ինչը, եթե ոչ այդ պահին, կարող էր հետագայում պետք գալ:

# Տարեգրություն

## Ճաշկարգաղ «ԱՊԼԳԱ ԲԺՇԿԻՑ»

Սա այն ժամանակն էր, երբ կարող էին կինոդահլիճում ֆիլմի ցուցադրության ժամանակ աշխատանքային ժամերին միացնել լույսը՝ դադարեցնելով ֆիլմի ցուցադրությունը, պարզելու, թե աշխատանքային ժամերին ովքեր են անկարգապահություն թույլ տալիս: Կամ, որն ավելի արտառոց էր, օդանավակայանում ստուգում էին՝ ովքեր են առանց գործուղման կամ հատուկ թույլտվության որևէ տեղ մեկնում՝ աշխատանքային կարգապահությունը խախտելով:

Կարգապահության առնչությամբ «Ո՞ր ժամին ստանալ աշխատավարձը» խորագրի տակ իր առաջարկությունն է ներկայացնում մաշկավեներական հիվանդությունների ամբոնի վարիչ, պրոֆ. Է. Դանիելյանը՝ նշելով, որ աշխատավարձ ստանալու համար ամեն ամսվա մեջ երկու անգամ (ի դեպ, այդ տարիներին աշխատավարձ տրվում էր 2 կեսով՝ առաջինը՝ ավանսի, երկրորդը՝ աշխատավարձի տեսքով) աշխատակիցները մեկերկու ժամ շուտ են դուրս գալիս ամբիոնից, որպեսզի հասնեն ինստիտուտ մինչև դրամարկղի փակվելը: «Հաճախ, մինչև ամբիոնի աշխատակցի ինստիտուտ հասնելը դրամարկղում դրամը վերջանում էր, և նա ստիպված էր լինում աշխատավարձ ստանալու համար ժամանակ կորցնել նաև հաջորդ օրը: Եթե դա ենթարկենք հաշվարկման ընդգրկելով նման հեռավորության վրա գտնվող բոլոր ամբիոնները, պապ առանց դժվարության կարելի է պատկերացնել հսկայական չափերի հասնող աշխատանքային այն ժամանակը, որ կորչում է ամեն 15 օրը մեկ», - ավելացնում է հողվածագիրը և առաջարկում այս վիճակից դուրս գալու ճանապարհները՝ զանազապահին ուղարկել հեռավոր տեղամասեր կամ հանձնարարել զանազապահին աշխատավարձի օրերին աշխատել այնքան տևական, որպեսզի հեռավոր ամբիոնների աշխատողները կարողանան ինստիտուտ հասնել՝ դուրս գալով ամբիոններից աշխատանքը վերջացնելուց (ժամը 15:00-ից) հետո:

ՍՄՅՍ առողջապահության մինիստրության որոշմամբ՝ փետրվարի 1-ից բժշկական ինստիտուտների նախապատրաստական բաժանմունքներում և 1-3-րդ կուրսերում մտցվում է պրակտիկա, որն իրականացվելու է ուսումնական ողջ տարվա ընթացքում, հետևյալ կերպ՝ նախապատրաստական բաժանմունքների և 1-ին կուրսերի համար՝ ամիսը 1 անգամ, իսկ 2-րդ և 3-րդ կուրսերի համար՝ ամիսը 2 անգամ, 4-ժամյա տևողությամբ, որն ավարտվում է յուրաքանչյուր կիսամյակի վերջում՝ ստուգարքային գրքույկում նշվող ստուգարքով: Պրակտիկայի բազաներ են ընտրվել և հաստատվել Հանրապետական կլինիկական հիվանդանոցը, Շտապօգնության 1-ին և 1-ին ու 4-րդ կլինիկական հիվանդանոցները: Հայկական առողջապահության մինիստրության որոշմամբ նշված բուժօգնությունների գլխավոր բժիշկները պատասխանատու են պրակտիկայի կազմակերպման և անցկացման համար: «Սովետական երկրի մեծագույն նվաճումների հիմնական պայմաններից մեկը եղել է կազմակերպվածությունը, պետական, աշխատանքային և արտադրական խստագույն կարգապահությունը: Կոմունիստական հասարակարգ կառուցող մարդկանց առջև խնդիր է դրվում քանզի գնահատել յուրաքանչյուր ժամն ու րոպեն», - հավանություն տալով գաղափարախոսական ճակատի աշխատողներին ուղղված «Բաց նամակին» պրոֆ. Ա.Ս.Բաղմանյանը հանդգնում է հայտնում, որ գիտակցական կարգապահության և կազմակերպվածության ամրապնդումը անպայման ցանկալի արդյունք կտա:

Ինստիտուտի 61-րդ գիտական նստաշրջանն արձանագրեց, որ գնալով ավելի նկատելի են դառնում կոմպլեքս հետազոտությունների արդյունքները, այդ գործում իր դրական ազդեցությունն է թողնում գիտահետազոտական աշխատանքների և գիտական մտքի կորդինացիան: Ընդհանուր ծավալի մեջ աճում է հիմնարար հետազոտությունների տեսակարար կշիռը: Պրակտիկ ներդրումների թիվը 1982-ին հասել է 72-ի, որոնցից 15-ը միութենական նշանակության:

*Նախորդ ուսումնական տարում ուռուցքաբանության ամբիոնը լավ նվեր ստացավ: Ակադեմիկոս Վ.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության և ռենտգենաբանության նորակառույց ինստիտուտի շենքում տրամադրվեց նոր կլինիկա՝ իր կաբինետներով և դասասենյակներով: Որպես ուսումնական բազա ուսանողներին են տրամադրվել այն լաբորատորիաները և բաժանմունքները, որոնք անթերի լրացնում են ուսումնական ծրագրով նախատեսված պլաններն ու ծրագրերը:*

Ուսանողական ամռան ընթացքում ուսանողների աշխատանքային գործունեության մասին է «Հիշելով այն օրերը» վերնագրով նյութը, որի հեղինակ Գայանե Սիմոնյանը ներկայացնում է Մասիսի պահածոների գործարանում իրենց աշխատանքը, ըստ որի աշխատանքային օրերը շինջոկատում անցել են չափազանց ուրախ, փոխադարձ հանդիպման երեկոներով, կուլեկտիվ դիտումներով, բանավեճերով, շաբաթօրյակներին մասնակցությամբ:

Իսկ խմբի տղաները մասնակցում էին Իջևան-Երևան երկաթգծի շինարարությանը՝ նշում է մանկաբուժության ֆակուլտետի 320 խմբի ուսանողը:

*«Նոր կիսամյակն արդեն ընթացքի մեջ է: Այն թարմ շունչ է մտցրել բոլոր 2-րդ կուրսեցիների շրջանում՝ 1-ին դասերը հիվանդանոցում, 1-ին շփումը հիվանդի հետ, 1-ին անամնեզը, 1-ին վիրակապությունը: Ուսանողները մեծ ուրախությամբ ընդունեցին արտադրական պրակտիկայի մասին լուրը, որը, ցավոք, մեր կուրսի համար այնքան էլ լավ չի կազմակերպվում: Եվ դրանում առաջին հերթին մեղքը Հանրապետական հիվանդանոցի աշխատակիցներինն է, որի շատ բաժանմունքներում նույնիսկ գաղափար չունեն վերջինիս մասին: Մենք հաճախ 4 ժամ անգործ նստում ենք բաժանմունքներում կամ էլ՝ պարզապես տուն գնում: Նոր կիսամյակի բերած հոգսերից մեկն էլ անհրաժեշտ դասազրբեր ստանալն է, որը հաճախ վերածվում է պորբլեմի: Ենթադրենք՝ ուզում ես հանձնել անցած կիսամյակի գրքերը, դրանցից ինչ-որ մեկը ետ չեն վերցնում, քանի որ այդ գրքի քարտը քո տոմսի մեջ չէ: Դրա փոխարեն մեզանից պահանջում են այնպիսի գրքեր, որոնց անունն անգամ չենք լսել: Ստիպված պետք է վճարես «կորցրածդ» գրքի հնգակի արժեքը: Իսկ ի՞նչ պետք է լինի այն գրքի հետ, որը քեզանից չվերցրեցին: Ըստ երևույթին նրա համար, որպես կորցրած գրքի, կվճարի մեկ այլ անհաջողակ ուսանող, որի տոմսում «հայտնվել է» այդ գրքի քարտը: Դեպքերը եզակի չեն, ավելին՝ մասսայական բնույթ են կրում: Իսկ մինչև դու երկընտրանքի մեջ ես՝ վճարել այդ բավականին մեծ գումարը, թե փորձել վերականգնել ճշմարտությունը, գրադարանում արդեն վերջանում է անհրաժեշտ գրականությունը, որը, որպես կանոն, ավելի քիչ է լինում, քան ուսանողներին անհրաժեշտ է», - հողվածում նշում է*

# Տարեգրություն

## Ճաշխարհի «ԱՊԱԳԱ ԲԺՇԿԻՑ»

բուժական ֆակուլտետի հայկական բաժնի 2-րդ կուրսի ԼԿԵՄ բյուրոյի քարտուղարի տեղակալ, կուրսի ՈՒՂՅ նախագահ Գագիկ Անդրեասյանը:



Արտասահմանցի ուսանողների՝ Մոսկվայում կայանալիք Համամիութենական փառատոնին մասնակցելու իրավունք ստանալու համար երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում տեղի ունեցավ փառատոն, որին մասնակցեցին նաև մեր ինստիտուտի արտասահմանցի ուսանողները:

Ենթաշեֆ դպրոցների աշակերտների հետ տարվող աշխատանքները ամփոփվեցին «Ուսանողական գարուն» փառատոնի՝ շեֆական աշխատանքներից մկիրված օրվա միջոցառման ժամանակ:

Մայրաքաղաքի Նաիրի Ջարյանի անվան միջնակարգ դպրոցի աշակերտների հետ տարվող աշխատանքների

դրսևորումներից մեկը դպրոցում գործող «ԱՊԱԳԱ ԲԺՇԿԻՑ» խմբակի անդամներին բժշկական ինստիտուտում հյուրընկալելն էր, որի ընթացքում ֆիզիոլոգիայի, սոցիոլոգիայի և առողջապահության կազմակերպման ամբիոններում աշակերտները ծանոթացան ամբիոններին՝ ստանալով իրենց հետաքրքրող բազմաթիվ հարցերի պատասխաններ: Ամբիոնների աշխատակիցները երեխաներին պատմեցին բժշկության հիմնադիրների և հին ձեռագրերի վերծանման ուղղությամբ մատենադարանում տարվող աշխատանքների մասին: Աշակերտները ինստիտուտից հեռացան վառ տպավորություններով՝ նորից ինստիտուտ

յան փողոցն ընկած հատվածում: Մոսկովյան փողոցից մինչև Սայաթ-Նովայի պողոտան ընկած Աբովյան փողոցի 2 կողմերի մայթերն էին մաքրում և զազոնների հողն էին փխրեցնում մանկաբուժական, դեղագործական ֆակուլտետների ուսանողները և նախապատրաստական բաժնի ունկնդիրները:

«Կապիտալի աշխարհում», «Աշխարհի երիտասարդությունն ընդդեմ միջուկային սպառնալիքի», «Քո հասակակիցն արտասահմանում» խորագրերի ներքո տպագրված նյութերը ներկայացնում են արտասահմանի ուսանողության կյանքը այնպիսի գույներով, որոնք սարսափ են առաջացնում:

Գրադարանային խորհրդի ներկայացրած հողվածում, որպես գրադարանին օգնելու լավագույն օրինակ, նշվում է օտար լեզուների ամբիոնի նախածեռնությունը, ըստ որի ամբիոնի վարիչի հանձնարարությամբ ուսանողի ստուգման գրքույկում ստուգարքի կամ քննության գնահատականը նշվում է դասագիրքը գրադարան հանձնելուց հետո:

Նշվում է նաև, որ գրադարանի ֆոնդը բաղկացած է 300.000 կտոր գրականությունից, որից միայն ուսումնական ֆոնդը 100.000 է, գիտականը՝ 150.000, զեղարվեստականը՝ 50.000:

Մայիսյան N 16 թողարկումից մեզ հայտնի է դառնում, որ ինստիտուտում դեռևս գործում են բուժական ֆակուլտետի 2 բաժիններ՝ հայկական և ռուսական:

1983 թվականի մայիսին «ԱՊԱԳԱ ԲԺՇԿԻՑ» նշել է իր 25-ամյակը՝ ժամանակի համար շատ հնչել էլենինյան պատգամով՝ թերթը ոչ միայն կոլեկտիվ ագիտատոր է և կոլեկտիվ պրոպագանդիստ, այլև՝ կոլեկտիվ կազմակերպիչ...

Սա էր այն պահանջը, որ ժամանակին առաջադրվում էր մասնուլի օղակներին առանց բացառության՝ և՛ հանրապետական, և՛ բուհական: Սեպտեմբերյան թողարկումը նշում է ՀՍՀ-ի 10-ամյա հորեյանի մասին: Արդեն անցյալ դարձած այս երևույթը նպատակ ուներ կոմերիտական, արհմիութենական ակտիվիստի, ժուռնալիստիկայի, երիտասարդ դասախոսի, զեղանկարչության, կինո սիրողի, թարգմանիչ-էքսկուրսավարների, պարահանդեսային պարերի, սպորտ հրահանգչական, արվեստագիտության, հին հայերենի (գրաբար) բաժիններում 2-րդ մասնագիտություն տալ ապագա բժիշկ-շրջանավարտներին, ովքեր ուսուցումն այս ֆակուլտետում ավարտում էին դիպլոմային աշ-



Շաբաթօրյակները տեղի էին ունենում տարվա մեջ մի քանի անգամ: Ամեն անգամ՝ նոր դույլեր, բահեր, ավելներ... նաև՝ զարմանալի տրամադրություն:

զալու մեծ ցանկությամբ: Համաքաղաքային շաբաթօրյակին աշխատանքային ոգևորությամբ մասնակցելու մասին լրատվության մեջ նշվում է սանիտարահիգիենիկ և ստոմատոլոգիական ֆակուլտետների ուսանողները պետք է աշխատեն ինստիտուտին հարող շրջակայքում և Մոսկովյան փողոցի՝ Աբովյան փողոցից մինչև Նալբանդ-



Պարապմունք՝ հասարակական պարապմունքների ֆակուլտետի զեղանկարչության բաժնում

# Տարեգրություն

## Ճաշկարգաղ «ԱՊՐԵՍ ԲԺՇԿԻՑ»

խատանքների պաշտպանությամբ:

Քաղուսուցման ցանցը կազմում էր գաղափարական աշխատանքների ողնաշարը: Անընդհատ փնտրվում էին ուղիներ այդ օղակուն տարվող աշխատանքների որակն ու արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ: Սովորաբար աշխատանքային ժամերից հետո տեղի ունեցող քաղաքապատմունքներին անհարգելի պատճառով չմասնակցելու արդյունքում սպասվող խիստ պատիժները ստիպում էին մասնակցել այն պարապմունքներին, որտեղ պետք է քննարկվեին և ուսումնասիրվեին այդ օրերին լրատվական բոլոր միջոցներով, հեռուստատեսությամբ, ռադիոյով ներկայացվող քաղաքական որոշումները:

Շինջուկատում ընդգրկված 40 մարտիկներին (խոսքը բժշկական ինստիտուտի 2-րդ կուրսի տղաներից կազմված ուսանողական շինարարական ջոկատներից մեկի մասին է, որն ամառային քննաշրջանն անցկացրեց Լենինական (ներկայումս՝ Գյումրի) քաղաքում) հանձնարարված էր իրագործել 84.000 ռուբլու շինմոնտաժային աշխատանք, որը կատարվել է լիովին, ժամկետից 5 օր շուտ: Ամենահիշարժանը եղել են հարվածային աշխատանքի օրերը՝ հուլիսի 20-ը, օգոստոսի 5-ը և 17-ը, որոնց աշխատավարձը՝ 750-ական ռուբլի, փոխանցվեց երիտասարդական և պիոներական ճամբարների վերանորոգման, վերակառուցման և իմպերիալիզմի դեմ պայքարող երկրների երիտասարդությանը օգնելու ֆոնդերին:

Ի դեպ՝ մեր ուսանողները ոչ միայն մասնակցում էին որպես շինարարներ, այլև մյուս բուհերի ջոկատների կազմում՝ որպես բուժակներ:

4-րդ կուրսի ավարտից հետո արտադրական պրակտիկայի անցկացումը սոցիալիստական լազերի դեմոկրատական երկրներում դարձել է սովորական: Կուրսի լավագույն ուսանողները՝ 10-15 մարդ, դասախոսի ղեկավարությամբ իրենց պրակտիկական անցկացնում են այդ երկրներում՝ միաժամանակ ծանոթանալով երկրին:

Թերթում ամենաշատը հանդիպող նյութերը նվիրված են ուսանողների գաղափարական դաստիարակությանը և այդ գործում բուհերի հասարակագիտական ամբիոնների դերին:

Այդ օրերին չափազանց մեծ մասսայականություն վայելող համաքաղաքային միջոցառման՝ «Էրեբունի-Երևան» տոնահանդեսին մեր ինստիտուտի մասնակցության մասին հորվածները ներկայացնում են այն խանդավառությունը, որով անցնում էին քաղաքի ծննդյան օրվան նվիրված միջոցառումները:

1983 թվականի ամենապարբերաբար կրկնվող միջոցառումներից էին հակապատերազմական միտինգները: Նույն շնչով շարունակվել է կյանքը մինչև 1988 թվականը, այդ պատճառաբանությամբ մենք սկսում ենք թերթել 88-ի հավաքածուն...

Դեռևս մեծ մասսայականությամբ, կուսակցության ղեկավարների մեծադիր նկարներով անցկացվող շքերթերը՝ նվիրված աշխատավորի միջազգային օրվան՝ մայիսի 1-ին, հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակին՝ նոյեմբերի 7-ին՝ անցնում էին «մեծ ոգևորությամբ», պարտադիր մասնակցությամբ՝ անկախ եղանակից:



Բժշկական համալսարանի ղեկավարությունը, դասախոսները և ուսանողները տարին երկու անգամ շքերթի էին դուրս գալիս՝ մայիսի 1-ին և նոյեմբերի 7-ին: Թե՛ն՝ շարասյուները հարակից փողոցներում երկար էին սպասում Լենինի հրապարակ իրենց մտնելու հերթին, սակայն երիտասարդության համար այդ սպասման ժամերը և քայլ առ քայլ մոտենալու ողջ ընթացքը վերածվում էր հետաքրքիր խաղերի, սրամտությունների, կատակների հանդեսի: Ամենատարածվածը այդ իրավիճակում «աղջիկ փախցնոցին» էր, որի երկար շարքերը միավորում էին ամենատարբեր բուհերի ուսանողներին և ամենակարևորը՝ ուսանողուհիներին...

### 1988 թվական


Օրերս Երևանի բժշկական ինստիտուտում մեծ հանդիսավորությամբ նշվեց հայ միջնադարյան բժշկության հիմնադիր Մխիթար Ջերացու ծննդյան 870-ամյակը: Սակայն բժշկապետին նվիրված տոնակատարությունը միջոցառման մի կողմն էր միայն: Կար նաև մյուսը, թերևս ամենակարևորը, որի հետագիծը տանում է դեպի նստացույցեր և հացադուլներ, սեպտեմբերյան թե՛ ու լարված օրեր: Զենց այդ օրերին էր, որ ապագա բժիշկները հանդես եկան իրենց ինստիտուտը Մխիթար Ջերացու անունով կոչելու պահանջով: Դեռևս 20 տարի առաջ, երբ նշվում էր Ջերացու 850-ամյակը, նմանատիպ առաջարկը լճացման տարիների ամենագոր ուժը կանխել էր, տալով որակումներ՝ շովինիստական, նացիոնալիստական: Առաջարկությունն արված է, խոսքը Մինիստրների Սովետին է: Թող այնպես լինի, որ հաջորդ ուսումնական տարվա առաջին կուրսեցիները երդման արարողության ժամանակ հպարտությամբ արտաբերեն.

# Տարեգրություն

## Ճաշկարգի «ԱՊԱԳԱ ԲԺՇԿԿ»

«Դառնալով Երևանի Մխիթար Հերացու անվան բժշկական ինստիտուտի ուսանող...»:

1989 թվականի մայիսի 29-ին Հայկական ԽՍՀՄ Մինիստրների Խորհուրդը՝ ընդունելով Առողջապահության Մինիստրության առաջարկությունը, կայացնում է իր որոշումը՝ «Աշխատանքային Կարմիր դրոշի շքանշանակիր Երևանի պետական բժշկական ինստիտուտը վերանվանել՝ Աշխատանքային Կարմիր դրոշի շքանշանակիր Մխիթար Հերացու անվան Երևանի պետական բժշկական ինստիտուտ»:



Տարին մոտենում էր ավարտին, երբ տեղի ունեցավ մեծ արհավիրքը՝ մինչև այսօր մնալով մեր մշտամորմոք վերքը: Սպիտակի երկրաշարժը ցնցեց ոչ միայն հողը, այլև մեր հոգիները: Բնականաբար այս օրերին մամուլը, այդ թվում նաև «ԱՊԱԳԱ ԲԺՇԿԿ», առկա զրաքննության պայմաններում չէր կարող որևէ բան տպագրել Արցախում ծնունդ առած անկախության պայքարի մասին, սակայն Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 71-րդ տարեդարձի օրվա նոյեմբերյան շքերթը ներկայացնող մի լուսանկար, այնուամենայնիվ տպագրվել է, որտեղ պլակատներից մեկի վրա գրված է Դարաբաղի պահանջի մասին: Այս լուսանկարը պատմական նշանակություն ունի: Ճիշտ է ներքուստ անգամ շատ պաշտոնյաներ համամիտ էին հայոց համազգային շարժման ղեկավարների, նրանց հիմնական գաղափարների հետ, սակայն կուսակցական կարգապահությունը ստիպում էր նրանց այդ օրը հրապարակ գալ ընդունված լուսանկարով կեցցե՛ Հոկտեմբերյան հեղափոխությունը... Հրապարակ մտնող 2-րդ շարասյունը շեփորականչով էր մտնում հանրապետության գլխավոր հրապարակ: Եվ ստացվել էր այնպես, որ իրար հանդիպած 2 շարքերը դեռ չգիտեին անգամ, թե ո՞րն է առաջինը մտնելու Լենինի անունը կրող կենտրոնական հրապարակ: Լուսանկարի մակագրությունը ներկայացնում է. «1988 թվական, նոյեմբերի 7: Սովետական Հայաստանի մայրաքաղաքի զարդարանքում չի զգացվում առաջվա ավելորդ պարծենկոտությունը, չկան հավակնոտ կոչեր: Հրապարակում նաև հազարավոր ցուցարարներ են, ովքեր կոչ են անում պայքարել հանուն շրջակա միջավայրի մաքրության, պահանջում փակել վնասակար քիմիական արտադրու-

թյունները, շուտափույտ վերամասնագիտացնել Հայաստանի ատոմային էլեկտրակայանը, ռացիոնալ օգտագործել հանրապետության հողային ռեսուրսները»: Ցուցարարները տանում են բազմաթիվ ցուցապաստառներ, պլակատներ, որոնցով պահանջում են Լեռնային Դարաբաղի պրոբլեմի արդարացի լուծում... Նրանք դատապարտում էին Սունգայիթում հայ բնակչության դեմ կատարված չարագործությունները, պահանջելով սովետական օրենսդրության շրջանակներում ըստ արժանվույն պատժել հանցավոր գործողությունների կազմակերպիչներին: Նույն համարում տպագրված է նաև ինստիտուտի ուսանողության կոչը սունգայիթյան իրադարձությունների առիթով: Դեկտեմբերի 7-ի արհավիրքի մասին ընդարձակ հրապարակումներից, իրավիճակը ներկայացնող լուսանկարներից բացի տպագրվել է նաև ՍՄՀՄ առողջապահության մինիստր ակադեմիկոս Եվգենի Չագովի բնորոշումը երկրաշարժի օրերին հայ բժիշկների ցուցաբերած իրոք հերոսական վարքագծի մասին: Որից հետո նրանց միացան ամբողջ սովետական երկրի բժիշկները, եկան նաև կուլեգաներ աշխարհի բազմաթիվ երկրներից: Առաջին օրերին հայ բժիշկների կողքին կանգնեցին նաև մեր ուսանողները: Վեղ արհավիրքի առաջին իսկ օրերին մեր ինստիտուտի ավելի քան 800 ուսանողներ իրենց վարքով ապացուցեցին, որ իզուր չեն ընտրել այդ մասնագիտությունը՝ նշում է թերթը:

Այս աղետի պատմական նշանակությունը կայանում է նրանում, որ Հայաստանում կտրվեց ԽՍՀՄ-ը շրջափակող այն հզոր շղթայի առաջին օղակը, որը սովետների երկրի սահմանները ամուր փակում էր աշխարհի առաջ: Երկրաշարժի առաջին իսկ օրերին ինքնաթիռների անարգել մուտքը Հայաստան եկավ ցույց տալու, որ երկաթյա վարագույրը պատռվեց...

1988-ին «ԱՊԱԳԱ ԲԺՇԿԿ» թերթը նշել է իր 30-ամյակը:



«ԱՊԱԳԱ ԲԺՇԿԿ» մի քանի անգամ փոխել է ֆորմատը (թերթի չափսերը): Կարևորն այն է, որ ցանկացած չափսերով այն դուր է եկել իր ընթերցողին:

### 1989 թվական

Այս թվականի հավաքածուն սկսվում է Սովետական ժողովրդին ՍՄԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղար, ՍՄՀՄ Գերագույն Սովետի նախագահ Մ. Ս. Գորբաչովի ամանորյա դիմումով, որում մասնավորապես նշվում է. «Սկսվող տարին չի խոստանում և չի կարող լինել անպրոբլեմ, սպասվում են զգալի թվով լուրջ գործեր և հոգսեր: Մենք տեսնում ենք, որ այսօր հարկավոր է գործել ավելի մեծ վճռակալությամբ: Անկարելի է խորամանկել կյանքի հետ, նստած մնալ ճամփեզրին: Մենք երկմային



# Տարեգրություն

## Ճաշկարգաղ «ԱՊԱԳԱ ԲԺՇԿԻՑ»

մանանա չենք սպասում և չենք խոստանում, լավ գիտենք, որ ճանապարհը դժվար է...»:

Այն ժամանակ ոչ մեկի համար պարզ չէր՝ ի՞նչ ճանապարհի մասին է խոսքը, և ի՞նչ է սպասվում ԽՍՀՄ-ին:

Թերթից տեղեկանում ենք, որ հունվարի 7-ին կայացած Երևանի քաղաքային կուսակցական կազմակերպության պատգամավորներն իրենց շնորհակալություն են հայտնում Ս. Ս. Գորբաչովին և Ն. Ի. Ռիժկովին՝ Հայաստանի ատոմային էլեկտրակայանը կանգնեցնելու որոշման համար, փաստն ընկալելով իբրև հայ ժողովրդի ճակատագրի նկատմամբ կուսակցության կենտկոմի և Սովետական կառավարության կողմից ցուցաբերվող հոգատարության ևս մեկ ցայտուն դրսևորում:

Այս օրերին շրջանառվեց «լճացման տարիներ» արտահայտությունը, որպես մեր ապրած խորհրդային կյանքի վերջին տարիների գնահատական, և խնդիր դրվեց առավել լրջությամբ վերաբերվել վերակառուցմանը, որը, ինչպես հետո պարզ դարձավ, ոչ այլ ինչ էր, քան Սովետական Միության փլուզում:

«Մենք գոհունակությամբ նշում ենք, որ այն կարևորագույն խնդիրներից մեկը, որ առաջադրվեց Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի 1988 թվականի սեպտեմբերյան պլենումի կողմից, առավել շուտ է իրագործվում, քան նախատեսվում էր:

Դրա հետ մեկտեղ հանրապետության անխափան էներգամատակարարման ապահովման գործում բարդ պրոբլեմներ են առաջանում: Եթե արդեն հիմա չձեռնարկվեն կենցաղում և արտադրության մեջ էլեկտրաէներգիայի տնտեսման, էներգետիկ կարողությունների մեծացման օպերատիվ միջոցներ, Հայաստանի ատոմակայանի վաղաժամկետ կանգնեցումը կարող է զգալի դժվարություններ առաջացնել հանրապետության և ամբողջ Անդրկովկասի ռեզիոնի ժողովրդական տնտեսությանն և բնակչությանը էլեկտրաէներգիայով ապահովելու գործում, մանավանդ աշնան և ձմռան ժամանակաշրջանում: Խնդիրը բարդանում է նաև նրանով, որ երկրաշարժից ավերված քաղաքների ու գյուղերի վերականգնման լայնամասշտաբ աշխատանքը լրացուցիչ էներգածախսումներ է պահանջում»,- նշվում է հանրապետության բնակչությանն ուղղված՝ Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի, ՀՍՄԳ Գերագույն Սովետի նախագահության և Հայկական ՍՍՀ Մինիստրների Սովետի դիմումում:

Եվ սկսվեց տարիներ տևող էներգետիկ ճգնաժամը, որի ծանրությունը զգացինք բոլորս:

1989 թվականի հրապարակումներում երևում է այդ տարիների վիճակը, որում կար ընդգծված անորոշություն կառավարման բնագավառում...

«Երկրի բուհերին այսօր պետք են նախաձեռնություններ առանց հրահանգների» հրապարակման առիթը միութենական «ՄՐԱՅԴԱ» թերթում լույս տեսած ՍՄՄ Ժողովրդական կրթության պետական կոմիտեի նախագահ Գ. Ա. Յագոդինի հոդվածն է, որում արծարծված են այն հարցերը, որոնք կանգնած են բարձրագույն դպրոցի առջև: Հոդվածի վերնագիրն, ինքնին, շատ խոսում է:

Փետրվարի 25-ին ատոմակայանի առաջին էներգաբլոկի

կանգնեցման մասին տեղեկատվության մեջ նշվում է 2-րդ բլոկի կանգնեցման ժամկետը՝ մարտի 18:

Կառավարական ամառանոցները բուժիմնարկներին տալու մասին ՀԿԿ կենտկոմի և Հայկական ՍՍՀ Մինիստրների Խորհրդի համատեղ որոշումը տպագրվել է թերթում այնքանով, որքանով առնչության եզրեր ունի մեր մասնագիտության հետ:

Կուրսի քաղաքատիրակների վերացման մասին ՍՄՄԺ ժողկրթության կոմիտեի նախագահի հեռուստատեսային ելույթը եկավ վերացնելու մի երևույթ, որը տարիներ շարունակ կազմում էր ուսանողների դաստիարակության ուղղությամբ տարվող աշխատանքի ողնաշարը: Պատճառը ուսանողների ինքնավարությանը և ինքնուրույնությանը տրվող գնահատականներն էին:


Հիմա հաճախակի կարելի է լսել ուսանողական ինքնավարության մասին, որն ընդամենը մեկ տարի առաջ կիրառվեց երկրի բուհերում: Ստեղծվեցին ուսանողական դեկանատներ, ընտրվեցին դրա անդամներն ու դեկանները, ուն վստահված էր ինքնուրույն լուծել ուսանողական կյանքի շատ ու շատ հարցեր: Ստահագունն ինքնին առաջադեմ էր և դեմոկրատական: Այս որոշմանն առաջինն արծագանքողներից մեկը բժշկական ինստիտուտն էր:

«Բանավիճում են քննաձևի շուրջ» վերնագրի տակ բուռն քննարկում է գնում հրապարակային քննությունների կիրառման մասին: Բանավեճին մասնակցող ավելի քան 12 դասախոսներ և ուսանողներ հակադիր կարծիք են արտահայտում հրապարակային քննության մասին:

Կուսակցական կոմիտեում կայացած քննարկումը՝ թերթի ունեցած դերի, ուսանողության դաստիարակության գործում նրա կարևորության մասին, վեր հանեց այն բոլոր դժվարությունները, որոնք ծառայեցին էին թերթի առջև: Թեև խմբագրության գործունեությանը տրվեց բարձր գնահատական, սակայն թերթի խմբագիրը ներկայացրեց այն ծանր վիճակը, որն առկա է տեխնիկական բնագավառում, նշելով, որ «ԱՊԱԳԱ ԲԺՇԿԻ» կենսագրության մեջ աննախադեպ օրեր եղան, երբ ամիսներ շարունակ շաբաթը մեկ լույս տեսնող թերթը ստեղծվում էր առանց ուսանողական կյանքի առկայության, դասադուլների պայմաններում: Քանի որ անպայման տարեկան 40 թողարկում պետք է ունենար «ԱՊԱԳԱ ԲԺՇԿԻ» ստիպված էր լույս տեսնել նույն հաճախականությամբ: Տնտեսական մասի չափազանց անպատասխանատու վերաբերմունքի պատճառով ներկայումս «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում կուտակվել է թերթի 3-4 տպագրված համարներ: Եվ եթե նշենք, որ թերթի յուրաքանչյուր համար տպագրվում էր 2000 օրինակ տպաքանակով, դժվար չի լինի պատկերացնել երկարատև ընդմիջումից հետո միանգամից բերված թերթի մի քանի համարների կուտակման չափը:

Ուսանողության մեջ գեղեցկության և համաչափության առաջին մրցույթը, որը ժամանակի համար նորությունն էր, ինստիտուտում անց է կացրել ֆիզիկական դաստիարակության ամբիոնը մանկաբուժական ֆակուլտետի հետ համատեղ:

Համալսարանի ռեկտորի՝ «Ի գի-



# Տարեգրություն

## Ճաշկարգի «ԱՊԼԳԱ ԲԺՇԿԻՑ»

տություն բոլոր ռեպեթիտորների» հրամանով արգելվում է համալսարանի տարածքում զբաղվել ռեպեթիտորությամբ՝ մասնավոր դասուսուցմամբ բարձր դասարանցի բժշկականի ապագա դիմորդների հետ:

Օրերս ինստիտուտում քննարկման առարկա դարձավ Ադրբեջանական ՍՄՄ-ից գաղթած ազգությամբ հայ 186 ուսանող-փախստականներին առնչվող հարցը: Ըստ կառավարության որոշման՝ ինստիտուտի վարչակազմը նրանցից 35-ին ապահովել է հանրակացարանով, կրթաթոշակ է տրվել բոլորին, կարիքավորները ստացել են օգնություն: Տուրք տալով ժամանակի պահանջին՝ ինստիտուտի ղեկավարությունը քիչ աշխատանք չի տարել այդ ուսանողներին Ադրբեջանի բժշկական ինստիտուտ հետ վերադառնալու հարցում հանդգելու համար, սակայն այդ հորդորին հետևել են միայն 2-ը, մյուսները խնդրել են շարունակել ուսումը Երևանի բժշկական ինստիտուտում:

Այսօր հանրապետությունը բեկունձային փուլում է գտնվում: Հանրապետության և ժողովրդի ապագան կախված է այն բանից, թե մենք ինչպես կանգնենք այդ փուլը: Դեմոկրատացման և հրապարակայնության պայմաններում առանձնապես մեծանում է երիտասարդության, հատկապես նրա սոցիալապես առավել ակտիվ մասի՝ ուսանողության դերը: Հանրապետության առջև ծառայած և երիտասարդությանը հուզող սոցիալտնտեսական և գաղափարաքաղաքական բազմաթիվ խնդիրների մասին անկեղծ, շահագրգիռ և սուր խոսակցություն տեղի ունեցավ ապրիլի 7-ին, Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Ս. Վ. Հարությունյանի՝ ուսանողության ներկայացուցիչների հետ ունեցած հանդիպման ժամանակ...

Ընդամենը 1 ամիս է մնում ամառային քննաշրջանին: Ուսանողները ժամանակից շուտ քննությունները հանձնելուց հետո կհազնեն շինքկատայինների բաժկոնները, և, ըստ նախապես կազմված պլանների, կմեկնեն Ղազախստան, Տյումենի մարզ՝ Կոկչետավ, Յոշկար-Օլա... Սակայն որոշվեց, որ հայ ուսանողները շինարարական ջոկատների կազմում կաշխատեն միայն հանրապետության սահմաններում:

«Սովետ» բառի գործածության փոխարեն տերմինաբանական կոմիտեն որոշեց հայերենում գործածել «խորհուրդ» բառը: «խորհուրդ» բառը 1905 թվականից օգտագործվել է «բանվորների, պատգամավորների խորհուրդ» իմաստով:

1917-ից շրջանառության մեջ մտան նաև խորհրդային, խորհրդայնացում բառերը: 1940-ին տերմինաբանական կոմիտեի որոշմամբ հիշյալ, ինչպես նաև հեղափոխություն, սահմանադրություն, հանրապետություն բառերը հանվեցին գործածությունից և փոխարինվեցին սովետ, պարտիա, ռեվոլյուցիա, կոնստիտուցիա, ռեսպուբլիկա բառերով:

Առաջին անգամ 1989 թվականի ապրիլի 24-ին եղեռնի գր- հերի հիշատակի օրը նշվեց պետականորեն: Գերագույն խոր- հուրդը մամուլում հրապարակեց Հայկական ԽՍՀ օրենքը, որով ապրիլի 24-ը հայտարարվում է հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի օր: Այն հայտարարվեց ոչ աշխատանքային: Առաջին անգամ այդ օրը ժողովրդական հոծ զանգվածի հետ

պաշտոնապես եղեռնի զոհերի հուշահամալիր այցելեցին Հայաստանի ղեկավարները:

1989 թվական, մայիսի 1: Առաջին անգամ չկայացավ ավանդական շքերթը Երևանի Լենինի անվան հրապարակում, այն որոշվեց փոխարինել մասսայական միջոցառումներով:

1989 թվական, մայիսի 9: Չկայացավ նաև ավանդական զինվորական շքերթը՝ նվիրված ֆաշիստական Գերմանիայի դեմ սովետական ժողովրդի տարած հաղթանակին:

Մեր ուսանողները ծառայում են Սովետական բանակում: Ընդհատում են ուսումը, երկու տարի ծառայում և վերադառնում հարազատ կրթօջախ: Տարվա հավաքածուում շատ են մեր այն ուսանողների մասին պատմող նյութերը, ովքեր իրենց լավ էին դրսևորում ծառայության ընթացքում:

Հայաստանի Կոմկուսի Կենտկոմը քննարկեց 1918 թվականի մայիսի 28-ը որպես Հայկական պետականության վերականգնման օր ճանաչելու մասին հարցը՝ հիմք ընդունելով հանրապետության աշխատավորների, գիտական և ուսումնական հաստատությունների, ծեռնարկությունների և կազմակերպությունների, ստեղծագործական միությունների, կոլեկտիվների առաջարկությունները: Եվ, ըստ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրի, մայիսի 28-ը ճանաչվեց որպես Հայկական պետականության վերականգնման օր, իսկ հայկական ազգային խորհրդամիշ (ոչ պետական դրոշ) ճանաչվեց եռագույն դրոշը:

Հունիսյան թողարկման մեջ նշվում է. «Ամիսներ առաջ մայրաքաղաքում մի խումբ երիտասարդների կալանավորումը ալեկոծեց բյուրավոր ուսանողների սրտերը: Կրկին իրենց սև գործն արեցին սադրիչների հերթական հրահրումն ու զրպարտումը: Սկսվեցին ուսանողական հուզումները, և նորից դասադուլների ալիքն իր մեջ առավ Երևանի բժշկական ինստիտուտը:

Տարիներ շարունակ մեր բուհի ուսանողությունը դժգոհություն էր հայտնում դասախոսություններին պարտադիր հաճախումների վերաբերյալ: Մեր բողոքները, պահանջները, խնդրանքները չէին գտնում իրենց հասցեատերերին: Անսպասելի էր ժողովրդական կրթության միմիստրության՝ դասախոսություններին կամավոր մասնակցելու մասին որոշումը: Ուսումնական տարվա սկզբից մինչև օրս՝ մոտ մեկ ամիս իրագործվում է այդ որոշումը: Մեր կուրսի 124 ուսանողներից դասախոսություններին ներկա են լինում 30-ից 35-ը:

Հաճախումների մասին բանավեճի մասնակիցները հակադիր կարծիքներ են արտահայտում: Մի մասը կարծում է, որ դա հի-անալի է, և սա է ուսանողական ինքնավարություն ասածը:

Սեպտեմբերի 4-ին ժամը 15-ին ինստիտուտի բակում տեղի ունեցավ արտոնված միտինգ: Այն հրավիրել էր հայ ուսանողական դաշինք կազմակերպության բժշկական ինստիտուտի մասնաճյուղը: Եկողոզիա, Արցախյան իրադարձություններ, ուսանողական շարժման հետագա անելիքներ, զորակոչիկների դիմումը Գերագույն խորհրդին... Սիւս այն հիմնական հարցերը, որոնց մասին խոսվեց հավաքում:

# Տարեգրություն

## Ճաշկարգաղ «ԱՊԱԳԱ ԲԺՇԿԻՑ»

«Դասադուլն այսօր պայքարի միջոց չէ» հրապարակումը տեղեկացնում է, որ 1988-ի փետրվարի առաջին օրերից սկսած ուսանողությունը պայքարի առաջին շարքերում էր, և իր անկոտրուն ու վստահ կեցվածքով ստիպեց տասնամյակներ շարունակ բևեռված տեսակետ ունեցողներին հաշվի մտել այն փաստի հետ, որ՝ դասադուլը պայքարի միջոց է: Այս առնչությամբ

Ինստիտուտի գիտական խորհուրդը որոշեց՝ ելնելով խորհրդային հասարակության վերակառուցման, դեմոկրատիայի ծավալման, ազգային ինքնագիտակցության խորացման պայմաններից, ինստիտուտի բոլոր ֆակուլտետների առաջին կուրսերում կազմակերպել «Հայ ժողովրդի պատմություն» հատուկ դասընթաց:



Բժշկականի ուսանողները կողմնակից էին միտինգների, սակայն՝ դասերից հետո:

սեպտեմբերի 19-ին բժշկական ինստիտուտի բակում միտինգ էր, քննարկվում էր՝ մասնակցել, թե՞ չմասնակցել համընդհանուր դասադուլին՝ հարցը: Վերջնական որոշումը մեկն էր՝ բժշկական ինստիտուտի ուսանողը չի կարող բաց թողնել դասերն ու պարապմունքները, և որոշվեց բժշկական ինստիտուտում դասերի խափանումներ չթույլատրել:

Հանրապետության տնտեսությանը շնչահեղձության հասցնող շրջափակման պայմաններում ինքնաբերական ընդվզումների գումարվում են պաշտոնական օղակները: Հայաստանի լեռնային կոմունիստական երիտասարդական միության կոմիտեները արդեն ոչ միայն անընդունելի են համարում Սիւրբենական ԼԿԵՄ կենտկոմի որոշումը, այլև հրահանգում են կոմերիտական մամուլում ճիշտ լուսաբանել Հայաստանում և Արցախում ստեղծված դրամատիկ վիճակը:

Ըստ խորհրդային տարիների երևանի տարածքային բաժանման քաղաքի կենտրոնական հատվածը, որտեղ տեղակայված էին բուհերը, կոչվում էր Սյասնիկյան շրջան: Հենց այդ շրջանի կոմերիտության շրջկոմի բյուրոն որոշում կայացրեց հայտարարությամբ դիմել Հայաստանի Կոմերիտմիության Կենտրոնական Կոմիտեին՝ վերջ դնել ազգամիջյան ատելություն հրահրելու սին խաբկանքին և օբյեկտիվ հասարակական կարծիք ստեղծելու համար կոմերիտական մամուլում ճիշտ լուսաբանել Հայաստանում և Արցախում ստեղծված դրամատիկ վիճակը:

Որոշվեց՝ բարձրացված հարցերի կապակցությամբ միութենական կենտկոմի կողմից վճռական քայլեր չձեռնարկելու դեպքում շրջանի քառասունհազարանոց կոմերիտական կազմակերպությունն անվստահություն կհայտնի ՀամԼԿԵՄ կենտկոմի բարոյական և քաղաքական դիրքորոշմանը:

ժամանակի համար սա չլսված, չտեսնված, չափազանց համարձակ թվացող քայլ էր...

Ուսումնական տարվա սկզբին որոշվեց՝ «ԽՄԿԿ պատմություն» առարկան վերանվանել «20-րդ դարի սոցիալքաղաքական պատմություն»:

Առաջին հարվածները սկսեցին ստանալ կոմերիտական կազմակերպությունները, որակվելով որպես վերազգային, որը թեև ունի հնարավորություններ, սակայն անկարող է հայ երիտասարդությանը զինել ազգային գաղափարախոսությամբ, ոգով ու մտածելակերպով: Այսօր կոմերիտմիության անունը լսելիս գրեթե բոլորս հասկանում ենք մի կազմակերպություն, որը հանդիսանում է կոմունիստական կուսակցության կցորդ, որի շարժիչն ու զսպանակը լարվում են հիշյալ կուսակցության կողմից:

«Պահանջվում է մտածելակերպի հեղաբեկում» հոդվածում բուժական ֆակուլտետի կոմերիտական կազմակերպության կոնֆերանսի մասնակիցները նշում են. «Ինստիտուտի կոմերիտական կազմակերպությունը չի արդարացնում իրեն, նա հեղինակազրկվել է, մինչդեռ՝ ինստիտուտում գործող ոչ ֆորմալ կազմակերպությունները մեծ հեղինակություն են վայելում ուսանողության շրջանում: Ուրեմն՝ թող նրանք էլ ղեկավարեն: Յուրաքանչյուրիցս գամծվող ՀամԼԿԵՄ (ամիսը երկու կուպեկ) անդամավճարները առաջարկում ենք փոխանցել որևէ բարեգործական ֆոնդի»: Հաջորդ տարիներին աղջիկների՝ պահածոների գործարան մեկնելը համարում ենք անհիմաստ, քանի որ, ինչպես ցույց է տալիս տարիների փորձը, եթե բերքի մատակարարումը լինի ժամանակին, ապա տեղի աշխատուժը կարող է գործը կատարել առանց կողմնակի միջամտության: Իսկ տղաների շինջոկատ մեկնելու պրակտիկայից՝ աղետի գոտին վերականգնելուց հետո պետք է հրաժարվել, մենք ապագա բժիշկներ ենք, և մասնագիտական հմտությունների ձեռքբերման վրա պետք է ծախսենք այդ ժամանակը»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանրապետական մամուլը չէր կարող իրականացնել Արցախի և Հայկական հարցի մասին ազատ տեղեկատվություն, օգտվելով բազմատպաքանակ թերթերի համդեպ գրաքննության հարաբերական անուշադրությունից՝ «ԱՊԱԳԱ ԲԺՇԿԻՑ», դուրս գալով իր ընթերցողական լսարանի սահմաններից, ռուսերեն լեզվով մեծածավալ 14 էջանոց հատուկ թողարկումներ է պատրաստում, դրանք հասցնելով խորհրդային Սիւրբենյան բոլոր հանրապետությունների բժշկական բուհերին, աշխատելով դրանով ճեղքել լռության այն բլուկադան, որ այդ օրերին առկա էր մեզ համար կենսական հարցերի առնչությամբ: Ինստիտուտի պատմության ստեղծման, եղած փաստավա՝ վերագրական նյութերի պահպանման, առողջապահության բնագավառի աշխատողներին, ուսանողներին, բոլոր ցանկացողներին ինստիտուտի պատմությանը ծանոթացնելու նպատակով ստեղծվում է ինստիտուտի պատմության թանգարան:

Ըստ Հայաստանի առողջապահության մինիստրության հրամանի ինստիտուտի բարձր կուրսի ուսանողները հունիս-օգոստոս ամիսներին պետք է աշխատեին ուսանողական շինարարական ջոկատներում՝ երկրաշ-

# Տարեգրություն

## Ճաշկարգ «ԱՊՐԵԼ ԲԺՇԿԻՑ»

արժից տուժած շրջաններում և պահածոների գործարաններում: Ինստիտուտի ռեկտորատը որոշել է ամառային արտադրական պրակտիկային չմասնակցելու և շինջուկատներում աշխատանքից խուսափելու համար նոյեմբերի 1-ից մինչև պրակտիկայի ծրագրի կատարումը (ծնեռային արձակուրդների ընթացքում) զրկել կրթաթոշակից... (40 ուսանողի անուն): Արտադրական պրակտիկայի ստուգարքից «լավ» և «բավարար» ստանալու համար նոյեմբերի 1-ից գերազանցության կրթաթոշակից զրկել... (12 ուսանողի անուն): Արտադրական պրակտիկայի ստուգարքից «բավարար» ստանալու համար նոյեմբերի 1-ից հարվածային կրթաթոշակից զրկել... (6 ուսանողի անուն): Արտադրական պրակտիկայից «բավարար» գնահատական ստանալու համար նոյեմբերի 1-ից կրթաթոշակից զրկել... (5 ուսանողի անուն):

### 1990 թվական

Տարիներ առաջ ուսանողները ստանձնել էին N1 տուն ինտերնատ-ծերանոցի խնամակալությունը: Փորձում էին մխիթարել հարազատների կողմից լքված ծերերին, շրջապատել



Աղետից տուժած լեհինականցի երեխաների համար կազմակերպվող հերթական միջոցառումը Ամանորյա տոնի անցկացումն էր երևանում, որից անմիջապես հետո էլ արված է լուսանկարը:

նրանց հոգատարությամբ, մի փոքր ջերմություն հաղորդել նրանց գորշ ու միապաղաղ առօրյային: Սակայն աշխատանքներն ընդհատվեցին դեկտեմբերյան արհավիրքներից հետո և, ինչու չասել, մոռացության մատնվեցին ծերերը և ծերանոցները: Եթե մեր ուսանողները հանդես են եկել գովելի ու միանգամայն մարդասիրական նախաձեռնությամբ, խոսքը Լեհինականի N1 դպրոցի՝ երկրաշարժի հետևանքով 12 որբացած երեխաների շեֆության մասին է, ապա սա չի նշանակում, որ պետք է աչքաթող անեն ոչ պակաս մարդասիրական նախորդ մտախղացումը:

Արհկոմիտեները նոր մենաշնորհի են արժանացել՝ արտասահմանյան արտադրության իրեր, ապրանքներ ու հագուստ, սպիտակեղեն, ճոքավոր կանացի կոշիկներ, կոստյումներ, դիպլոմատներ, բաճկոններ են վաճառում, որպես օգնություն անվճար՝ կանացի ու տղամարդու գույպաներ բաժանում...  
Իսկ հանրապետությունը կռվի մեջ է, մեկնող ուսանողներին ջրամանները չեն բավականեցնում, տաք հագուստ

չունեն, արյուն մակարդող դեղամիջոցներ, մեկանգամյա ներարկիչներ և այլն:

Ավագների հոգար լուրն է. «Ասում են՝ գորգեր են տալու»: Լուրը հայտնողի գրուցակիցն անհամբերությամբ ընդհատում է՝ «Տեսնես հին գնդ՞վ են տալու, թե՞ թանկացած»: Մենք՝ ավագներս, հաճախ ենք փնտվում մեր երիտասարդներին և հորդորում՝ օրինակ վերցնել մեզանից: Երանի գոնե այս անգամ որպես օրինակ չձառայենք, և նրանք չնկատեն թեկուզև պատճառաբանված մեր ընչաքաղցությունը:

Մեր հանրապետությունում անհրաժեշտաբար ձևավորվեցին մի շարք նոր երիտասարդական խմբեր ու կազմակերպություններ՝ Հայ ուսանողական դաշինք, Հայ երիտասարդական դաշնակցություն, Հայ ազգային երիտասարդական միություն, Հայ ուսանողության նախաձեռնող խումբ, որոնք նպատակ ունեն լրացնել սոցիալաբարձարական այն բացը, որ կա մեր ազգային-հասարակական կյանքում:

Ինստիտուտի կոմերիտական կազմակերպության հաշվետու ընտրական կոնֆերանսը, որն ընդհատվել էր նոյեմբերի 20-ին, շարունակվեց նոյեմբերի 23-ին: Կոնֆերանսը պետք է սկսվեր 15:30-ին, բայց սկսվեց 17:00-ին: Կոնֆերանսը շարունակեցին 134 հոգի՝ պատգամավորների կեսից ավելին: Մնացածը՝ կամ



Երկաթյա կարգուկանոնին, վերկից եկող դեկավարությանն ընտելացած ուսանողությունը սկսում էր ինքնակառավարման քայլեր անել:

դժգոհ լինելով լքել էին դահլիճը, կամ անձն հաստատող փաստաթուղթ չունենալով «զրկվել էին» դահլիճ մտնելու իրավունքից: Կոնֆերանսը նախասահմանված «կարգ ու կանոնով» չանցավ, բաց քվեարկությունը փոխարինեցին փակով, երկու անգամ ընտրեցին կոնֆերանսի նախագահ:

Բժշկականի ուսանողները անմասն չեն այս շարժմանը, նրանք ևս ընդգրկված են բազմաթիվ կազմակերպություններում և պայքարում են մեր ժողովրդի իղձերի իրականացման Հայաստանն ազատ տնտեսական գոտի դարձնելու, երկրաշարժի հետևանքները վերացնելու, դեմոկրատացումն ընդլայնելու համար:

Երկրաշարժի օրերին աշխարհի տարբեր անկյուններից օգնության ձեռքեր մեկնվեցին մեզ: Օգնության եկան ամենից առաջ բժիշկները՝ արտասահմանից, Միության տարբեր ծայրե-

# Տարեգրություն

## Ճաղկաքաղ «ԱՊԼԳԱ ԲԺՇԿԻՑ»

րից: Յուրօրինակ օգնություն կազմակերպեց Բելգիայի հայկական գաղութը, որը Մայր Հայաստանում բուժսպասարկման մակարդակը բարձրացնելու և մեր հոգևոր ու բարոյական կապերն ամրապնդելու նպատակով որոշեց պարբերաբար Բելգիա հրավիրել հայ բժիշկներին: Առաջինը նրանց հրավերով 15 օր Շվեյցարիայում, ապա՝ 6 ամիս Բելգիայում ուսումնասիրությունների նպատակով գտնվում էին ինստիտուտի մասնական վիրաբուժության ամբիոնի պրոֆեսորի պաշտոնակատար, Երևանի երրորդ մասնական հիվանդանոցի վիրաբույժ-ուրուլոգ Արա Բաբլոյանը, նույն հիվանդանոցից՝ մասնաբույժ Անահիտ Եղիազարյանը և հիվանդապահուհի Սվետլանա Դանիելյանը:

Արդեն երկու տարի է, ինչ ինստիտուտի նոր մասնաշենքի երկրորդ հարկում գործում է կոոպերատիվ ճաշարան: Ծիշտ է՝ այն չի մտնում ինստիտուտի իրավասության տակ, բայց նախաձեռնությունը խրախուսելի է, քանի որ ճաշարանից օգտվում են շատերը և հիմնականում գոհ են (չհաշված զները): Այդ մասին ուսանողների շրջանում կատարած հարցումների պատասխանները 3 կարգի են՝ «թանկ ու անմատչելի», «ուն ձեռնտու է՝ թող օգտվի» և «շատ հարմար է ու լավ»:

Քանի որ Հայաստանում հայոց լեզուն պետական լեզու է, պահանջ ներկայացվեց բոլոր հիմնարկություններում, կազմակերպություններում, բուհերում ամբողջ գրագրությունը և պաշտոնական խոսակցական լեզուն դարձնել հայերենը: Բժշկականն այս ասպարեզում ևս ինքնամաքրման ճանապարհին է, սակայն դեռևս շարունակվում են ինստիտուտում շրջել ռուսալեզու հրամանները, գրությունները: Օբյեկտիվ համարվող պատճառներից մեկը հայատառ գրամբեքներն է պակասն է: Այսօր փորձում ենք ձերբազատվել անցյալի սխալներից: Դրանցից մեկը բժշկական ինստիտուտի հայկական մանկաբուժական և ստոմատոլոգիական ֆակուլտետների ընդունելության քննություններում տեղ գտած, ոչնչով չպատճառաբանված քննություններն են ռուսաց լեզվից: Առաջարկություններ են արվել հայերենի գիտելիքները խորացնելու նպատակով ֆակուլտետների ռուսական բաժիններում մտցնել հայոց լեզվի ուսուցում: ՀՄՖ-ում (հասարակական մասնագիտությունների ֆակուլտետ) բացվել է հայոց լեզվի բաժին՝ հիմնականում Աղբյուրանցի գաղթած հայ ուսանողների համար: Կարծում էինք, որ ցանկացաողները շատ կլինեն, մասնագետներ իրավիճակից, սակայն հույսերն ի դերն ելան: Անցյալ տարի դասընթացներին մասնակցեց ընդամենը 30, այս տարի՝ 27 հոգի: Այս խնդրի շուրջ պետք է լրջորեն մտածեն հենց իրենք՝ եկածները, եթե իրոք որոշել են մնալ Մայր Հայրենիքում:

Հայ բժիշկների միության հիմնադիր ժողովը նպատակ ունի ստանալ մեր սփյուռքահայ կոլեգաների համագործակցությունը և աջակցությունը՝ հատկապես հայկական գաղթօջախներում աշխատող մեր ինստիտուտի հայ ազգի շրջանավարտներից:

Ուզում են պատմել մեր ինստիտուտի «Մեդիկուս» վոկալ-կամերային համույթի՝ Չեխոսլովակիա կատարած 12 օրերից մեկի՝ դեկտեմբերի 7-ի մասին: Չեխոսլովակիայում այդ օրերին քաղաքական լարված իրավիճակ էր. մոռացության էին մատնված համերգատարահները, ստադիոնները, կինոթատրոնները: Պրագա, Մարիանսկե Լազնե, Պլզեն քաղաքներին հաջորդեց Պրախատիցեն, ուր տեղի էր ունենալու հերթական համերգը: Դաիլիճը լեվի-լեցուն էր,



հանդիսատեսի ճնշող մեծամասնությունը ուսանողությունն էր...

Ազգը վտանգի մեջ է: Մեր ուսանող այս տղաները առաջիններից էին, որ ոտքի ելան: Պատրաստ սպասում էին: Ու եկավ նաև նրանց հերթը: Դուկաս Ուլիխանյանը այսօր Արծվաշենում է, Հարություն Առուստամյանը՝ Իջևանում, Գրիգոր Այվազյանին ու Մուրադ Մուրոյանին գուցե այսօր կան վաղը կանչեն...

Ինստիտուտում ձմեռային արձակուրդներ են: Անցյալում այս օրերին ուսանողությունը մտածում էր՝ որտեղ անցկացնել դրանք: Դիմակահանդես կազմակերպելու փոխարեն այսօր կազմվում են ջոկատներ, որոնք ուղեգրերով ոչ թե կզման Հայաստանի տեսարժան վայրերում հանգստանալու, այլ՝ սահմաններձ շրջաններ՝ մարտական գործողությունների գոտում այդքան անհրաժեշտ բուժակների խիստ պակասը լրացնելու: Անատոմիկումի 1-ին հարկում գործում է բուժական ծառայության շտաբը, որը հավաքագրում է բոլոր այն կամավորներին, ովքեր կարող են առաջին օգնություն ցույց տալ վիրավորներին:

Ազատ հաճախման արդյունքը չափազանց մտահոգիչ եղավ, քանի որ բոլոր դեկանների հետ անցկացված հարցազրույցում նրանք նշեցին և՛ «անբավարարների», և՛ չներկայացածների մեծ թիվը, ուսման որակի չափազանց ցածր տոկոսը:

Գթարտության օրերնքով վերջերս որոշվեց ստանձնել երկրաշարժից աղետոյալ Կիրովականի N 7, 8, 9 դպրոցների շեֆությունը: Այս մարդասիրական և գովելի նախաձեռնության նպատակը դպրոցականներին բարոյական նեցուկ լինելն ու ընկճվածությունից դուրս բերելն է: Օգնությանը կմասնակցեն բոլոր ամբիոնները, թեև օգնության կարիք ունեն նաև հենց իրենք: Անդրանիկ հանդիպումը պետք է կայանար հունվարի 18-ին: Բենգին չլինելու պատճառով հնարավորություն չունեցանք մեկնել Կիրովական:

Ինստիտուտն ազգային ոգով վերակառուցելու գործում մայրենի լեզվի դերի բարձրացման ուղղությամբ ընդունվեց կարևոր որոշում՝ հայոց լեզվի դասավանդումը բժշկական համալսարանում: Ըստ վերևից եկած հրամանի՝ 4 կիսամյակ տևողությամբ և քննությամբ ավարտվող «հայոց լեզու» առարկան ենթադրում էր ամբիոնի ստեղծում, որը և տեղի ունեցավ:

Ուսանողների համամիութենական համաժողովից ամիսներ են անցել:

# Տարեգրություն

## Ճաշկարգաղ «ԱՊԱԳԱ ԲԺՇԿԻՑ»

Համաժողովի մասին մեր հրապարակումը անընդհատ հետաձգվում էր, քանի որ չափազանց զբաղված էր համաժողովի պատգամավոր, ինստիտուտի նախաձեռնող խմբի անդամ Մուրադ Մուրադյանը, ով քննություններ հանձնելու հետ միաժամանակ հերթապահում էր նախաձեռնող խմբի առաջարկությամբ ստեղծված բուժօգնության շտաբում, որտեղ և կայացավ մեր ուշացած հարցազրույցը...

Առաջին անգամ պետականորեն նշվեց զորավար Անդրանիկի ծննդյան տարեդարձը: Նրա 125-ամյակին նվիրված հանդիսավոր նիստին մասնակցում էր կառավարական ողջ կազմը:

Բժշկական ինստիտուտի գիտական կոմունիզմի ամբիոնը վերափոխվել է: Այսուհետև գիտական կոմունիզմի փոխարեն ուսանողները կանցնեն պոլիտոլոգիա: Պատճառը հասարակական կյանքում կատարվող փոփոխություններն են:

Ամփոփեն հպատակությունից և քաղաքական սնապաշտությունից ժողովրդական մասսաները փորձում են անցնել ինքնուրույն մտածողության և գործունեության: Կայացավ «Գթություն» բարեգործական կազմակերպության օրգան, «Լուսավորիչ» թերթի խմբագիր, Երևանի պետական համալսարանի հայոց լեզվի ամբիոնի դասախոս պրոֆ. Ռաֆայել Իշխանյանի հանդիպումն ուսանողության հետ: Հանդիպմանը մասնակցում էին նախապարաստական բաժանմունքի ունկնդիրներ, սիյուռքահայ ուսանողներ, նախաձեռնող խմբի անդամներ, դասախոսներ:

Ամեն տարի չէ, որ 5-րդ կուրսեցիներին բախտ է վիճակվում սուբօրդինատուրայում սովորել, այլ՝ մի քանի տարին մեկ, երբ հանրապետությունում որոշակի մասնագետների պակաս է զգացվում: Պետք է ասել, որ ուսանողները միշտ էլ ներքին տազնապով են սպասում նման որոշմանը, քանի որ սուբօրդինատուրայում սովորելով նրանք հմտանում են նեղ մասնագիտության մեջ: Ուսանողների անհանգստությունն այս առումով պատճառաբանված է նաև այն հանգամանքով, որ մասնագիտության ընտրությունը կախված չէ միայն իրենց ցանկություններից ու հակումներից, այլ նաև նրանից, թե հանրապետությունում կոնկրետ ի՞նչ մասնագիտությունների պահանջ կա:

Ինչպես յուրաքանչյուր մանուկ ծննդից հետո մկրտվում է, այնպես էլ հայոց լեզվի դասաժամ-մանուկը կարիք ունի մկրտման, և այսօր մենք հրավիրել ենք հայ արդի գրականության նահապետին՝ Համո Սահյանին, մասնակցելու այս բաց դասին, ավագի իր ողջերթի խոսքով բարին մաղթելու բժշկական ինստիտուտում հայոց լեզվի դասաժամերի ստեղծման առիթով: Հագիվ էր մայրենի լեզվի մասին որոշման նախագիծը իջել համաժողովրդական քննարկման, երբ մեր կրթօջախում այն վերածվեց կոնկրետ գործի: Բաց դասին մասնակցում էին հյուրեր՝ երաժիշտ-կատարողներ, անվանի կոմպոզիտոր Տիգրան Մանսուրյանը, դասախոսներ, ուսանողներ:

Ի դեպ՝ Տիգրան Մանսուրյանը իր նախաձեռնությամբ միջոցառմանը մասնակցելու էր հրավիրել նաև դուդուկահարների, ում էլույթը այն պահին, երբ մեծարում էին Համո Սահյանին, մի տեսակ խոժոռեց մեծանուն բանաստեղծի դիմախաղը: Ի պատասխան Համո Սահյանի՝ իրեն ուղղված հանդիմանական հայացքի, Տիգ-

րան Մանսուրյանը մեծ ակնածանքով խոնարհվեց և համբուրեց Համո Սահյանի ձեռքը:

Ափսոսում են, որ լուսանկարիչը չզգաց և չորսաց պահը, այլապես այսօր կունենայինք Մարտիրոս Սարյանի ձեռքը համբուրող Պարույր Սևակի լուսանկարի նման անմահ մի կադր՝ միմյանց նկատմամբ երկու մեծերի վերաբերմունքը ներկայացնող:

Լույս է տեսել «Գուգարք թերթի» 4-րդ թողարկումը: Քանի որ աղետի գոտում հնարավորություններ չկան թերթ հրատարակելու, դրվատելի նախաձեռնությամբ հանդես եկավ բժշկական ինստիտուտի «ԱՊԱԳԱ ԲԺՇԿ» շաբաթաթերթի խմբագիրը, ով պատրաստել է թերթի այս համարը, երախտագիտության հղու՝ մով նշվում է «Գուգարքի» խմբագրականում:

Փորձը ցույց է տալիս, որ անգամ լավագույն շրջանավարտներից շատերը պրակտիկ աշխատանքի անցնելիս կաշկանդվում են, չեն կարողանում դրսևորել իրենց, կիրառել ինստիտուտում ստացած գիտելիքները: Անկեղծ ասած, ուսումնառության տարիների մենք հիմնականում տեսական գիտելիքներ ենք ստանում և, որքան էլ զարմանալի է, դրանք չենք կիրառում գործնականում: Մեզ, չգիտես ինչու, չեն վստահում, նույնիսկ պրակտիկաների ընթացքում ինքնուրույնություն չեն տալիս: Իսկ բժիշկն առաջին հերթին իմացածը գործնականում կիրառելու հնարավորություն պետք է ունենա, այլապես այդ նույն բանն է, թե առանց ջրի մարդուն լողալ սովորեցնեն և մի օր էլ մրցույթի հանեն:

Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ավարտվում են ընդունելության քննությունները: Դիմորդները սպասում են ցուցակներին: Բայց ահա երևանի պետական բժշկական ինստիտուտում այլ իրարանցում է տիրում: Ընդունելության քննություններն այստեղ չեն ավարտվել: «Քիմիա» առարկայից «անբավարար» ստացած բազմաթիվ դիմորդների ծնողների բարձրացրած բողոքի հուժկու ալիքը հասել է Գերագույն Խորհրդի նստաշրջան, և քիմիայից «անբավարար» ստացած դիմորդները պատրաստվում են կրկնակի քննության:

1990 թվական, հոկտեմբեր: Նշանակալից եղավ կոմերիտական կազմակերպության կոնֆերանսը, ավելի ճիշտ՝ պատմական ինստիտուտի կոմերիտական կազմակերպությունը ցրվեց, նրա ղեկավար օրգանը՝ ԼԿԵՄ կոմիտեն հայտարարեց իր ինքնալուծարման մասին՝ վերանվանվելով ասպագա բժիշկների երիտասարդական միություն:

Հանրապետությունում գործածության մեջ է դրվում հնգօրյա աշխատանքային շաբաթը:

«Առաջարկում է ուսանողը» հողվածում բուժական ֆակուլտետի 5-րդ կուրսի ուսանող Վահան Վարդապետյանը՝ ի՞նչ կարծիք ունես «Դասախոսը՝ ուսանողի աչքերով» ատեստացիայի մասին պատասխանում է.

- Գիտաժողովի վերջին նիստի ժամանակ ես առաջարկեցի վերացնել «Դասախոսը ուսանողի աչքերով» հարցումը, որը թյուր կարծիք է տալիս լավագույն դասախոսի մասին: Ես, օրինակ, բարձր եմ գնահատում դասերը ճիշտ ժամանակին սկսող, գիտելիք տվող, պահանջկոտ, խիստ դասախոսին, մինչդեռ շատ-շատերը միանգամայն հակառակ գնահատման չափանիշ

# Տարեգրություն

## Ճաշկարգաղ «ԱՊԱԳԱ ԲԺՇԿԻՑ»

ունեն: Ցավալին այն է, որ դասախոսերը, ակնկալելով բարձր նիշ, փոխզիջումների են գնում ուսանողների հետ...

Առաջին անգամ իր ողջ պատմության ընթացքում «ԱՊԱԳԱ ԲԺՇԿԻՑ» 1990 թվականն ավարտեց 24-րդ թողարկմամբ (40-ի փոխարեն): Սրա պատճառը ոչ միայն նախկին վերին օղակների իսպառ բացակայությունն էր, այլ տնտեսական այն վիճակը, որը համարյա բացառում էր աշխատելու հնարավորությունները: Վիճակն ավելի վատացավ 1991-95 թվականներին, երբ շրջափակումը, էներգետիկ ճգնաժամը պարալիզել էին ողջ հանրապետությունը: Հերոսական կարելի է համարել «ԱՊԱԳԱ ԲԺՇԿԻՑ» գործունեության հիշյալ տարիները, քանզի լույս չտեսնող հանրապետական թերթերի կողքին թեկուզև սակավաթիվ համարներով լույս տեսնելը անկարագրելի դժվարին աշխատանքի արդյունք էր: Երբ «Խորհրդային Հայաստանը» չէր տպագրվում Հայաստանում թուղթ չլինելու և էներգետիկ ճգնաժամի պատճառով, ի պատիվ «ՏԻԳՐԱՆ ՍԵԾ» հրատարակչության ներկայիս և այն ժամանակվա տնօրեն Վրեժ Մարկոսյանի՝ մեզ համար թուղթ գտնվում էր: Որպես գաղտնիք նշենք, որ այս հարցում հավանաբար չափազանց մեծ նշանակաթյուն ուներ այն հանգամանքը, որ նրա դուստրը սովորում էր մեր ինստիտուտում:

### 1991-1995 թվականներ

Ինստիտուտի գիտական 69-րդ նստաշրջանը տևեց 3 օր... Ամենից ուրախալին այն էր, որ ինստիտուտի պատմության մեջ առաջին անգամ գիտական նստաշրջանը, հատկապես նստաշրջանի լիազումար նիստերն անցկացվում էին մայրենի լեզվով: Ամփոփելով «Ֆիզիոլոգիական ակտիվ միացությունների կառուցվածքն ու ֆունկցիաները» բաժանմունքում կարդացված զեկուցումները, բաժանմունքի նախագահ, ՀՀ ԳԱ թղթակից անդամ պրոֆ. է. Ս. Գաբրիելյանն անդրադարձավ մի քանի նկատառումների: Նախ՝ անհրաժեշտ համարեց, որպեսզի գիտական մասն ինքն ամփոփի այն գիտական առաջարկությունները, որոնք կարող են օգտակար լինել գործնական առողջապահությանը և տեսական բժշկությանը, դրանք ներկայացնելով առողջապահության նախարարությանը, որպեսզի վերջիններս կարողանան ներդրվել՝ հույսը չդնելով հեղինակների վրա: Այնուհետև՝ իրեն վաղուց սպառած նստաշրջանի անցկացման ներկա ձևը անհրաժեշտ է փոխել ավելի նեղ մասնագիտացում պահանջող սիմպոզիալ նիստերով: Հաջորդ ցանկությունը վերաբերվում էր երիտասարդ գիտնականների ոչ միայն բարոյական, այլև նյութական խրախուսմանը:

Մեր բուհում առաջինը համակարգչային ուսուցման է անցել դեղագիտության ամբիոնը: Օրերս կայացած գիտական խորհրդի նիստում ամբիոնի վարիչ պրոֆ. է. Գաբրիելյանը հանգամանորեն շարադրեց այդ համակարգի էությունը:

Դնեպրոպետրովսկում կայացած համամիութենական ուսանողական կոնֆերանսից հաղթանակով վերադարձան ստոմատոլոգիական ֆակուլտետի 5-րդ կուրսի ուսանողներ Զավեն Մուսայելյանը և Հովնան Հակոբյանը, որոնք 4 տասնյակից ավելի մասնակիցների մեջ արժանացել են բավականին բարձր գնահատականի՝ շահելով 1-ին և 2-րդ կարգի մրցանակներ:

Օրերս կայացած բժշկական ինստիտուտի հիմնական գրադարանի կոլեկտիվի ընդհանուր ժողովն արձանագրեց, որ անհրաժեշտ է ուժեղացնել պայքարն ուսումնական դասագրքերի կորուստների դեմ: Անարդյունավետ համարելով կորած դասագրքերի փոխանակումն այլ դասագրքերով ժողովը որոշեց կորած դասագրքերը փոխարինել միայն նույնանուն դասագրքերով, հրաժարվել կորած դասագրքերի փոխարեն դրամական փոխհատուցումից: Որոշվեց նաև, որ գրքեր կորցրած ուսանողները մինչև ուսումնական մաս չներկայացնեն պարտքերի մասին գրադարանից տեղեկանք, չստանան շրջանցիկ թերթիկ և ավարտական վկայական: Ժողովն արձանագրեց նաև նախապատրաստական բաժնի ունկնդիրներին և այլ բուհերի ուսանողներին ինստիտուտի գրադարանից օգտվելն արգելելու փաստը:

Փետրվարի 12-ին Մոսկվայում կայացած Հայաստանի և Ադրբեջանի վետերանների հանդիպմանը մասնակցում էր նաև մեր բուհի դասախոս, բժշկական ծառայության պաշտոնաթող գնդապետ, կենսաբանական գիտությունների թեկնածու Վարդան Խաչոյանը:

Վերջերս իրականություն դարձավ ինստիտուտի ուսանողության և դասախոսների վաղուց փայլալույս երազանքը. Դիլիջանի գողտրիկ անկյուններից մեկում մեզ հատկացվեց առողջարարական կենտրոն՝ ճամբար, որը հիանալի վայր կդառնա դասախոսների և ուսանողների հանգստի պատշաճ կազմակերպման համար:

Բժշկական որակյալ կադրերի պատրաստման գործում անհրաժեշտ է դառնում հետդիպլոմային մասնագիտացումներ անցկացնել 2 տարվա ուսուցման ընթացքում (կլինիկական օրդինատուրա) և ստանալ առաջնային մասնագիտացում (օրինակ՝ ընդհանուր վիրաբուժություն): Հետագա 2-3 տարիների ընթացքում՝ կապված մասնագիտացման ցիկլից, ձեռք կբերվեն առավել նեղ մասնագիտացումներ (սրտաբան, նյարդավիրաբույժ) օգտագործելով նաև միութենական և արտասահմանյան առաջավոր կլինիկաները:

Ինստիտուտում ստեղծվել է Հայկազունների մարմնամարզական ազգային միության սկստության մասնաճյուղը: Վերջերս խմբագրությունը հրավեր ստացավ մասնակցել նրանց և «Մաշտոց» միավորման մասնաճյուղի համատեղ հավաքին: Մասնակիցները՝ իրենց ապաքաղաքական հայտարարած այս կազմակերպության անդամները, մեր այն ուսանողներն են, որոնցով իրավունք ունի հպարտանալ մեր ինստիտուտը՝ Արտյոն Մուրադյան, Դուկաս Ուլիխանյան, Նիկոլայ Հովհաննիսյան (դեղագիտական), Արայիկ Ղարիբյան, Արտակ Զեյնալյան, Սահակ Վարդանյան, Տիգրան Հովսեփյան (բուժական), Հարություն Առուստամյան, Մուրադ Մուրադյան, Միքայել Միքայելյան (մանկաբուժական), Արտյոն Ազատյան (սանհիգիենիկ), Լյուդա Բաղդասարյան, Միքայել Բայաթյան (ստոմատոլոգիական ֆակուլտետներից):

Երևանում դժվար թե գտնվի այլ շենք, որ բժշկական ինստիտուտի նման խեղճված լինի ազդ-գովազդերով, զանա-

# Տարեգրություն

## Ճաշկարգայի «ԱՊԼԳԱ ԲԺՇԿԻՑ»

զան կրպակների առկայությամբ: Մենք ուղղակի պաշարված ենք ոչ միայն կրպակներով, այլև՝ աղտողությամբ, որը չափազանց ընդգծված երևում է լուսանկարային ռեպորտաժից:

Բժշկական ինստիտուտում բարի համբավ են վայելում «Մեդիկուս» և «Մուշ» համույթները: «Մուշը» կազմավորվել է 1989-ին, իսկ 1990-ից գործում է տնտիաշվարկային մեթոդով, ինստիտուտի արհկոմիտեին կից: Հանրապետության շրջաններում, Մոսկվայում ելույթներն ընդունվում էին մեծ սիրով: Երիտասարդական պալատում տրված համերգի ողջ հասույթը փոխանցվեց Մարտունաշենի, Գետաշենի և սահմանամերձ գոտում զոհվածների ընտանիքներին: Այս խմբին եթեր են տրամադրել Մոսկովյան կենտրոնական և հանրապետական հեռուստաալիքները:

«Մեդիկուս» համույթին ծանոթ են Բուլղարիայում, Չեխոսլովակիայում, Սիրիայում, Հայաստանի տարբեր շրջաններում, ԽՍՀՄ շատ քաղաքներում:

1991 թվականի սեպտեմբերի 1-ից Երևանի պետական բժշկական ինստիտուտն անցել է 5-օրյա աշխատանքային շաբաթվա: Աշխատանքային ժամեր են սահմանվում 09:00-16:00՝ 38 րոպե ընդմիջումով՝ պրոֆեսորադասախոսական կազմի համար, մյուսների՝ վարչատնտեսական մասի, ուսումնաօժանդակ մասի, լաբորատորիայի աշխատակիցների համար՝ 09:00-7:50՝ 30 րոպե ընդմիջումով:

Եկավ շատ սպասված և երազած օրը՝ սեպտեմբերի 21-ը: Լսվեց մեր «Այո»-ն: Ողջ խորհրդային Միությունում առաջինը Հայաստանում հաղթեցին դեմոկրատական ուժերը, և Հայաստանի Հանրապետությունը հռչակեց իր անկախությունը:



Այս կուրսը հետագայում ստացավ «հեղեղ» կուրս անունը, որը պատուհասեց ինստիտուտին մինչև իր ավարտելը:

«Տեսնես հիմա ի՞նչ եք անում, մեր ապառնի ուսանողներ» խորագրի հողվածն այն մասին է, որ ընդունելության քննություններին մասնակցած դիմորդները մեր ժողովրդի մինիստրական կաբինետի որոշմամբ աշխարհում առաջինը կկրեն ապառնի ուսանողի անունը: 220 տղաներ ու աղջիկներ 1990-91 ուսումնական տարում հրամանագրվեցին որպես Սխիթար Հերացու ան-

վան Երևանի պետական բժշկական ինստիտուտի 1991-1992 ուստարվա ուսանողներ: Սրանք ընդունելության քննությունների ընթացքում մինչև 25 միավոր հավաքած այն դիմորդներն են, ովքեր գրավել են նրանց տեղը, ովքեր եկող տարի ընդունելության քննությունների ժամանակ ավելի բարձր միջերով դուրս կմնան: Ի դեպ՝ 5 միջյան գնահատման դեպքում այս միավորը համապատասխանում է «անբարարար» գնահատականին:

Ինստիտուտի գիտական խորհուրդը որոշեց անցնել ուսանողների գիտելիքների գնահատման 10 միջային համակարգի...

«Ուրախների և հնարամիտների» բժշկական ինստիտուտի թիմի ելույթներն ու հաղթանակները միակ լուսավոր կետն էին մեր կյանքում. . .

Վերջերս բժշկական ինստիտուտը հանդես եկավ մի նախաձեռնությամբ: Ինստիտուտի 5-րդ կուրսի թվով 10 հինգերորդ կուրսեցիներ առանձնացվեցին մեկ խմբում՝ նպատակ ունենալով նրանց մասնագիտացումն անցկացնել ավելի խորացված և ավելի կատարյալ ձևով:

Նշենք, որ նախաձեռնությունը չունեցավ այն ավարտը, ինչ ակնկալում էին կազմակերպիչները և արտոնյալ խմբի պրակտիկան հետագա տարիներին այլևս չկիրառվեց:

Բուհերում սկսվել են պարապմունքները, իսկ դիմորդների մի մեծ խումբ նախարարների խորհրդի շենքի շքամուտքի մոտ վրանների ճամբար հիմնելով պահանջում է իրենց ցուցակագրել բժշկական ինստիտուտ ընդունվածների ցուցակում: Կոմֆլիկտի «ծայրը» ձգվում է դեռևս անցած տարվանից, երբ հասարակայնության ճշման տակ Նախարարների խորհուրդը պարտադրեց ինստիտուտին նախապատրաստական բաժանմունքի օրինական հրամանագրվածներից բացի հրամանագրել մրցույթով չանցած 200 դիմորդի: Շատ դիմորդներ, ովքեր տեսնելով, որ չեն ընդունվել երկրորդ հայտով արդեն դիմել էին և հրամանագրվել այլ ինստիտուտներում, ասենք՝ անասնաբուժական-անասնաբուժական, և հաջող հանձնել էին քննությունները, անսպասելիորեն հայտարարեցին, որ չեն պատկերացնում իրենց կյանքն առանց մարդասիրական մասնագիտության և ընդունվեցին բժշկական ինստիտուտ: Այսպիսով ավելացավ ևս 100 ուսանող, դրան գումարվեցին ավանդաբար ընդունվող 100 արտասահմանցիները: Առաջին կուրսեցիների թիվը կազմեց 1.000 մարդ: Այսքանն էլ բավական չէր: Բարձրագույն կրթության կոմիտեն առաջարկեց ընդունել ևս 400 դիմորդների՝ վճարովի համակարգով՝ տարեկան 4.000 ռուբլի ուսման վարձով: Ընդհանուր թիվը կազմեց 1.400 ուսանող...

Պրոֆեսորադասախոսական կազմը մոտ էր ըմբոստության:

Մինչև վերջին 1-2 տարին բժշկականը մասնագետներ էր պատրաստում հայազգի սփյուռքահայ աղջիկներից ու տղաներից: Անկախության հռչակումից հետո ինքնիշխան հանրապետության միջազգային կապերը ընդլայնվեցին: Մեզ հետ համագործակցել կամեցողների թիվը բազմապատկվեց: Մեր ինստիտուտում սովորող արտասահմանցի քաղաքացիների թվի համալրում է սպասվում նաև հաջորդ ուսումնական տարում: Եվ քանի որ համագործակցության և փոխհամաձայնության նախապես կնքված պայմանագրերը հուշում են արտասահմանցի ուսանողների թվի մեծ աճ, անհրաժեշտ համարվեց ինստիտու-

# Տարեգրություն

## Ճաշկարգաղ «ԼՊԼԳԼ ԲԺՇԿԻՑ»

տում ստեղծել արտասահմանյան երկրների հետ կապերը կարգավորող հատուկ բաժին, որի ղեկավարումը ստանձնեց տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Սամվել Մայրապետյանը, որի հիմնական անելիքը նաև Հնդկաստանից, Իրանից, Սիրիայից, Նեպալից, Շրի-Լանկայից, Եմենից, Գանայից մեր ինստիտուտում սովորողների հետ աշխատանքների կորդինացումն է:

### 1993 թվական

Բոլոր բարձրագույն ուսումնական հաստատություններում առաջին կիսամյակի ավարտական քննական գրաֆիկում չջեռուցվող ձմեռն իր սրբագրումներն արեց. դադարեցվեցին քննությունները, միայն գարնան առաջին ամսվա սկզբին ուսանողները հանձնեցին քննությունները, բացառությամբ բժշկական ինստիտուտի, ուր քննաշրջանի թեկուզ և պարտադրված դադար չեղավ: Քննասենյակներում տեղադրված նավթավառները, վառարանները քննությունների օրերին ապահովում էին տանելի ջերմաստիճան:

Չմռան խստաշունչ ամիսներին էներգամատակարարման ծայրաստիճան վատթարացումը խիստ բացասաբար անդրադարձավ մայրաքաղաքի բուժսպասարկման հիմնարկների գործունեության վրա, որոնց մեծ մասն ամբողջովին կամ մասամբ գրկվեց էլեկտրասնուցումից: Ստեղծված արտակարգ իրադրությունում բուժսպասարկումը հնարավորինս կազմակերպելու համար առանձնացվեցին որոշ առողջապահական օբյեկտներ, որոնց 24-ժամյա էլեկտրասնուցում տրվեց: Ավագների խրախուսիչ օրինակով գործող կլինիկաներում դասերը չդադարեցրեցին բարձր կուրսեցիները:

Արցախի համալսարանում նոր՝ բժշկական ֆակուլտետ բացելու և տեղում բժիշկներ կրթելու հարցը դարձել է խիստ հրատապ և անհրաժեշտ: Նորաստեղծ ֆակուլտետին աջակցելու, գործնական օգնություն կազմակերպելու և ուսուցումն առավել նպատակաուղղված դարձնելու ուղղությամբ ԼՂՀ մեկնեց հիմնականում 1-ին կուրսում դասավանդվող առարկաների դասախոսներից, ամբիոնի վարիչներից կազմված խումբ:

Հանրապետությունում տիրող վիճակը, սեփական ազգային բանակի ձևավորման պահանջը, Արցախում և սահմանամերձ շրջաններում ընթացող մարտական գործողությունները, բժիշկների՝ վիրավորներին ցույց տրվող բուժօգնության վարձի բացակայությունն անհրաժեշտություն դարձրին մեր ինստիտուտում ռազմաբժշկական ֆակուլտետ բացելը: Ֆակուլտետում սովորող աղջիկներն ու պատանիները կրելու են կուրսանտ անունը, իսկ 5-6-րդ կուրսերում նրանք կլինեն ունկնդիրներ և պարտադիր ծառայության կանցնեն ՀՀ զինված ուժերում:

Ծառահատման գրոտեսքային մի գծանկարի մակագրություն է տպագրված թերթում՝ նայե՛ք այս գծանկարին և ազնվությամբ խոստովանե՛ք. այս ձմեռը ձեզ և՛ս դարձրեց ծառասպան: Եթե ոչ ուրեմն ամեն ինչ կորած չէ:

Ռուբլու արժեզրկման պայմաններում անընդհատ աճում էին կրթաթոշակները: Տարվա սկզբին ուսանողական կրթաթոշակը սահմանվեց 1650 ռուբլի, գերազանցիկներինը՝ 2000, անվանա-

կանը՝ 2300, Մխիթար Հերացու անվանը, որը փոխարինում էր Լենինյան թոշակին՝ 2500 ռուբլի:

Ապրիլ ամսից սահմանվեց 2475 ռուբլի կրթաթոշակ, անվանականները՝ 3300, Մխիթար Հերացու անվանը՝ 3500 ռուբլի:

Ստեղծում է ամառային աշխատանքային քննաշրջանը: Ըստ շինջրկատների շտաբի պետ Ալբերտ Մովսիսյանի՝ քննաշրջանը 2 հասցե ունի՝ Լեհաստան և աղետի գոտի: Ելե՛նա Գորա քաղաքում մեր ուսանողները կմասնակցեն անտառների սամմաքրման, նաև ջրմուղ-կոյաղու վերանորոգման աշխատանքներին:

Օտարերկրացի ուսանողների ներկայությանը նորություն չէ մեր կրթօջախում, սակայն մեր աչքի համար անսովոր հագուկապով, սև գլխաշորերով, մինչև ոտքի ծայրը երկար հագուստներով, դեմքերը ծածկած պարսիկ աղջիկների ներկայությունը, ինչ խոսք, անսովոր էր:

### 1994 թվական

1994-ի հունվար-փետրվար ամիսներին թեժացած մարտերի զոհերից մեկն էլ բուժական ֆակուլտետի 5-րդ կուրսի ուսանող Լաերտ Դավալյանն էր, ով հերոսի մահով ընկավ Օմարի բարձունքում հունվարի 31-ին մղված ծանր մարտերի ժամանակ:

Մեր ինստիտուտը հանրապետության միակ հաստատությունն է, որտեղ պատրաստվում են ռազմական բժիշկներ: Այս ուսումնական տարվանից բուժական և սանհտարաիգիենիկ ֆակուլտետների 4-րդ, նաև՝ 5-րդ կուրսն ավարտած 20 ուսանողներ դարձան համապատասխան ամբիոնի հիմքի վրա ստեղծված ռազմական բժշկության ֆակուլտետի ունկնդիրներ: Կանավորության սկզբունքով ռազմական բժշկի մասնագիտությունն ընտրած ուսանողներից ոմանք վաղուց երազել են այդ մասնագիտության մասին, մյուսներն այն ընտրել են գիտակցաբար՝ ժամանակի պահանջներից ելնելով: Նրանց թվում կա մեկ աղջիկ:

Հովհարային անջատումների հետևանքով քաղաքի ողջ երկնականադը նման է սարդոստայնի: Լարանցումները հնարավորություն են տալիս հովհարային անջատումների ժամանակ գողանալ ուրիշի հոսանքագծից...

Արտասահմանցի ուսանողների հանրակացարանից «Ղարս» կոպերատիվին ապօրինի լուսանցման դեպքի կրկնակի բացահայտման առիթով աշխատանքից հեռացվել է հանրակացարանի պարետը և վարչատնտեսական աշխատանքների գծով պրոռեկտորը: Հարցի կապակցությամբ նյութերն ուղարկվել են Սյասնիկյանի շրջանի ՆԳ բաժին:

Աշխարհի քաղաքակիրթ երկրներում մշտապես մեծ տեղ է հատկացվել հոգեբանական ծառայությանը: Մեզ մոտ այս բնագավառն անտեսված էր: Եվ ահա՛ արդեն մեկ տարի է ինստիտուտի հոգեբուժության և բժշկական հոգեբանության ամբիոնի մտադրացմամբ ու ջանքերով ստեղծվել է հոգեբանական սենյակ, որի ղեկավարն ամբիոնի ասիստենտ ի. Գասպարյանն է: ՌԴ Պետդուման ապրիլի 14-ին միաձայ-

# Տարեգրություն

## Ճարկաբաղ «ԱՊԼԳԱ ԲԺՇԿԻՑ»

նությամբ և պաշտոնապես դատապարտեց 1915-22 թթ. Հայոց ցեղասպանությունը:

Համալսարանի կանոնադրության արդեն մեկ տարի տևող ձևավորման արդյունքում հետախու գիտական խորհուրդ անվանումը փոխվում է: Համալսարանի ղեկավարմամբ, որոշումների ընդունմամբ զբաղվող օղակն այսուհետ կկոչվի խորհուրդ՝ նախկին գիտական խորհրդի փոխարեն:

### 1995 թվական

ՀՀ կառավարության 1995 թվականի մարտի 15-ի թիվ 140 որոշմամբ Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական ինստիտուտը վերակազմավորվել է Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի: Համալսարանի ուսումնական գործընթացը և հետդիպլոմային ուսուցումը լավագույնս կազմակերպելու նպատակով հաստատության հարևանությամբ գտնվող բուժ-հիմնարկների համալիրը՝ Երևանի թիվ 1 կլինիկական հիվանդանոցը, թիվ 1 մանկական կլինիկական հիվանդանոցը, թիվ 2 ծննդատունը, աչքի մանկական կլինիկական Երևանի քաղխորհրդի գործկոմի ենթակայությունից հանձնվել է առողջապահության նախարարության ենթակայությանը: Հիշյալ առողջապահական հիմնարկները և առողջապահության նախարարության հատուկ պոլիկլինիկական, ընտանիքի, ամուսնության և սեքսապաթոլոգիայի հանրապետական կենտրոնը որպես կլինիկական բազաներ հանձնվել են Երևանի պետական բժշկական համալսարանի ենթակայությանը:



Թեև փոխվեց վահանակը, սակայն առ այսօր եզակիներն են մեր կրթօջախը անվանում համալսարան: Բժշկական ինստիտուտի հռչակավոր կանգառը այդպես էլ չդարձավ բժշկական համալսարանի կանգառ:

Շնորհավորում ենք բժշկական համալսարանի ուրախների և հնարամիտների ակումբի (ԿԵԻ) անդամներին՝ Երուսաղեմում կայացած աշխարհի առաջնությունում տարած փայլուն հաղթանակի առիթով:

Ի թիվս Կալիֆորնիայի հայ գաղթօջախի և մի շարք այլ կազմակերպությունների՝ հայապահպանման ուղղությամբ մեծ աշխատանք է տանում ուսանողների և երիտասարդ բժիշկների ամերիկահայ միությունը, որի հերթական նախաձեռնություններից մեկը Ամերիկայի տարբեր բժշկական համալսարանների հայազգի մի խումբ ուսանողների արտադրական պրակտիկայի կազմակերպումն էր Երևանի շտապօգնության հիվանդանոցում:

1989 թվականին բժշկական ինստիտուտի բուժական ֆակուլտետի նախապատրաստական բաժանմունքի ուսանող դարձած հնդիկ ուսանողները դարձան

բժշկական համալսարանի առաջին շրջանավարտները: Այժմ բուժական ֆակուլտետում սովորում են 185 հնդիկներ: Սեպտեմբերի 1-ից վեցօրյա աշխատանքային շաբաթվա անցնելու կապակցությամբ փոփոխվում են աշխատանքային ժամերը:

Պրոֆեսորադասախոսական անձնակազմի համար՝ 7-8-րդ ժամեր ունեցող դասախոսների աշխատանքային ժամերը կկարգավորվեն ամբիոնի վարիչի հայեցողությամբ՝ ըստ դասախոսական ժամը 15:30-ից հետո մուտքը համալսարան կթույլատրվի միայն վկայագրերով, կիրակի օրը մուտքը համալսարան խստիվ արգելվում է:

Համալսարանի համակարգչային ծառայության աշխատակիցների աշխատաժամանակն արդյունավետ օգտագործելու, էլեկտրաէներգիայի խնայողության, համակարգիչների նպատակային օգտագործման նկատառումներից էլնելով համալսարանի ղեկավարությունն արգելում է համակարգիչների խաղային նպատակով օգտագործումը: Սույն հրամանի խախտումներ արձանագրվելու դեպքում տվյալ ստորաբաժանումից կվերցվի համակարգիչը և աշխատակիցները կզրկվեն հավելավճարից:

ՀՀ բարձրագույն կրթության և գիտության նախարարությունից ստացվել է զգուշացում՝ չգերազանցել ուսանողի համար կառավարության կողմից հաստատված էլեկտրաէներգիայի օգտագործման չափերը՝ մեկ տարվա հաշվարկով 100 կվտ/ժամ: Նշված չափաքանակը գերազանցելու դեպքում ուսումնական հաստատությունը պարտավոր է օգտագործված հավելյալ էլեկտրաէներգիայի դիմաց վճարել սեփական արտաբյուջետային միջոցներից:

Հրահանգ-զգուշացում համալսարանի տարածքում արևածաղկի սերմ օգտագործող, շրջապատը աղտոտող ուսանողներին արարքը խստիվ կպատժվի՝ ընդհուպ մինչև համալսարանից հեռացում:

Համալսարանում հաստատվեց նոր պաշտոն՝ բուժական գծով պրոռեկտոր, այն համատեղվում է համալսարանի կլինիկայի տնօրենի պարտականությունների հետ:

Վճարովի համակարգում վեց կիսամյակ միայն «գերազանց» գնահատականներով քննաշրջանն ավարտած ուսանողները 4-րդ կուրսից շարունակում են ուսումն անվճար համակարգում:

Միակողմանի ծնողազուրկ, 1-ին, 2-րդ կարգի հաշմանդամ ծնողներ, նույնպիսի կարգ ունեցող 172 ուսանողներ այսուհետև մասնակիորեն կազատվեն ուսման վարձից:

### 1996 թվական

Լուրը ցնցող էր: Բոլորս ցանկանում էինք հավատալ որ ինչ-որ մեկը կգա ու կասի՝ սխալմունք է, մահացողը Մուրադը չէ: Մի անգամ այդպես եղել էր: Մոսկովյան «Վեստի» ծրագրով արցախյան ազատամարտի ամենաթեժ պահերից մեկին էկրանով մեկ ցույց տվեցին նրա փաստաթուղթը՝ որպես զոհվածի, բայց պարզվեց, որ սխալմունք է: Այս անգամ արդեն ծեմասրահում մեկ պատահեց կախող ձեռքը որքան էլ հապաղեց, միևնույնն է կախեց այն և վրան փակցրեց ֆիդայու փառահեղ բեղերով, երազկոտ աչքերով, զինվորական համազգեստով, ռազմական

# Տարեգրություն

## Ճաշկարգաղ «ԱՊԱԳԱ ԲԺՇԿԻՑ»



գեներ ծեռքին Մուրադի Ակարը՝ նրան ոչ այնքան հարիր սև շրջանակով: Ջոհվել էր բժշկական համալսարանի ուսանող ազատամարտիկներից ամենառոմանտիկը:

Հեռավոր Ավստրալիայում 55 տարեկան հասակում սրտի կաթվածից հանկարծամահ եղավ Երևանի բժշկական համալսարանի հայոց լեզվի և տերմինաբանության ամբիոնի հիմնադիր-վարիչ, «ԱՊԱԳԱ ԲԺՇԿ» թերթի 1967-1983 թթ. խմբագիր Միքայել Հարությունի Դարբինյանը: 1995-ի սկզբին Ավստրալիա տեղափոխված մեր գործընկերոջ ծանոթների, հարազատների պատմածներից երևում է, որ նա այդպես էլ չկարողացավ մերվել օտար միջավայրին:

Ռեկտորատի որոշմամբ թույլատրվում է ուսանողների փոխհամաձայնեցված տեղափոխություն ֆակուլտետից ֆակուլտետ՝ վճարի վերաբերյալ նախնական պայմանավորվածությամբ:

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի քոլեջը հայտարարում է 1996-97 ուստարվա ընդունելություն՝ բուժական գործ (բուժակներ), մանկաբարձություն, դեղագործություն և ատամնատեխնիկա մասնագիտությունների գծով Քոլեջը գերազանցությամբ ավարտածները կարող են ընդունվել համալսարան՝ առանց կենտրոնացված քննություններին մասնակցելու:



1996-1997 ուստարվա սեպտեմբերի 1-ից համալսարանի իգական սեռի ուսանողների՝ ռազմական պատրաստություն առարկայի

կայի՝ պահեստազորի սպաների ծրագրով ուսուցումը դադարեցնել, այն դարձնել ըստ ցանկության և այն էլ նրանց համար, ում առողջական վիճակը համապատասխանում է շարային ծառայության սպայական կազմին ներկայացվող պահանջներին:

Երևանի բժշկական համալսարանի բուժական ֆակուլտետի 3-րդ կուրսում իրենց ուսումնառությունը կշարունակեն Արցախի պետական համալսարանի բժշկական ֆակուլտետի 2-րդ կուրսն ավարտած 25 ուսանողներ: Նրանք կստանան կրթաթոշակ, միաժամանակ կպահպանվի նրանց կրթաթոշակը նաև Արցախի պետական համալսարանում:

Վճարովի հիմունքներով սովորող արտասահմանցի ուսանողներին հետայսու թույլատրվում է հասարակագիտական առարկաների դասերին հաճախել և ատեստավորվել այդ առարկաների գծով ըստ ցանկության:

### 1997 թվական

Երկրորդ կիսամյակում համալսարանն անցնում է հնգօրյա աշխատանքային շաբաթի: Սա չի նշանակում, թե շաբաթ օրը համալսարանը կփակի իր դռները: Այդ օրը կաշխատեն վարչական օղակները, բոլոր ամբիոնները, կիրականացվեն արդեն ճանաչում գտած շաբաթօրյա լրացումները: Շաբաթ օրը կօգտագործվի լրացնելու այն բացը, որը գոյանում է բարձր կուրսերի ուսանողների համար ամբիոնների վարիչների, անվանի մասնագետների կողմից ընդհանուր դասախոսություններ կարդալու անհնարինության հետ կապված: Դատարկ լսարաններ, ազատ ուսանողներ՝ անվանի մասնագետների ցանկության դեպքում խմբերի փոխարեն ողջ կուրսի հետ շփվելու հրաշալի հնարավորություն:

Համաեվրոպական բարձրագույն ուսումնական հաստատությունների «TACIS» ծրագրին Հայաստանը մրցութային ձևով իրավունք է նվաճել մասնակցել 4 թեմայով, որից երկուսը ներկայացրել է Երևանի բժշկական համալսարանը: Այս առիթով մեր պատվիրակները կլինեն Ֆրանսիայի Մարսելի, Բելգիայի Լյուվենի կաթոլիկ, Հունաստանի՝ Սալոնիկի Արիստոտել համալսարաններում:

### 1998 թվական



# Տարեգրություն

## Ճաշկարգաղ «ԱՊԱԳԱ ԲԺՇԿԻՑ»

Մարտի 26-ին «Գրանդ Տոբակոյի» մարզադահլճում հանդիպեցին բասկետբոլի «Ապագա» և «Միասնություն» թիմերը: Գուցեև հանդիպումը ոչնչով նշանակալի չլիներ, եթե թիմերի կազմում ընդգրկված լինեին սովորական մարզիկներ: «Միասնություն» թիմի կազմում էին հանրապետության նախագահ, այդ օրերին դեռևս նախագահի թեկնածու Ռոբերտ Քոչարյանը, ԼՂՅ նախագահ Արկադի Դուկասյանը, ՀՀ ՆԳ և ԱԱ նախարար Սերժ Սարգսյանը, արտգործնախարարի պաշտոնակատար Վարդան Օսկանյանը, մշակույթի և սպորտի փոխնախարար Իշխան Զաքարյանը և պաշտոնատար այլ անձինք: «Ապագա» թիմը համալրված էր Հայաստանի ուսանողական խորհրդի անդամներով: Մեր բուլը ներկայացնում էին Սամվել Ափինյանը, Սեպուհ Մոնջյանը, Միեր Ղազարյանը, թիմի կազմում էին նաև մեր շրջանավարտներ Դուկաս Ուլիխանյանը, հանրապետական ուսանողական խորհրդի նախագահ Արտակ Գրիգորյանը:

*«Դեռևս ուսանողական տարիներից բոլորս էլ համոզված էինք, որ ամենապիտուկ աղջիկները սովորում են բժշկական ինստիտուտում, - համալսարանականների հետ հանդիպման ընթացքում ասաց համալսարան այցելած Հայաստանի պաշտպանու-*



*թյան նախարար Վազգեն Սարգսյանը՝ ի պատասխան դառնալից իրեն հղված ուսանողուհիներից մեկի այն հարցադրմանը, թե չի՞ կարծում արդյոք պարոն նախարարը, որ իր գործունեությունն ավելի բեղուն կլինի, եթե նա ընդունի ծանոթանալու մասին իրենց առաջարկները: Սպարապետը չափազանց բուռն արձագանքեց աղջիկների առաջարկին ավելացնելով՝ «Վերջապես կիրականանա պատանեկան տարիների իմ երազանքը»:*

«Ես ուրախությամբ եմ ուզում մշել այն փաստը, որ նախկին խորհրդային Միության նորանկախ երկրներից միայն Հայաստանում սովորող հնդիկ ուսանողներից դժգոհություններ չենք լսել»,- բժշկական համալսարան կատարած այցելության ժամանակ հայտարարեց Ուկրաինայում, Հայաստանում և Վրաստանում Հնդկաստանի պատվավոր և լիազոր դեսպան Վիդիա Ռաշան Սոնին:

*«Հայ ժողովրդի պատմությունը պահպանել, փրկել է մոռացությունից արժեքներ, որոնք վկայում են ձեր ազգի ոչ միայն հին, այլև մշակութային մեծ հարստության տեր լինելու մասին: Այդ հնարավորությունը ընձեռել է գրավոր խոսքը: Ցավոք, մեր պատմության ճանապարհին չենք ունեցել այդ մեծ հարստությունը: Հրաշ-*

*ալի է, որ համալսարանական թերթ ունեք, որը ձեր համալսարանի պատմությունն է ստեղծում: Մեր ակադեմիայի թերթը փակել ենք դեռևս խորհրդային իշխանության տարիներին: Հիմա տեսնում եմ, որ մեծ սխալ ենք գործել: Մեզ մոտ առաջիկայում ակադեմիայի ռեկտորի ընտրություններ են, եթե ընտրվեն առաջին գործս թերթի վերաբացումը կլինի,- «ԱՊԱԳԱ ԲԺՇԿԻՑ» հյուրասրահում հայտարարեց Դրոզաստանի բժշկական ակադեմիայի ամբիոնի վարիչ Աշիրայի Ջուրդիհովը:*

Հոկտեմբերին համալսարանի կյանքում տեղի ունեցած ամենամշանակալի իրադարձություններից մեկը, եթե ոչ ամենամանակալին՝ մորֆոլոգների առաջին միջազգային կոնգրեսն էր, իրադարձություն, որ արդյունք էր հայ մորֆոլոգների ասոցիացիայի տևական նպատակասլաց ու արդյունավետ աշխատանքի: Ընդամենը 2 տարվա կենսագրություն ունեցող կազմակերպությանն անդամագրվել են շուրջ ութ տասնյակ գիտնականներ: Նիստերի դառնալիցում կոնգրեսն սկսեց իր աշխատանքները և այն ավարտեց 2 օր անց՝ Ամբերդի հանգստյան տանը: Ըստ կոնգրեսի կազմակերպիչների՝ ՀՄԱ նախագահ պրոֆեսոր Ա. Վ. Ազնաուրյանի և փոխնախագահ պրոֆեսոր Գ. Պ. Քյալյանի՝ կոնգրեսը նպատակ ուներ կոտրել այն ստերեոտիպը, որ կամեր հյուրերի մտայնության մեջ, թե մենք դեռևս գտնվում ենք 1992-95 թվականների վիճակում: Ըստ փոխնախագահի՝ կոնգրեսը լուրջ հայտ էր անատումների ասոցիացիաների միջազգային ֆեդերացիային անդամագրվելու ճանապարհին:

*Մինչև ուսանողական խորհրդարանի «Սեդիկուս» թերթի հրատարակումը՝ ստեղծման օրվանից ուսանողական խորհրդարանն իր «ԶԱԳ» նպատակային էջերով հանդես էր գալիս «ԱՊԱԳԱ ԲԺՇԿՈՒՄ»:*

Նախկին ԽՍՀՄ հանրապետությունների հետ բարձրագույն կրթության բնագավառում համագործակցության զարգացման նպատակով 1998 թվականին եվրոպական միության կողմից ընդունվեց մի ծրագիր, որը ստացավ TACIS-TEMPUS անունը: Այն խնդրի ունի դրամաշնորհներ տրամադրել այդ ծրագրի մասնակցող երկրներին՝ շուկայական տնտեսության և դեմոկրատական կառույցների զարգացման համար: Ծրագրում ընդգրկվելու համար անհրաժեշտ է մասնակցել մրցույթին՝ ներակայացնելով վստահելի նախագծեր: Համալսարանի ներկայացրած 2 նախագծերի հաստատման արդյունքում՝ Մարսելի, Լյուվենի Կաթոլիկ և Սալոնիկի համալսարաններ գործուղվեցին մեր համալսարանի մի խումբ աշխատակիցներ, իսկ մի քանի ամիս անց՝ հուլիսին մեր լավագույն ուսանողների մի խումբ՝ Շանթ Գրիգորյան, Էմիլ Ենգիբարյան, Արա Չիչյան, Մարի Միքայելյան, Կարեն Փինաչյան: Վերադարձից հետո բավականին ջերմ էին Հունաստանից մեր համալսարանում սովորող հույն ուսանողների և Հունաստանից վերդարձողների հարաբերությունները:

*Դեկտեմբեր ամսվա համար անսովոր տաք եղանակներ են: 1991-93-ի ահավոր ծնեռների տաժանակրությունից հետո 99-ի տաք ծնեռը, սակայն, մեզ չի ուրախացնում, քանի որ +20 աստիճանը մեզ սարսափեցնում է՝ հիշեցնելով 1988-ի սնանատիպ ծնեռը:*

# Տարեգրություն

## Ճաշկարգաղ «ԱՊԱԳԱ ԲԺՇԿԻՑ»

1999 թվական

«ԱՊԱԳԱ ԲԺՇԿԻՑ» բացում է նոր խորագիր՝ «Արմատացող լեզվական սխալներ», որը չափազանց մեծ արձագանք է գտնում:

Նույն մտահոգությամբ տոգորված լույս է տեսնում հայոց լեզվի ամբիոնի դասախոսների Լարիսա Թորոսյանի և Կարինե Սիբաեյանի ձեռնարկը:

Համալսարանում շրջանառության մեջ են դրվում ուսման վարձաչափեր հաստատելու և համալսարանի վճարովի համակարգում գերազանց առաջադիմությամբ սովորող ուսանողների ուսման վարձի վերաբերյալ շրջաբերականը:

Դիլիջանում բացվում են Երևանի պետական բժշկական համալսարանի «Դիլիջան» առողջարանական կենտրոնը, որը ստեղծվել է մանկական առողջարանի բազայի վրա և 1993 թվականին տրվել բժշկական համալսարանին:

Ռուսական թատրոնի շենքում տեղի ունեցավ «Ին՞չ, որտե՞ղ, ե՞րբ» ԲՐԵՅՆ-ՌԻՆԳ խաղերի Հայաստանի 3-րդ բաց առաջնությունը, որի արդյունքում առաջին տեղը զբաղեցրեց և Հայաստանի չեմպիոնի կոչումը նվաճեց Երևանի պետական բժշկական համալսարանի թիմը:

Համալսարանի գիտական խորհուրդը որոշում է համալսարանի առաջատար մասնագետներից ստեղծել գիտաստեղծագործական խումբ՝ իրականացնելու կոնկրետ թեմաներ, ուղղություններ, ստեղծել նաև հատուկ խումբ, որը կիրականացնի ֆինանսական հաշվարկ և հսկողություն յուրաքանչյուր գիտական մշակման վերաբերյալ:

Երկու երկրների՝ Հայաստանի և Սիրիայի, երկու ժողովուրդների՝ հայերի և արաբների դարավոր բարեկամության և սերտ համագործակցության ոգով էին համակված, և Սիրիայի պաշտոնատարի՝ Հայաստանում սիրիացի միության նախագահ Մուհամեդ Բասամ ալ Դարույշի, համալսարանի ներկայացուցիչների հանդիպման արարողությունը հանդիսավոր պայմաններում՝ արաբ ուսանողների ներկայությամբ, որին մասնակցում էր նաև Հայաստանում Սիրիայի գործերի ժամանակավոր հավատարմատար, դոկտոր Համեդ Հասանը:

«ԱՊԱԳԱ ԲԺՇԿԻՑ» առաջարկում է իր օգնությունը ընթերցողներին՝ տպագրելով մայրաքաղաքի շատ փողոցների հին և նոր անվանումները:

Այսուհետև, միջազգային ուսանողական տոմսերի շնորհիվ Հայաստանի ուսանողները նույնպես արտասահմանյան տարբեր երկրներում կարող են օգտվել ուսանողության համար ամենաբազմազան ծառայություններից, սպասարկումներից, տվյալ երկրներում սահմանված արտոնություններից և գեղջերից՝ տպագրում է «ԱՊԱԳԱ ԲԺՇԿԻՑ»՝ ցիտելով Արմենպրեսի հաղորդագրությունը:

Սկսում է լույս տեսնել «ԱՊԱԳԱ ԲԺՇԿԻՑ» նոր խորագիրը՝ «Դասը վարում են մեծերը»:

«ԱՊԱԳԱ ԲԺՇԿԻՑ» իր էջերը տրամադրում է խնդրով մտահոգ դասախոսներին և ուսանողներին, ովքեր հարցի հստակեցմանը նպաստող առաջարկություններ կունենան, իսկ հարցն այն է, թե քննության ո՞ր ձևն է առավել լիարժեք բացահայտում ու անաչառ գնահատում ուսանողի ձեռք բերած գիտելիքները, ո՞րն է նախընտրելի՝ գրավոր, թե բանավոր ձևը:

Համալսարանում քննական համակարգ է մտնում նաև թեստային քննությունը:

Խորհրդային տարիներին բուհերում չափազանց կարևոր ինստիտուտներից մեկը՝ կուրատոր հասկացությունը վերանում է: Այլևս յուրաքանչյուր խումբ չունի իր կուրատոր-դասուցիչը: Շարունակվում են լավագույն խումբ և լավագույն ուսանող մրցույթները, որոնց արդյունքների ամփոփումը զուգակցվում է լավագույնների մեծարման արարողության հետ:

Վերացել է մարտի 8-ը, շրջանառության մեջ է մտել ապրիլի 7-ը:

Արդեն 3-րդ տարի է, ինչ Երևանի պետական բժշկական համալսարանը մասնակցում է TACIS-TEMPUS եվրոպական ծրագրին, որի արդյունքում մեր ուսանողները հնարավորություն են ստանում ստաժավորման մեկնել Ֆրանսիա, որտեղ ուսանողները ամենաջերմ շփումներ են ունենում նաև եվրոպական տարբեր երկրներից այնտեղ եկածների հետ:

Համաձայն Երևանի պետական բժշկական համալսարանի ռեկտորատի մարտի 15-ի թիվ 30 նիստի որոշման՝ մարտի 1-ից սահմանվում են ուսման անհատական վարձաչափեր՝ անապահով ընտանիքների, ծնողազուրկ, հաշմանդամ երեխաների համար: Բժշկական համալսարանի աշխատակիցների ուսման վաճաչափը սահմանվում է անհատական, հաշվի առնելով տվյալ աշխատակցի աշխատանքային ստաժը, աշխատանքային բարեխղճությունը, մատուցած ծառայությունները և այլ ցուցանիշեր:

Ապրիլի 10-ին ամփոփվեցին գեղեցիկ և բարեկարգ Երևանի համար շաբաթօրյակի արդյունքները: Համալսարանի կոլեկտիվին հատկացվել էր Աբովյան պուրակից մինչև Թումանյան փողոց ընկած հատվածը, ինչպես նաև Գերացու և Կորյունի փողոցների՝ համալսարանին հարող տարածքները: Արդյունքում՝ քաղաքապետարանի զրավոր շնորհակալությունը:

Ապրիլի 14-ին ազգային ժողովում ավարտվեցին «Կրթության մասին» օրինագծի քննարկումները: Նախագծի վերջին տարբերակում տեղ է գտել համալսարանական ինքնավարությունը և ակադեմիկական ազատությունները սահմանող նոր հոդված, համաձայն որի, ի թիվս այլ արտոնությունների՝ բուհին տրվում է սեփական ֆինանսական միջոցները տնօրինելու և ընտրության մեխանիզմով կառավարման մարմիններ ստեղծելու լիազորություն:

Արդեն 5-րդ տարին է՝ հայկական բանակը համալրվում է ռազմաբժշկական ֆակուլտետի շրջանվարտ զինվոր:

# Տարեգրություն

## Ճաշկարգաղ «ԱՊԱԳԱ ԲԺՇԿԻՑ»

րական բժշկներով:

Ի թիվս բժշկականում կայացող բազմաթիվ հանդիպումների՝ ապրիլի 12-ին մեր բուհի հյուրն էր Հայաստանի Հանրապետության նախագահի խորհրդական, ՀՀԿ նախագահ Արամ Սարգսյանը:

«Ուսանողական զարուհ-99» փառատոնի հյուրերի թվում են «TACIS-TEMPUS» կրթական ծրագրի շրջանակներում համալսարանում հյուրընկալված ֆրանսիացիները:

Արցախի պետական համալսարանի բժշկական ֆակուլտետի վճարովի համակարգի 2-րդ և 3-րդ կուրսերի երևանի պետական բժշկական համալսարանի բուժական, մանկաբուժական և ստոմատոլոգիական ֆակուլտետներ տեղափոխված ուսանողների ուսման վարձը սահմանել 850 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, հաշվի առնելով, որ նրանք Արցախում սովորել են նշված գումարով և գտնվում են սոցիալական ծանր պայմաններում:

Կնքվեցին փոխհամաձայնության պայմանագրեր Ֆրանսիայի և Հայաստանի Հանրապետության միջև կնքված մշակութային, գիտական և տեխնիկական համագործակցության շրջանակներում՝ Միջերկրածովյան համալսարանի և Երևանի պետական բժշկական համալսարանի միջև:

Հայաստանի Հանրապետական կուսակցության խորհրդի նախագահ Անդրանիկ Սարգսյանը շնորհակալական հոդու է ուղղել բժշկական համալսարանի ղեկավարին՝ «Միասնություն դաշինքի» կողմից Շիրակի մարզում անվճար բուժսպասարկման բաց դռների օրվա շրջանակներում հանդես բերված աջակցության և օժանդակության համար:

Նախապատրաստվելով անգլերեն լեզվով կրթություն տարու գործընթացին որոշվեց դասախոսական կադրերի բազա ստեղծել համալսարանի գերազանցիկ ուսանողներից՝ այդ նպատակով կարմիր դիպլոմի հավակնորդները մասնագիտական ավարտական քննությունները հանձնելուց առաջ պետք է քննություն հանձնեն որևէ օտար լեզվից: Լրացուցիչ քննությունը օտար լեզվից կազմակերպվում էր օտար լեզուների ամբիոնում՝ Վ. Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների ինստիտուտի ճանաչված մասնագետների միջոցով:

Ի գիտություն ուսանողների՝ հայտարարվեց, որ նախորդ ուսումնական տարվանից ուսման վարձի պարտք ունեցող ուսանողներին ա/թ սեպտեմբերի 1-ից թույլատրվում է մասնակցել ուսումնական դասընթացին, պայմանով՝ որ 20-օրյա ժամկետում մարեն ուսման վարձի պարտքը՝ ապա իրավունք ունենան մասնակցել լիկվիդացիոն քննություններին:

Լույս տեսավ համալսարանի ուսանողական խորհրդարանի «Մեդիկուս» ամսագրի 1-ին համարը:

Բժշկական համալսարանի հյուրը ներքին գործերի նախագահ գեներալ-մայոր Սուրեն Աբրահամյանն է:

2000 թվականին բժշկական համալսարանը պատրաստվում է նշել իր ստեղծման 70 և բժշկական կադրերի պատրաստ-

ման 80 -ամյա հոբելյանները:

«ԱՊԱԳԱ ԲԺՇԿԻՑ» սկսում է այդ հոբելյաններին նվիրված հրապարակումներ՝ առավել արժեվորելով այն դասախոսների հիշողությունները, ովքեր եղել են մեր համալսարանի երախտավորների սաները:

Օրերս համալսարանում հյուր էին ԱՄՆ-ի Ալաբամայի համալսարանի առողջապահության կառավարման դպրոցի պրոֆեսորներ Ս. Հերնանդեսը, Ս. Հեդդոկը և Գրեյտոնի համալսարանի առողջապահության կառավարման դպրոցի դիրեկտոր պրոֆեսոր Մակլեյնը ու նույն դպրոցի բուժքույրական բաժնի ղեկան է. Հավելը:

Հոկտեմբերի 1-ին Հայաստանի ֆիլիարմոնիկ նվագախմբի համերգը նվիրված էր Երևանի պետական բժշկական համալսարանին: Այդ օրը Արամ Խաչատրյան համերգասրահի ունկնդիրները հիմնականում մեր համալսարանականներն էին, ուն համար Լորիս Ճգնավորյանի ղեկավարած նվագախմբի մատուցած երաժշտությունը ընդունվեց չափազանց ջերմությամբ:

Մինչև ուսումնական տարվա վերջը գրկվել են կրթաթոշակից բուժական ֆակուլտետի 6-րդ կուրսի մի խումբ ուսանողներ՝ համալսարանում ծխելու համար:

Բժշկական համալսարանի կուլեկտիվը հանդես եկավ հայտարարությամբ՝ դատապարտել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի շենքում տեղի ունեցած ողբերգական իրադարձությունը՝ հավատալով և պահանջելով, որ ամեն ինչ արվի հանցագործներին և նրանց պատվիրատուներին բացահայտելու և անենախիստ պատժի ենթարկելու համար:

Ավելի քան 1 տարի է, ինչ «Առողջապահության ֆինանսավորման բարելավման» և «Առողջության առաջնային պահպանման, զարգացման» ծրագրի շրջանակներում իրականացվում են մի շարք ծրագրեր, որոնց բաղադրիչներից մեկը առողջության առաջնային պահպանման օղակում ընտանեկան բժշկության համակարգի ներդրումն է՝ ընտանեկան բժշկներ և բուժքույրեր պատրաստելու միջոցով:

«ԱՊԱԳԱ ԲԺՇԿԻՑ» բացում է նոր խորագիր՝ «Դեպի քրիստոնեության ընդունման 1700-ամյակը»:

### 2000 թվական

Հնդկաստանի դեսպանն այցելեց բժշկական համալսարան և արժեվորեց մեր կրթօջախի դերը հայ-հնդկական բարեկամության և համագործակցության ամրապնդման գործում:

2000 թվականը հոբելյանական տարի է: Մ. Հերացու անվան Երևանի պետական բժշկական համալսարանի համար:

Ողջ տարվա ընթացքում թերթը անդրադարձել է ոչ միայն համալսարանի ստեղծման պատմությանը, նրա երախտավորներին, ամբիոնների ստեղծմանը, այլև ակտիվորեն մասնակցել հոբելյանական միջոցառումների նախապատրաստմանը և հոբելյանական բուկլետների ստեղծմանը:

# Տարեգրություն

## Ճաշկարգաղ «ԱՊԱԳԱ ԲԺՇԿԻՑ»

«ԱՊԱԳԱ ԲԺՇԿԻՑ» տեղեկացնում է իր ընթերցողին. այսուհետև «ԱՊԱԳԱ ԲԺՇԿԻՑ» լույս կտեսնի 1000 օրինակ տպաքանակով նախկին 2000-ի փոխարեն:

Դա նշանակում է, որ այն յուրաքանչյուր ցանկացող չի կարող ստանալ: Առաջարկում ենք՝ ընթերցելուց հետո թերթը փոխանցել միմյանց: Եթե մեր վահանակի վրա կարդաք թերթը սպառվել է՝ խնդրում ենք անհարկի չպահանջել ո՛չ թերթ, ո՛չ բացատրություն:

Փետրվարի 23-ին համալսարանի հոբբեյանի առիթով ամերիկյան հանձնախմբի հրավերով Լոս Անջելես մեկնեց համալսարանի ռեկտոր Վ. Պ. Հակոբյանը: Ամերիկացի բժիշկներից կազմված հոբբեյանական հանձնաժողովի հետ քննարկվեցին բազմաթիվ հարցեր՝ հոբբեյանը հավուր պատշաճի կազմակերպելու համար:

Հոբբեյանի օրերին ամերիկացի բժիշկները ուսանողներին մվիրեցին բարեկարգ ու կահավորված ընթերցասրահ:



2000 թվականի հոկտեմբերի 3-ից 7-ը մեծ հանդիսավորությամբ նշվեցին Երևանի պետական բժշկական համալսարանի կազմավորման 70 և Հայաստանում բժշկական բարձրագույն կրթական համակարգի ստեղծման 80-ամյա հոբբեյանները:



Բժշկական համալսարանում բացվեց ուսանողների սիրելի սրճարանը՝ ուսանողների կնքած «Տերևափ» խոսուն անվանմամբ:

Լույս տեսավ «ԱՊԱԳԱ ԲԺՇԿԻՑ» հոբբեյանական գունավոր թողարկումը, որը բարձր գնահատականի արժանացավ ընթերցողների կողմից:

Դարաբաժանին ու նոր հազարամյակին մնացել է 90 օր...

Ավարտեցին իրանցի առաջին շրջանավարտները:

Ինչ որ մարդկանց չար կատակները դարձել էին սովորություն: Ձանգահարում էին այս կամ այն հաստատություն, հիմնարկություն, դպրոց, բուհ և զգուշացնում «ռումբ է տեղադրված ձեր շենքում...»:

Դեկտեմբերի 7-ին բժշկական համալսարանում հնչեց հերթական տագնապը՝ շենքում ռումբ կա, շտապ դուրս եկեք: 3-րդ անգամ նույն ապրումները, չհավատալով հանդերձ, մերքին անհանգստությունը...

Պատկերը՝ ողջ ուսանողությունը, աշխատակիցները Կորյունի փողոցում են, արդյունքում խցանումներ, դեպի մասնաշենքեր շտապող զինվորականներ՝ հետախույզ շներով, տարբեր ծառայությունների մասնագետներ, իրչեջ ու շտապօգնության մեքենաներ...

ժամանակին տարածված մի երևույթ, որը փառք Աստծո երկար չտևեց:

«ԱՊԱԳԱ ԲԺՇԿԻՑ» այն հարցին, թե՛ «ի՞նչ կտանեիր քեզ հետ 21-րդ դար», ընթերցողների մեծամասնությունը պատասխանել էր՝ բարություն, ազնվություն, հաղթելու կամք, ընտանեկան ջերմության պահպանում, սեր...

20-րդ դարն ավարտվեց, ավարտվեց 2 հազարամյակը, առջևում 3-րդ հազարամյակն է՝ 21-րդ դարը...



1958-2001 թվականների տարեգրությունը թերթեց «ԱՊԱԳԱ ԲԺՇԿԻՑ» թերթի խմբագիր, ժուռնալիստների միջազգային միության անդամ ՍԵՂԱ ԽԱՆԱՏՈՒՐԻ ԹՈՐՈՍՅԱՆԸ



Սիրելի ընթերցող,

Մեր թերթի նախորդ համարում հողված էինք տպագրել պրոֆեսոր Էլենի Թեոխարուսի՝ Եվրամիություն-Հայաստան բարեկամություն խմբի ղեկավարի անձնանվեր գործունեության վերաբերյալ: Նրան էր հանձնվել ԵՊԲՀ-ի առաջին աստիճանի շքանշան՝ Հայաստանում, Ղարաբաղում և հոգուտ համայն հայության հրականացրած նրա անգնահատելի ծառայությունների համար:

Էլենի Թեոխարուսի՝ հայանպաստ գործունեությանն ի պատասխան մեր թերթի գլխավոր խմբագիր Ս. Խ. Թորոսյանը բաց նամակ հղեց նրան:

Նամակը լուրջ վերլուծությունն էր մեր՝ Հայաստանի և Կիպրոսի պատմական նմանությունների, թուրքերի հետ հարևան լինելու և դրանից մեծապես տուժելու առնչությամբ:

Բաց նամակում անդրադարձ կար նաև Ֆրանսիայի պառլամենտի անդամ Վալերի Բուլայեյի գործունեության վերաբերյալ:

Հողվածը այնուհետ տեղադրվեց մի քանի սոցիալական կայքերում, մասնավորապես ֆեյսբուքում և ունեցավ լայն արձագանք հատկապես կիպրոսցիների, ինչպես նաև կիպրոսահայերի կողմից:

Հատկապես ջերմ էին Աննա Էվրիպիդուի, Մոխտոդուի Հլեկտրայի, Արիստակես Կատսիամիսի, Անդու Կիրակոսի, Անտոնիս Քսենոֆոնտոսի, Ռիտա Պապադակիսի, Առտեմիս Կալագորուի, Սուլա Խրիստոդուլիդուի և բազմաթիվ սփյուռքահայերի արձագանքները:

## Open Letter to the Head of the Armenian-European Union Eleni Theocharous

Dear Friends

As you may remember, in our previous edition we had several articles concerning the greatest activities of professor Eleni Theocharous, head of the Armenia-European Union friendship group. She was awarded First Degree Medal at YSMU for her invaluable deed done in Armenia, in Karabakh and for the sake of the whole Armenian Nation. Ysmu rector Michael Narimanyan thanked her and all the guests who had already become relatives and for paying great attention to issues in Armenia and Nagorny Karabakh and for promoting the solution to those issues from the authoritative tribune of the Council of Europe.

Also, as a response to those greatest steps realized by Eleni

Theocharous, the head of our editorial Seda Torosyan presented an open letter to Eleni Theocharous. The vast letter included the analysis of the historical background of Armenia and Cyprus, highlighting the similarities and the analogy of the fate of our nations and also the activities realized by the member of the French National Parliament Valerie Boyer.

The article was later posted in some websites namely in Facebook. It had a wide response by numerous people

from different countries and spheres of different nations.. The response was exceptionally warm by Cypriots and Armenian Cypriots, namely by Anna Evripidou, Kevork Paladjan, Moissidou Hlektra, Xristakis Katsiamis, Andu Kyrakou, Antonis Xenophontos, Rita Papadakis, Artemis Kalogorou, Soulla Chritodoulidou.

Հունիսի 1-ը երեխաների  
պաշտպանության միջազգային օրն է

Պաշտպանե՛ք երեխաներին...



